Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

《中医文化关键词2》

（亚美尼亚语版）

**Li Zhaoguo, Wu Qing, Xing Yurui**

# Key Concepts in Traditional Chinese Medicine

**Armenian version, volume 2**

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2022

Լի Ջաոգուո, Ու Ցին, Մին Յուրուլ

# ՉԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

հատոր 2

Թարգմանիչ՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2022

ՀՏԴ 615.89:030
ԳՄԴ 53.59+92.0 «Գեղarm» հանդեսի մատենաշար
Չ 590

Չ 590 **Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան:**
Հատոր 2: Թարգմ. անգլ.՝ Ա. Աքաբեկյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2022, 216 էջ

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական ավանդական բժշկությունը հատկանշող հիմնական հասկացությունների հանրագիտարանային շարքի երկրորդ գիրքը: Այն մի համապարփակ աշխատություն է, որ օգտակար ձեռնարկ կարող է լինել ոչ միայն բժիշկների, առողջապահական խնդիրներով հետաքրքրվողների եւ «Երկնատակի» երկրի ժառանգությունն ուսումնասիրողների համար, այլեւ կարժանանա բոլոր նրանց ուշադրությանը, ովքեր ցանկանում են հարստացնել սեփական գիտելիքները եւ իրենց համար բացահայտել չին ժողովրդի քաղաքակրթական ձեռքբերումների նշանակությունը:

Original Chinese-English Text
© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP)
Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.
All rights reserved.

ՀՏԴ 615.89:030
ԳՄԴ 53.59+92.0

ISBN 978-9939-1-1515-3

© «Ոգի-Նաիրի» /թարգմանության համար, 2022/

## Ընթերցողի համար

Ավանդական չինական բժշկության առանցքային հասկացությունների հանրագիտարանը հրատարակվել է 2018 թվականին, ներառում է 111 հիմնական եզրույթ, որոնք վերաբերում են ավանդական չինական բժշկության հիմնական մտքերին ու մշակույթին և գերազանցապես կապված են էության, ցիի, ինի և յանի տեսության, հինգ տարրերի հետ: Գիրքն անդրադառնում է ներքին դրսևորումներին, միջօրեականներին, պատճառագիտությանը, ախտածնությանը, բուժման սկզբունքներին ու մեթոդներին վերաբերող 110 եզրույթի, որոնք ներկայացված են չինական պարզեցված տառանշաններով, փինյինի Մանդարին արտասանությամբ, յուրաքանչյուր եզրույթի հայերեն թարգմանությամբ, չինարեն և հայերեն սահմանումներով, նախորդ թարգմանությամբ (2000 թվականից առաջ), ներկայիս թարգմանությամբ (2000 թվականից հետո), ստանդարտ թարգմանությամբ, բացատրական նշումներով, ինչպես նաև ավանդական չինական բժշկության դասական գործերի չինարեն և հայերեն մեջբերումներով: Հասկացությունների ցանկը, ուղեցույցն ու օգտագործված գրականության ցանկը ներկայացված են գրքի վերջում: Ակնկալվում է, որ ընթերցողները ոչ միայն հասկանում են եզրույթների չինարեն նշանակությունն ու հայերեն թարգմանությունը, այլև խորապես ընկալում են, թե տվյալ եզրույթն ինչ կարգավիճակ է ունեցել չինարեն եզրույթների թարգմանության ուսումնասիրության 40 տարիների ընթացքում՝ դրանց «նախորդ թարգմանությունը» համեմատելով «ներկայիս թարգմանության» հետ և համադրելով ծանոթագրությունների հետ: Ի լրումն դրա, ընթերցողները կարող են պատկերացում կազմել ներառված եզրույթների հատուկ կիրառությունների մասին՝ հղում

անելով դրանց համապատասխան մեջբերումներին: Այս երկլեզու գիրքը կարող է օգտակար աղբյուր դառնալ ընթերցողների համար, ովքեր ցանկություն ունեն սովորել, հասկանալ և կիրառել ավանդական չինական բժշկության հիմնարար հասկացությունները: Այն կարող է արժեքավոր տեղեկատվական նյութ լինել ընթերցողների համար, ովքեր կցանկանային զբաղվել չինական բժշկական եզրույթների հայերեն թարգմանությամբ, չինական մշակույթի միջազգային հաղորդակցությամբ և չինական ավանդական բժշկության մասին գրական-գիտական հետազոտություններով:

## Երկնքի և մարդու անխզելի կապ թիան րեն հեյի 天人合一

Եզրույթը վերաբերում է ավանդական չինական մտքի մի հասկացության, այն է՝ երկնքի և մարդու, երկնքի ուղու և մարդու ուղու, բնության և մարդու միասնությանը: Դա հին չինական փիլիսոփայության կարևոր դիրքորոշում է, որը զանազան իմաստներ ունի տարբեր պատմական համատեքստերում: Ավանդական չինական բժշկության տեսանկյունից այն հիմնականում նշանակում է, որ մարդն ու բնությունը համանման են, այսինքն՝ տիեզերքում ամեն ինչ, այդ թվում և մարդ արարածները, առաջանում են նախնական ցիից: Ավելին, մարդն ու բնությունը նույնակերպ են, այսինքն՝ տիեզերքում ամեն ինչ, այդ թվում և մարդ արարածներն ունեն նույն կառուցվածքը, կազմված են նախնական ցիից, ինից, յանից ու հինգ տարրերից և այլն: Վերջապես, մարդն ու բնությունը ենթարկվում են նույնանման օրենքների, այսինքն՝ մարդն ու բնությունն առաջնորդվում են ինի ու յանի ավելացման ու նվազման, ինչպես նաև հինգ տարրերի առաջացման, սահմանափակման, արգելակման ու ձևափոխման նույնատիպ սկզբունքներով:

Որպես ավանդական չինական մշակույթի առանցք՝ երկնքի և մարդու միասնության ու անխզելիության գաղափարը սահմանում է տիեզերքը՝ որպես մարդու գոյության ոլորտ. այսպիսով, այն սահմանում է ֆիզիկական հատկությունները, արժեքային կողմնորոշումը, կյանքի ոլորտն ու անդրանցականության չափումները, ինչպես նաև մարդ արարածների ընկալման և մտածողության կերպը: Հետագայում այս գաղափարը փոխառվում և զարգանում է որպես գիտելիքաբանություն, մեթոդաբանություն և արժեքային համակարգ՝ տեսական համակարգի ձևավորման և ավանդական չինական բժշկության կլինիկական պրակտիկայի ուղղորդման նպատակով

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | միավորել բնությունն ու մարդ արարածին: Մարդու մարմինը համապատասխանում է բնությանը |
| [现行译法] *նոր թարգմանություն* | երկնքի ու մարդկության միասնություն. երկնքի ու միջավայրի ամբողջական պատկերացում |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | երկնքի ու մարդու անխզելիություն, անխզելի կապ |

Մեջբերումներ 引例.

Մարդը ենթարկվում է բնության օրենքներին և համապատասխանում արևի ու լուսնի գործող սկզբունքներին *(«Հոգևոր առանցք»):*

Մարդու գոյությունը կախված է երկնքի ցիից և երկրի ցիից: Մարդն ապրում է տարվա չորս եղանակների սկզբունքի համաձայն *(«Պարզ զրույց»):*

Կոնֆուցիականները, մյուս կողմից, հստակ պատկերացում ունեն մարդկային հարաբերությունների ուսումնասիրության երկնային սկզբունքի մասին, ուստի հասկանում են երկրային գործերը՝ հղում անելով երկնային սկզբունքին: Հետևաբար, մարդն ու երկինքը միանում են մեկ ամբողջության մեջ: Մարդիկ կարող են իմաստուն դառնալ կրթության միջոցով՝ երկնային սկզբունքի վրա իշխանություն ձեռք բերելով և մարդկային հարաբերությունների մասին ներքին պատկերացում ունենալով *(Լուսավորություն կոնֆուցիական ուսմունքի միջոցով):*

**Մարմնի և հոգու միասնություն**
**սին շեն յիթի 形神一体**

Այս եզրույթը վերաբերում է հին չինական փիլիսոփայության և ավանդական չինական բժշկության մի կարևոր պնդման, որը վերաբերում է ֆիզիոլոգիայի և հոգեբանության հարաբերությանը: «Մարմինը» ներկայացնում է ֆիզիկական կողմը, այն է՝ զան-ֆու օրգանները և ֆիզիկական ձևը, իսկ «հոգին» վերաբերում է հոգևոր ոլորտին, այն է՝ մտավոր գործունեությանը, որին հատուկ են հինգ հոգիներն ու հինգ զգացմունքները: Հին չինական բժշկության մեջ մարմինն ու հոգին անքակտելի միություն են: Նրանք քայլում են ձեռքձեռքի, ծաղկում կամ քայքայվում միասին: Հոգին ծնվում է ֆիզիկական մարմնից և կախված է դրանից: Տեղավորվելով ֆիզիկական մարմնում՝ հոգին ուժեղ է, եթե մարդը ֆիզիկապես առողջ է, և ուժասպառ է, եթե մարդը ֆիզիկապես թույլ է: Նրանց հարաբերությունները ամփոփված են «Պարզ զրույցի» «Անմեղության հնագույն տեսության քննարկում» բաժնում՝ որպես «մարմնի և հոգու ներդաշնակություն», որը նշանավորեց մարմնի ու հոգու մատերիալիստական հասկացության սահմանումը: Հաստատելով, որ ֆիզիկական մարմինը վճռում է հոգևոր կողմը, այս տեսությունը նաև ընդգծում է մարմնի նկատմամբ հոգու գերիշխանությունը: Համարվում է, որ զան-ֆու օրգանների գործառույթների համակարգումն ու դրանց հարմարեցումն արտաքին բնական ու սոցիալական միջավայրին անբաժանելի են հոգու կարգավորումից:

［曾经译法］ *հին թարգմանություն* մարմնի և հոգու միասնություն

［现行译法］ *նոր թարգմանություն* մարմնակազմության և հոգու միություն
մարմնի և հոգու միություն, մարմնի և հոգու ամբողջություն

［标准译法］ մարմնի և հոգու միություն
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Ահա թե ինչու են կարողանում պահպանել մարմնի ու հոգու ներդաշնակությունն ու միասնությունը՝ վայելելով քաջ առողջություն ու երկար կյանք *(«Պարզ զրույց»):*

Ձևը հոգու հաղորդիչ է, իսկ հոգին՝ ձևի մարմնավորում: Առանց հոգու ձևն անկյանք է, առանց ձևի հոգին կյանքի չի կոչվի *(«Դասակարգված դասականներ»):*

**Միապետ**
**ճունժու ջի գուան 君主之官**

Եզրույթը վերաբերում է կառավարչին, որը ղեկավարում է կայսրությունը: Ավանդական չինական բժշկության մեջ սիրտը կառավարում է մտավոր, ինչպես նաև մարդ արարածների բոլոր օրգանների ու հյուսվածքների ֆիզիոլոգիական գործունեությունը: Առաջին հերթին, սիրտը կառավարում է միտքն ու կարգավորում մտավոր գործունեության զանազան տեսակներ: Ինչպես նշված է «Դասական գրականության» «Հիվանդություններ» բաժնում, «սիրտը, լինելով հինգ զանօրգանների և վեց ֆու-օրգանների միապետ, կառավարում է եթերային հոգին ու մարմնական հոգին, ներառյալ կամքը»: Երկրորդ, ընդհանուր կենսագործունեությունն իրականացնելու համար սիրտը կենսական կարիք ունի համակարգել մարմնի բոլոր օրգանների տարբեր ֆիզիոլոգիական գործառույթները: Սիրտը կատարում է մարդկային ամբողջ կենսագործունեությունը կառավարելու գործառույթ, այդտեղից էլ առաջացել է փոխաբերական եզրույթը, որը կիրառ-

վում է «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնում:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | միապետի պաշտոն, Սիրտ, միապետ-օրգան, օրգանը՝ որպես միապետ |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | միապետի օրգան, միապետ-օրգան, արքա-օրգան, առանցքային օրգան, սիրտ, օրգան, որը նման է միապետին |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | միապետ |

Մեջբերումներ 引例.

Սիրտը կառավարում է ամբողջ մարմնի կենսագործունեությունը, ուստի իր դերով նման է միապետի *(«Բժշկության ներքին կանոնի հիմունքներ»):*

Միապետը պետության կառավարիչն է: Տասներկու զանֆու օրգանների շարքում սիրտը համարվում է միապետ *(Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի ուղղակի մեկնաբանություն):*

**Վարչապետ**
**սյանֆու ժի գուան 相傅之官**

Եզրույթը վերաբերում է վարչապետի կամ հարգարժան նախարարների պաշտոններին, այն է՝ թայֆուն (太傅, բառացի՝ զրոսմայստեր) և շաոֆու (少傅, բառացի՝ կրտսեր վարպետ), որն օգնում է միապետին կառավարել կայսրությունը: Ավանդական չինական բժշկության համաձայն՝ թոքը կառավարում է ցին ու դրա ցրումը, մաքրումը, ինչպես

նաև իջնելու գործընթացը: Բացի այդ, թոքն այնտեղ է, որտեղ հատվում են բոլոր միջօրեականներն ու անոթները: Այս գործառույթներով այն օգնում է սրտին կարգավորել ամբողջ մարմնի ֆունկցիոնալ գործունեությունը նույն կերպ, ինչպես վարչապետն է օգնում միապետին կառավարել կայսրությունը: Հետևաբար, ըստ «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնի, թոքի դերը նման է վարչապետի դերին: Մասնավորապես, թոքը մասնակցում է հետևյալ գործառույթներին. առաջին, կառավարում է ռիթմիկ շնչառությունը, վերահսկում շնչելու ռիթմը և հետևաբար՝ կարգավորում է կրծքի ցիի, սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի առաջացումը: Երկրորդ, ցրման, զտման և վայրէջքի միջոցով թոքը կարգավորում է ցիի վերելքը, վայրէջքը, ելքն ու մուտքը, ներառյալ զան-ֆու օրգանների և միջօրեականների ցին, կրծքային ցին, սննդարար ցին և պաշտպանիչ ցին: Երրորդ, թոքը կառավարում է ցին, ինչի միջոցով նպաստում է արյան շրջանառությանն ու կարգավորում այն՝ օգնելով պահպանել սրտի բնականոն ռիթմն ու կծկումների հաճախականությունը: Չորրորդ, թոքը կառավարում է ցիի ցրումը, զտումն ու վայրընթաց շարժումը, որի միջոցով կարգավորում է մարմնի հեղուկների բաշխումն ու արտազատումը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | թոք |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | պաշտոնյա, որը գործում է որպես վարչապետ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | վարչապետ |

Մեջբերումներ 引例.

Թե՛ թոքը, թե՛ սիրտը կրծքավանդակում են, ստոծանուց վեր: Թոքը տեղակայված է վերև, սրտին՝ միապետին մոտ: Այն նման է վարչապետի պաշտոնին, հետևաբար՝ դրա փոխաբերական անվանումն է *(«Դասական գործեր»):*

Թոքը տեղակայված է մարդու մարմնի վերին մասում, «ծաղկազարդ ամպհովանու պես»: Այն նմանեցնում են վարչապետին, իր մեջ ներառում է եթերային հոգին ու կառավարում է ամբողջ մարմնի ցին *(«Մաքերիա Մեդիկայի գյուղատնտեսության աստծո կանոնի» մեկնաբանություններ):*

**Գեներալ**
**ծիանջուն ժի գուան 将军之官**

Եզրույթը վերաբերում է բանակի բարձրաստիճան պաշտոնյային: Ինչպես նկարագրված է «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնում, այն փոխաբերություն է, որը նշանակում է, որ լյարդի դերը նմանեցնում են գլխավոր ռազմական հրամանատարի դերին, որը, առաջնորդվելով խիզախությամբ և իմաստությամբ, ռազմավարություն է մշակում: Լյարդն անսասան զան-օրգան է, նախընտրում է ազատ գործունեություն և տանել չի կարողանում ճնշումը: Լյարդի ցին հեշտությամբ դառնում է հիպերակտիվ, ինչպես գեներալը, որն արդարամիտ է ու խիզախ: Լյարդը կառավարում է ցիի շրջանառությունը, կարգավորում զգացմունքներն ու մասնակցում մտավոր գործունեությանը: Այն համապատասխանում է շաոյան վերընթաց գարնանային ցիին, հետևաբար կյանքով լի է: Այսպիսով, լյարդը կառավարում է մտավոր գործունեության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ծրագրավորումն ու ռազմավարության մշակումը: Եթե լյար-

դը չի կարողանում կառավարել ծրագրավորումը, ի հայտ են գալիս այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են վատ ռազմավարությունը, արգելակումը, խոսքի ու շարժումների դանդաղկոտությունը, անխոհեմությունը, բարկությունը, դյուրաբորբոքությունը կամ նույնիսկ խելագարությունը:

|  |  |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | լյարդ, գլխավոր օրգան, օրգանը՝ որպես գեներալ |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | օրգան, որ նման է գեներալի (լյարդ) |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | գեներալ |

Մեջբերումներ. 引例.

Խիզախ է ու վճռական, այդտեղից էլ՝ գեներալ անվանումը *(«Պարզ զրույց». «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոն», ծանոթագրությունը՝ Ուան Բին):*

Լյարդը կառավարում է բարկությունը: Այդ պատճառով էլ կոչվում է գեներալ: Երբ մարդիկ զայրացած են, կորցնում են լավ ծրագրելու ունակությունը, ինչը լյարդի խանգարման դրսևորում է: Հետևաբար, հաշվի առնելով այն ախտանիշները, որոնք բխում են գործառույթի խանգարումից, համարվում է, որ լյարդը կառավարում է ռազմավարության մշակումը, երբ պատշաճ կերպով կատարում է իր գործառույթները *(Իմաստության օրինակներ դասական բժշկական աշխատություններում):*

## Ամբարի պատասխանատու ցանլին ժի գուան 仓廪之官

Խոսքն ամբարի պատասխանատու պաշտոնյայի մասին է: Սա փոխաբերություն է, որը ցույց է տալիս փայծաղի ու ստամոքսի՝ սնունդն ու խմիչքը կլանելու և տեղափոխելու, ինչպես նաև դրանք նյութի վերածելու գործառույթները: Մասնավորապես, ստամոքսն ընդունում, պահուստավորում և քայքայում է սնունդը, իսկ փայծաղը կառավարում է դրա տեղափոխումն ու ձևափոխումը: Դրանց գործառույթները սերտորեն կապված են և փոխհամագործակցում են. ստամոքսը քայքայում է կլանված սնունդն ու խմիչքը, ապա փայծաղը տեղափոխում ու վերածում է էական ցիի, արյան ու մարմնի հեղուկների, որոնք ավելի ուշ փոխանցվում են ամբողջ մարմնին՝ հինգ զան-օրգանները, վեց ֆու-օրգանները, վերջույթներն ու ոսկորները սնուցելու համար: Փայծաղն ու ստամոքսն աշխատում են նույն կերպ, ինչպես ամբարն է մարդուն ապահովում սննդով. այստեղից էլ առաջացել է «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնում տեղ գտած փոխաբերական անվանումը: Եթե փայծաղի ու ստամոքսի գործառույթներն ակտիվ են, սննդարար նյութերի աղբյուրներն առատ կլինեն: Հակառակ դեպքում, էական ցիի ու արյան հեղուկների առաջացումը բավարար չի լինի, և կարող են գլուխ բարձրացնել այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են հոգնածությունը, ուժասպառությունը, հևոցը, չխոսելու ցանկությունը, գլխապտույտը, ինչպես նաև հյուծումը:

| | |
|---|---|
| ［曾经译法］<br>*հին թարգմանություն* | ամբարի պատասխանատու (խոսքը վերաբերում է փայծաղին և ստամոքսին): ՓԱՅԾԱՂՆ ՈՒ ՍՏԱՄՈՔՍԸ ՊԱՀԵՍՏ են, ամբարների պատասխանատու պաշտոնյա և շտեմարանի պատասխանատու, շտեմարան-օրգան, փայծաղ և ստամոքս |

［现行译法］ *նոր թարգմանություն* ամբար-օրգան, ամբարի պատասխանատու (փայծաղ և ստամոքս), ամբար-օրգան

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* ամբարի պատասխանատու պաշտոնյա

Մեջբերում 引例.

Փայծաղը կառավարում է սննդի ու խմիչքի տեղափոխումն ու ձևափոխումը, իսկ ստամոքսը ստանում է դրանք: Երկուսն էլ պատասխանատու գործառույթ ունեն, ուստի փայծաղն ու ստամոքսը համարվում են ամբարի պատասխանտուներ *(Դասակարգված դասական գործեր):*

Փայծաղը… ամբարի արմատն է, պահուստավորում է սնունդն ու խմիչքը: Այն վայրն է, որտեղ առաջանում է սննդարար ցին… Փայծաղի շքեղությունն արտացոլվում է շրթունքների վրա: Այն օգնում է ուժեղացնել մկանները *(«Պարզ զրույց»):*

### Աշխատանքի պատասխանատու ցուցյան ժի գուան 作强之官

Եզրույթը վերաբերում է պաշտոնյային, որը պատասխանատու է ծանր աշխատանքի համար (օրինակ, շինարարություն և ձեռքի աշխատանք): Երիկամը պահուստավորում է բնահյութը, ինչպես նաև կառավարում է աճը, զարգացումն ու վերարտադրությունը: Բնահյութը ծնունդ է տալիս ոսկրածուծին, որի գործառույթները երկակի են: Մի կողմից, ոսկրածուծը սնուցում է ոսկորները: Եթե երիկամի բնահյութն առատ է, մարդն ունենում է ուժեղ ոսկորներ և ֆիզիկական ուժ, թեթև, բայց կտրուկ շարժումներ: Մյուս կողմից, ոսկրա-

ծուծն օգնում է սնուցել ուղեղը՝ ոսկրածուծի ծովը: Եթե երիկամի բնահյութն առատ է, ոսկրածուծի ծովը նույնպես առատ կլինի, իսկ նախաստեղծ ոգին կսնուցվի: Այդ դեպքում մարդը կլինի խելացի, սրամիտ ու հմուտ: Հետևաբար, «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնում երիկամը նկարագրվում է որպես «աշխատող, որը պատասխանատու է հմտությունների համար»: Եթե քիչ ուշադրություն դարձնենք առողջության պահպանմանը, օրինակ՝ սեռական կյանքում ժուժկալությանը, կարող է տեղի ունենալ երիկամանյութի հյուծում, որի դեպքում ոսկորներն ու ոսկրածուծը կզրկվեն սնուցումից, ինչն էլ կհանգեցնի այնպիսի ախտանիշների, ինչպիսիք են իրանի ու ծնկների ցավն ու թուլությունը, թույլ վերջույթները, գերհոգնածությունը, գլխապտույտը, ականջներում խշշոցը և նույնիսկ հիշողության կորուստը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | աշխատանքի պատասխանատու, երիկամ |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ճարպկության համար պատասխանատու օրգան, երիկամ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | աշխատանքի համար պատասխանատու պաշտոնյա |

Մեջբերումներ 引例.

Երիկամը վերաբերում է ջրի ոլորտին: Երիկամը պահուստավորում է բնահյութը, որից կազմված է մարդու մարմնի հիմքը: Երբ բնահյութն առատ է, իսկ մարմինը՝ հասուն, մարմնի գործառույթն ու ֆիզիկական առողջությունը հրաշալի պահպանվում են. այստեղից էլ առաջացել է «աշխատանքի պատասխանատու» փոխաբերական անվանումը *(Դասակարգված դասականներ):*

Ըստ հինգ տարրերի տեսության՝ երիկամը վերաբերում է ջրին և համապատասխանում է հյուսիսին: Այն կառավարում է ոսկորները և կոչվում է «աշխատանքի պատասխանատու»: Համարվում է, որ ջուրը ձևափոխում և ծնում է ամեն ինչ, այստեղից էլ առաջացել է «երիկամը պատասխանատու է հմտությունների համար» արտահայտությունը *(«Բժշկության ներքին կանոնի հիմունքներ»):*

**Արդարության պատասխանատու**
**Ժունժեն ջի գուան** 中正之官

Ժունժենը (中正, բառացի՝ մեջտեղ և դեպի աջ) նշանակում է արդարություն և անկողմնակալություն: Լեղապարկը զան-ֆու օրգանների կենտրոնում է, դրա միջօրեականը տեղակայված է կիսով չափ ներս, կիսով չափ դուրս, ինչպես «Յի» վեցագրի երկրորդ կամ հինգերորդ տողի «մեջտեղի» դիրքը, այդ պատճառով էլ կոչվում է ժուն (中, մեջտեղ): Բացի այդ, լեղապարկն իր մեջ տեղավորում է լեղին և մասնակցում մտավոր գործունեությանը: Այն թե՛ արտակարգ օրգան է, թե՛ վեց ֆու-օրգաններից մեկը, որին բնորոշ է լիցքաթափումը՝ առանց պահուստավորման: Այն ունի թե՛ ինի, թե՛ յանի հատկություններ, այն է՝ պահուստավորման ու լիցքաթափման երկակի գործառույթներ, ինչպես Յի վեցագրի յան տողերը յան դիրքում (առաջին, երրորդ կամ հինգերորդ տող) կամ ին տողերը ին դիրքում (երկրորդ, չորրորդ կամ վեցերորդ տող), այդ պատճառով էլ կոչվում է «ժեն» (ճշգրտություն): Լյարդն ու լեղապարկը սերտորեն կապված են գործառույթների առումով. առաջինը կառավարում է ռազմավարության մշակումը, վերջինը վերահսկում է որոշումների կայացումը՝ խոհեմ դատողություններ ձևակերպելով: Դրանից էլ առաջացել է «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնի «արդարության պատասխանատու»

եզրույթը: Եթե լեղապարկի ցին թույլ է, որոշումների կայացման տեսանկյունից տեղի է ունենում լեղապարկի գործառույթի խանգարում: Արդյունքում կարող են տեղի ունենալ մտավոր և զգացմունքային խանգարումներ, ինչպիսիք են երկչոտությունը, վախը, անքնությունը և երազկոտությունը:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | պաշտոնյա, որը գործում է որպես միջնորդ, արդարության պաշտոնյա, լեղապարկ |
| [现行译法] *նոր թարգմանություն* | պաշտոնյա, որն ունի միջնորդի գործառույթ, լեղապարկ, ֆու-ներքին օրգաններ՝ վճռական բնավորությամբ |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | արդարության պատասխանատու |

Մեջբերումներ 引例.

Այն շիտակ է, անկեղծ ու հաստատակամ, այդտեղից էլ առաջացել է «արդարության պատասխանատու» փոխաբերական անվանումը *(«Պարզ զրույց» «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոն», ծանոթագրությունը՝ Վու Կունի):*

Ըստ «Պարզ զրույցի» «Վեց գումարած վեց համակարգի և ներքին օրգանների դրսևորումների»՝ տասնմեկ զան-ֆու օրգանների բոլոր գործառույթները կախված են լեղապարկի բնականոն գործառույթից, ինչը նշանակում է, որ զան-ֆու օրգաններից յուրաքանչյուրն ունի իր համապատասխան գործառույթները, իսկ լեղապարկը կարգավորում է դրանք՝ ճիշտը տարբերակելով սխալից, կայացնելով անկողմնակալ որոշումներ: Այստեղից էլ առաջացել է «լեղապարկն արդարության պատասխանատուն է» արտահայտությունը *(«Պարզ զրույցի» հարմարեցված մեկնաբանություն Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում):*

**Ջրամբարի պատասխանատու ժուդու ջի գուան 州都之官**

Այս եզրույթը, որն ի սկզբանե ժուդու էր (州都, բառացի՝ պետություն և մայրաքաղաք) վերաբերում  է ջրի այն հատվածին, որը բնակելի է: Այստեղ այն միզապարկի փոխաբերական իմաստն է, որի գործառույթը ջրի պահուստավորումն ու լիցքաթափումը կառավարելն է: Մարմնի հեղուկները նյութափոխանակության արդյունքում փոխանցվում են միզապարկին: Քանի որ երիկամն ունի ցին ձևափոխելու գործառույթ, պարզը բարձրանում է, պղտորը՝ իջնում: Լուսավորը գոլորշանում է, իսկ հետո էներգիայի եռակի աղբյուրի միջոցով տարածվում ամբողջ մարմնով մեկ: Պղտորը վերածվում է մեզի, ապա դուրս մղվում միզանցքից: Ըստ «Արյան ախտանիշների մասին քննախոսության» «Զան-ֆու ախտաբանության քննարկում» բաժնի, որը հեղինակ Թան Ռունչուանը գրել է Ցին դինաստիայում (1616-1911), «Բժշկության ներքին կանոնն ասում է, որ միզապարկի ցիի ձևափոխման արդյունքում ջուրը դուրս է գալիս ու շարժվում դեպի վեր և դուրս, ինչը դրսևորվում է քրտինքի տեսքով…»: Սա ցույց է տալիս, որ ջրի, այդ թվում և քրտինքի ու մեզի լիցքաթափումը կապված է միզապարկի ցիի ձևափոխման գործառույթի հետ, այդտեղից էլ առաջացել է «միզապարկը ծառայում է որպես ամբարտակ, որը պատասխանատու է ջրի պահուստավորման ու դատարկման համար՝ ցիի ձևափոխման միջոցով» մեջբերումը «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնում:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ՋՐԱՄԲԱՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՊԱՇՏՈՆՅԱ, գետի կղզու պաշտոնյա, տարածաշրջանային փոխարկիչ, միզապարկ |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | միզապարկ |

［标准译法］ամբարտակի պաշտոնյա
*ստանդարտ*
*թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Միզապարկը կառավարում է ջուրը, այն տեղն է, որտեղ պահուստավորվում են հեղուկները. այդտեղից էլ առաջացել է «ամբարտակի պատասխանատու» անվանումը *(«Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի» համահավաք ծանոթագրություններ «Պարզ զրույցում»):*

Միզապարկը որովայնի խոռոչի ստորին մասն է, որտեղ, ինչպես ամբարտակում, հավաքվում է էներգիայի եռակի աղբյուրի ջուրը: Այդ պատճառով էլ այն կոչվում է ամբարտակի պաշտոնյա, որը պատասխանատու է հեղուկները պահուստավորելու համար *(«Դասակարգված դասական գործեր»):*

**Երթևեկության պատասխանատու**
**չուանդաո ժի գուան 传道之官**

Հաստ աղիքը նման է պաշտոնյայի, որը պատասխանատու է ապրանքների փոխադրման համար: Այն, ինչպես նաև սիգմոիդ հաստ աղիքն ու ուղիղ աղիքը, օղաձևի բացվածքի մոտ միանում է բարակ աղիքին և ավարտվում հետանցքում: Բարակ աղիքից ստանալով չմարսված նյութերը՝ հաստ աղին առաջին հերթին մասնակցում է սննդի մնացորդներից ստացված ջրի ու սննդարար նյութերի կլանմանը, ձևավորում է կղանքն ու արտաթորանքը: Անպետք նյութերի տեղափոխման այս կարևոր գործառույթի պատճառով այն ստացել է «փոխադրող պաշտոնյա» անվանումը, որը գրված է «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնում: Սովորաբար այնպիսի խանգարումներ, ինչպիսիք են փորկապու-

թյունը կամ փորլուծությունը, տեղի են ունենում, եթե հաստ աղիքը չի կարողանում իրականացնել փոխադրման իր գործառույթը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | փոխադրման համար պատասխանատու պաշտոնյա (հաստ աղիք), պաշտոնյա, որը պատասխանատու է տեղափոխման համար, տեղափոխման պաշտոնյա, փոխադրման պաշտոնյա, փոխանցման գործառույթ իրականացնող օրգան |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | փոխադրման պատասխանատու օրգան, օրգան, որը պատասխանատու է փոխադրման համար, տեղափոխման օրգան (հաստ աղիք), փոխադրման համար պատասխանատու օրգան, տեղափոխության պատասխանատու, երթևեկության պատասխանատու |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | տրանսպորտային պատասխանատու |

Մեջբերումներ 引例.

Հաստ աղիքը սկսվում է բարակ աղիքի վերջնակետից: Դրա հիմնական գործառույթը թափոնային նյութերի հեռացումն է, ինչը ներառում է նաև փոխարկում և փոխադրում *(Բժշկության ներքին կանոնի հիմունքներ):*

Հաստ աղիքը կարող է տեղափոխել թափոնային նյութերը, որովհետև սերտորեն կապված է թոքի հետ: Թոքը կարգավորում է ցիի իջեցումը, ուստի հաստ աղիքը կարող է տեղափոխել թափոնային նյութերը: Հետևաբար, անհրաժեշտ է կարգավորել թոքի ցին՝ արտաթորումը կարգավորելու համար *(Ավանդական չինական և Արևմտյան բժշկության հիմունքներ):*

**Ջրահեռացման պատասխանատու**
**ջուեդու ժի գուան 决渎之官**

Եզրույթը վերաբերում է պաշտոնատար անձին, որը պատասխանատու է ջրուղիների ցամաքեցման համար. սա նշանակում է, որ էներգիայի եռակի աղբյուրի խնդիրը ջրային ուղին հողահանելն ու ջուրը տեղափոխելն է: Մարդու մարմնի հեղուկների բաշխումն ու արտազատումն իրականացվում է տարբեր օրգանների, այդ թվում և թոքի, փայծաղի ու երիկամի սիներգետիկ գործառույթի միջոցով, ինչը հնարավոր է լինում, երբ էներգիայի եռակի աղբյուրը ծառայում է որպես ջրանցք, և դրա ցին՝ որպես առաջ մղող ուժ: Եթե էներգիայի եռակի աղբյուրը չի կարողանում իրականացնել իր գործառույթը, թոքի, փայծաղի ու երիկամի համար դժվար է կարգավորել ջրի նյութափոխանակությունը, ինչը կարող է հանգեցնել մեզի քանակի նվազեցման, այտուցների և այլ ախտաբանական փոփոխությունների: Ըստ «Պարզ զրույցի» «Թագավորական գրադարանում պահպանվող գաղտնի կանոնների քննարկում» բաժնի՝ «էներգիայի եռակի աղբյուրը պատասխանատու է ցամաքեցման համար և կարգավորում է ջրի փոխադրման ուղիներն ամբողջ մարմնում»:

［曾经译法］ *հին թարգմանություն* պաշտոնյա, որը ղեկավարում է ջրահեռացումը (եռակի տաքացուցիչ), ջրուղիների ցամաքեցումը կարգավորող պաշտոնյա, ոռոգման պատասխանատու, որը ջրային ուղիներ է կառուցում, ջրահեռացման պատասխանատու, ջրի արտազատման օրգան:

［现行译法］ *նոր թարգմանություն* ջրի շրջանառության համար պատասխանատու օրգան, ջրահեռացման համար պատասխանատու օրգան (էներգիայի եռակի աղբյուր), ջրի արտաթորման օրգան, էներգիայի եռակի աղբյուր:

［标准译法］ջրացամաքեցման պատասխանատու
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Էներգիայի վերին աղբյուրի գործառույթը նման է մառախուղի, միջին աղբյուրը՝ խմորիչի, իսկ ստորին աղբյուրը՝ ջրահեռացուցչի: Հետևաբար, էներգիայի եռակի աղբյուրը նման է ջրահեռացման համակարգի, որն էներգիայի վերին և միջին աղբյուրներից ջուրն իջեցնում է ստորին հատված՝ այդպիսով կազմակերպելով ջրի արտահոսքի ճանապարհը *(«Պարզ զրույցի» ուղղակի մեկնաբանություն «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

Ջուե (决) նշանակում է ջրահեռացում, իսկ դու (渎)՝ ջրուղիներ: Ջուրը կողողի սիրտն ու թոքը, եթե էներգիայի վերին աղբյուրը չկարողանա իրականացնել իր գործառույթները: Ջուրը կկուտակվի ստամոքսում ու փայծաղում, եթե էներգիայի միջին աղբյուրը չկարողանա կատարել իր դերը: Մեզի ու կղանքի խանգարումներ կառաջանան, եթե էներգիայի ստորին աղբյուրը պատշաճ կերպով չաշխատի: Եթե էներգիայի եռակի աղբյուրի ցին պահպանի ներդաշնակությունը, միջօրեականները կբացվեն, և ջրուղիների հոսքը հարթ կլինի: Այստեղից էլ առաջացել է էներգիայի եռակի աղբյուրի «ջրահեռացման պատասխանատու» անվանումը *(«Դասակարգված դասական գործեր»):*

**Նախաստեղծ ոգու տուն**
**յուանշեն ժի ֆու 元神之府**

Եզրույթը վերաբերում է նախնական ոգու տեղակայման վայրին: Նախնական ոգին, որը նաև կոչվում է բնածին ոգի,

զարգանում է էմբրիոնից, սերմնաբջջի և ձվաբջջի միացման արդյունքում: Ուղեղն ի սկզբանե մասնակցում է կենսագործունեության, մտավոր գործունեության, զգացողությունների ու շարժումների կառավարմանը: Այն իր ներսում է պահում նախաստեղծ ոգին և նյութական հիմք ապահովում դրա գործունեության համար: Այսպիսով, ուղեղը կոչվում է նախաստեղծ ոգու տուն: Ըստ Ժան Սիչունի «Չինական բժշկության գրառումներ՝ արևմտյան բժշկության հղումով» գրքի «Քննարկումներ մարդկային մարմնի ոգու մասին» բաժնի՝ «Ուղեղը նախաստեղծ ոգու տունն է, սիրտը կառավարում է գիտակից ոգին, որը ձեռք է բերվում ավելի ուշ: Նախաստեղծ ոգին ուղեղում բնական է, դատարկ ու պայծառ, ազատ խորհրդածություններից ու մտորումներից, մինչդեռ գիտակից ոգին սրտում ունի մտորումներ ու խորհրդածություններ, պայծառ է, բայց դատարկ չէ»: Մտավոր գործունեության բարձրագույն մակարդակները, ինչպիսիք են մտածողությունը, գիտակցությունն ու զգացմունքները, հիմնված են թե՛ նախաստեղծ, թե՛ գիտակից ոգու վրա և համատեղ կարգավորվում են ուղեղի և սրտի կողմից՝ աշխարհում օբյեկտիվ երևույթները վերլուծելու, ծրագրելու և մտապահելու միջոցով: Հետևաբար, նախաստեղծ ոգին չափազանց կարևոր է կենսագործունեության համար: Կյանքը գոյություն ունի նախաստեղծ ոգու շնորհիվ և ավարտվում է առանց դրա:

［曾经译法］ *հին թարգմանություն* գերագույն մտավոր պալատ (ուղեղ), ՄՏՔԻ ՏՈՒՆ, մտքի պալատ, նախնական միտք/բանականություն, նախաստեղծ ոգու տուն, մտավոր գործունեության տուն, ուղեղ

［现行译法］ *նոր թարգմանություն* մտավոր գործունեության տուն, ուղեղային ոգի, ուղեղ, հոգեկերտվածքի տուն, մտավոր գործունեության կենտրոն, մտավոր գործունեության ֆու-ներքին օրգանների, նախաստեղծ ոգու տուն

［标准译法］ նախաստեղծ ոգու տուն
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Ուղեղն այնտեղ է, որտեղ տեղակայված է նախաստեղծ ոգին, իսկ քիթը կյանքի դարպասի մուտքն է *(«Մատերիա մեդիկայի ամփոփագիր»):*

Ուղեղն այնտեղ է, որտեղ մնում է նախաստեղծ ոգին, և որտեղ այն հատվում է էության հետ: Ըստ էության, հիշողությունը հենվում է ուղեղի վրա *(Դասակարգած մոդելներ՝ հստակ սահմանված բուժումներով):*

Ուղեղն այնտեղ է, որտեղ մնում է նախաստեղծ ոգին, և որտեղ այն հատվում է թափանցիկ յանի հետ *(Բժշկական իրավունքի պատշաճավարություն):*

**Վերելք, վայրէջք, ելք և մուտք**
**շենծիան չուրու 升降出入**

Եզրույթը վերաբերում է ցիի շարժման չորս հիմնական ձևերին: Վերելքն ու վայրէջքը ցիի վերընթաց և վայրընթաց շարժումն են, իսկ ելքն ու մուտքը՝ ցիի դեպի դուրս և ներս շարժումը: Ցիի շարժման զանազան ձևեր կան, այդ թվում հակադիր զույգեր՝ վերելք և վայրէջք, ելք և մուտք, ճգողություն և փանում, տարածում և խտացում: Ավանդական չինական բժշկությունը կենտրոնանում է վերելքի, վայրէջքի, ելքի ու մուտքի ցի շարժման վրա՝ հավատալով, որ «առանց ցի շարժման ոչինչ չի կարող գոյություն ունենալ»: Ցիի վերելքն ու վայրէջքը, ինչպես նաև ելքն ու մուտքը հակադիր միավորների հակասական շարժումներ են, որոնք գոյություն

ունեն մարդու օրգանիզմում: Նախևառաջ, վերելք-վայրէջք, ելք-մուտք, ինչպես նաև վերելք-վայրէջք և ելք-մուտք հակադիր զույգերը փոխադարձաբար սահմանափակում և փոխադարձաբար ուժեղացնում են իրար՝ այդպիսով պահպանելով ներդաշնակությունը: Մյուս կողմից, չնայած ցի շարժման որոշակի ձև գերիշխանություն ունի որոշակի օրգանի նկատմամբ, օրինակ, լյարդն ու փայծաղը հիմնականում մասնակցում են բարձրացող ցիին, ապա բարձրանալու և իջնելու, ելքի և մուտքի միջև հավասարակշռությունը պետք է կարգավորվի մարդու մարմնի ամբողջության տեսանկյունից: Միայն այս դեպքում մարդու մարմնի ցի շարժումն ու ներքին գործառույթները կարող են բնականոն լինել: Հետևաբար, ցի շարժման, այն է՝ վերելքի և վայրէջքի, ելքի և մուտքի համակարգված հավասարակշռությունը կարևոր դեր ունի բնականոն կենսագործունեություն պահպանելու գործում:

［曾经译法］ *հին թարգմանություն* վերելք, վայրէջք, ելք, մուտք, բարձրանալ-իջնել, ներս գալ-դուրս գնալ

［现行译法］ *նոր թարգմանություն* բարձրանալը, իջնելը, դուրս և ներս գնալը, վերելք, վայրէջք, ելք և մուտք, բարձրանալ, իջնել, դուրս գալ, ներս գալ, վերընթաց, վայրընթաց, դեպի ներս, դեպի դուրս շարժում

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* վերելք, վայրէջք, ելք և մուտք

Մեջբերումներ 引例.

Երբ ցին դադարի դուրս գալ ու մտնել, կենսագործունեությունը կդադարի: Երբ ցին դադարի բարձրանալ ու իջնել, ցիի փոխդասավորությունը կվերանա: Հետևաբար, առանց ցիի ելքի ու մուտքի, չի լինի ծնունդ, աճ, հասունացում, ծաղկում, բերք կամ պահուստավորում: Հետևաբար, ցիի բարձ-

ռանալը, իջնելը, ելքն ու մուտքը հանդիպում են բոլոր կեն-սաձևերում *(«Պարզ զրույց»):*

Ցիի ելք և մուտք չի լինում, եթե չկա ցիի իջեցում և բարձ-րացում և հակառակը: Ելնել-իջնելն ու ելք-մուտքը կարևոր են միմյանց համար *(«Պալատական նոթեր բժշկության մա-սին ընթերցումներում»):*

**Մարմնի հեղուկներն ու արյունը նույն ծագումն ունեն ծինսյուե թունհուան 津血同源**

Եզրույթը նշանակում է, որ թե՛ օրգանիզմի հեղուկները, թե՛ արյունը ստացվում են սննդի ու խմիչքի բնահյութից: Դրանք նույն աղբյուրն ունեն, սնուցում են միմյանց, ձևափոխում և ազդում միմյանց վրա: Նախ, թե՛ մարմնի հեղուկները, թե՛ արյունը հեղուկ են և վերաբերում են ինին: Առաջանում են սննդի և խմիչքի բնահյութից, և ստամոքսն ու փայծաղը ձևափոխում են դրանք: Հեղուկներն ու արյունը խոնա-վեցնում և սնուցում են միմյանց, համատեղ սնուցում են նաև մարդու մարմինը: Երկրորդ, շրջանառության և բաշխման ընթացքում մարմնի հեղուկներն ու արյունը կարող են ձևա-փոխվել մեկը մյուսի: Մարմնի հեղուկները վերափոխվում են արյան, երբ մուտք են գործում արյունատար անոթներ. ար-յան մեջ ջուրը դուրս է հոսում անոթներից ու վերածվում մարմնի հեղուկների: Մարմնի հեղուկների ու արյան հենց այս սերտ փոխհարաբերության պատճառով է, որ դրանք ազդում են միմյանց վրա ախտաբանության տեսանկյունից: Օրինակ, արյան չափազանց մեծ քանակի կորուստը կարող է վնասել մարմնի հեղուկները, ինչը կհանգեցնի ծարավի, մեզի քիչ քանակության, չոր մաշկի և այլ ախտաբանական փոփոխությունների: Եվ հակառակը, մարմնի հեղուկների լուրջ վնասվածքը նույնպես կազդի արյան վրա՝ հանգեցնե-լով արյան անբավարարության, օրգանիզմի հեղուկների հյուծման, արյան չորության և այլն:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | Մարմնի հեղուկներն ու արյունը ստացվում են նույն աղբյուրից: Մարմնի հեղուկն ու արյունը նույն ծագումն ունեն: Մարմնի հեղուկն ու արյունը ստացվում են նույն աղբյուրից: Հեղուկն ու աղբյուրը նույն ծագումն ունեն: |
| [现行译法] *նոր թարգմանություն* | Մարմնի հեղուկներն ու արյունը ստացվում են նույն աղբյուրից: Մարմնի հեղուկներն ու արյունը ստացվում են ընդհանուր աղբյուրից, մարմնի հեղուկներն ու արյունը նույն աղբյուրն ունեն: Մաքուր հեղուկի ու արյան միասեռություն, հեղուկի ու արյան միասեռություն, հեղուկ և արյուն՝ նույն աղբյուրից: |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Մարմնի հեղուկներն ու արյունն ունեն նույն ծագումը: |

Մեջբերումներ 引例.

Սննդարար ցին վերափոխվում է էներգիայի միջին աղբյուրի: Ինչպես մառախուղն ու ցողը, այն մտնում է միջանկյալ տարածք, ներթափանցում ամենամանր ուղեկից անոթների մեջ և խառնվում է մարմնի հեղուկների հետ, ապա վերափոխվում արյան *(«Հոգևոր առանցք»):*

Մարմնի հեղուկներն արյան ավելցուկներ են, որոնք հոսում-դուրս են գալիս արյունատար անոթներից և շրջանառվում մարդու մարմնում, ինչպես մաքուր ցողը բնության մեջ *(Մին դինաստիայի հայտնի բժիշկների պարբեր երկեր):*

Սնունդն ու խմիչքը կարող են վերածվել մարմնի հեղուկների, որտեղ թանձր մասն արյունն է, նոսր մասը՝ հեղուկը: Հեղուկները խոնավեցնում են զան-ֆու օրգանները, մկանները ու արյունատար անոթները, որպեսզի ցին ու արյունը

կարողանան հանդարտ հոսել առանց արգելքների *(«Պատահական նոթեր բժշկության մասին ընթերցումներում»):*

### Արյունն ու քրտինքը նույն ծագումն ունեն սյունեհան թունյուան 血汗同源

Եզրույթը նշանակում է, որ արյունն ու քրտինքն առաջանում են սննդից ու խմիչքներից և կախված են մարմնի հեղուկների ձևափոխությունից: Ըստ ավանդական չինական բժշկության՝ արյունը ստեղծվում է սննդարար ցիից և մարմնի հեղուկներից, որոնց այն մասը, որը դուրս է հոսում արյան անոթներից, վերածվում է մարմնի հեղուկների: Մարմնի հեղուկները վերածվում են քրտինքի, երբ գոլորշանում են մաշկի վրա յան-ցիի գոլորշացնող գործառույթի ազդեցության տակ, այստեղից էլ առաջացել է «արյունն ու քրտինքը նույն ծագումն ունեն» արտահայտությունը: Սա ենթադրում է, որ ավելորդ քրտինքը վնասում է ոչ միայն մարմնի հեղուկները, այլև արյունը, իսկ արյան կորուստը վնասում է ոչ միայն մարմնի հեղուկները, այլև քրտինքը: Հետևաբար, հեմոռագիկ հիվանդների դեպքում պետք է խուսափել քրտնելու մեթոդից, հակառակ դեպքում մարմնի հեղուկները լրջորեն կվնասվեն, և վիճակը կվատթարանա: Չափազանց շատ քրտնարտադրության և հեղուկի անբավարարության դեպքում պետք է խուսափել արյունառության և արյան կանգի վերացման արմատական մեթոդներից, հակառակ դեպքում մարմնի հեղուկներն ու արյունը լրջորեն կվնասվեն, և վիճակը կվատթարանա: Ուստի, ըստ Ժան Ժունջինի «Ցրտահարության վնասների մասին քննախոսության»՝ «պետք է խուսափել քրտինքի թերապիայից այն հիվանդների դեպքում, որոնք քթային արյունահոսություն ունեն», և «պետք է խուսափել քրտինքի թերապիայից արյան հյուծման դեպքերում»:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Արյունն ու քրտինքը ստացվում են նույն աղբյուրից: Արյունն ու քրտինքը կիսում են նույն աղբյուրը: Արյունն ու քրտինքը նույն աղբյուրից են բխում: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | Արյունն ու քրտինքը մեկ աղբյուր ունեն: Արյունն ու քրտինքը նույն աղբյուրն ունեն: Արյունն ու քրտինքը նույն ծագումն ունեն: Արյունն ու քրտինքը նույն աղբյուրից են: |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Արյունն ու քրտինքը նույն ծագումն ունեն |

Մեջբերումներ 引例.

Քիչ քրտնարտադրություն նկատվում է առատ արյունահոսությամբ հիվանդների, իսկ արյան անբավարարություն՝ առատ քրտնարտադրությամբ հիվանդների դեպքում *(«Հոգևոր առանցք»):*

Արյունն ու քրտինքը նույն ծագումն ունեն ու չպիտի վնասվեն միաժամանակ *(Համառոտ ակնարկ գրպահարանություններ մասին):*

**Ցին տաքացնում է մարմինը**
**ցի ժու սուժի 气主煦之**

Ցին արտադրում է ջերմություն ու ջերմացնում մարդու մարմինը: Ջերմացնող գործառույթը հիմնականում դրսևորվում է հետևյալ ոլորտներում. առաջին, ցին ստեղծում է ջերմություն ու պահպանում է մարմնի համեմատաբար կայուն ջերմաստիճան: Ցին մարմնում ջերմության արտադրման նյութական հիմքն է: Այն իր շարժման ընթացքում շարունակաբար ջերմություն է արտադրում և տաքացնում մարմինը:

Բացի այդ, պաշտպանիչ ցին վերահսկում է քրտնագեղձերի բացումն ու փակումը և կարգավորում մարմնի ջերմաստիճանը քրտնարտադրությունը վերահսկելու միջոցով: Երկրորդ, ցին ջերմացնում է զան-ֆու օրգանները, միջօրեականներն ու այլ հյուսվածքներ՝ ապահովելով դրանց ֆիզիոլոգիական գործառույթները: Երրորդ, ցին պահպանում է հեղուկ նյութերի, օրինակ՝ բնահյութի, արյան և մարմնի հեղուկների շրջանառությունը: Ցիի ջերմացնող գործառույթի թուլացումն ու ջերմության արտադրության կրճատումը կարող են հանգեցնել այնպիսի ախտաբանական փոփոխությունների, ինչպիսիք են մարմնի ցածր ջերմաստիճանը, սառը վերջույթները, ներքին օրգանների գործառույթների խանգարումը և բնահյութի, արյան ու մարմնի հեղուկների անհամաչափ շրջանառությունը:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | Ցին գերիշխում է ջերմությունը: |
| [现行译法] *նոր թարգմանություն* | ցիի ջերմացնելու գործառույթ, ցին տաքացնում է մարմինը, ցին կառավարում է ջերմությունը |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Ցին տաքացնում է մարմինը: |

Մեջբերումներ 引例.

Ցին ջերմացնում է մարդու մարմինը, իսկ արյունը սնում ու խոնավեցնում է այն *(«Բարդ դեպքերի կանոն»):*

Այն, որ Ցին ջերմացնում է մարմինը, նշանակում է, որ ցին արտադրում է ջերմություն՝ մարդու մաշկն ու մկանները «գոլորշացնելու համար» *(Տարբերակելով «Բարդ դեպքերի կանոնի» իմաստը):*

Ցին ջերմացնում է մարդու մարմինը: Ցիի միջոցով ամբողջ մարմինը ջերմանում ու սնուցվում է *(«Կայսերական բժշկական բյուրոյի փորձերը բոլոր թեմաներով»):*

**Արյունը սնում ու խոնավեցնում է մարմինը**
**սյուե ժու րուժի 血主濡之**

Սննդարար ցիից ու մարմնի հեղուկներից կազմված արյունը մարդու մարմինն ապահովում է սննդարար նյութերով ու խոնավությամբ: Սննդարար ցին բարեփոխված ու մաքրված բնահյութն է, որը ստացվել է սննդի ու խմիչքի էությունից. մարմնի հեղուկները պետք է խոնավեցնեն ամբողջ մարմինը: Հետևաբար, արյան սկզբնական գործառույթը սնելն ու խոնավեցնելն է: Արյունն արյունատար անոթներով շրջանառվում է ամբողջ մարմնով մեկ՝ հասնելով զանփու օրգաններին, մաշկին, մկաններին, ջլերին ու անոթներին՝ մշտապես սնուցելով ու խոնավեցնելով դրանք, որպեսզի պահպանեն իրենց բնականոն ֆիզիոլոգիական գործառույթներն ու ապահովեն կենսագործունեությունը: Դեմքի կարմրությունը, լավ տեսողությունը, ամուր մկանները, ոսկորներն ու ջլերը, փայլուն մաշկն ու մազերը, արագ ընկալումը, ինչպես նաև ֆիզիկական շարժումների ճկունությունը վկայում են արյան բավականաչափ քանակի և արյան՝ սնուցելու ու խոնավեցնելու բնականոն գործառույթի մասին: Հակառակ դեպքում դեմքը կարող է հողագույն դառնալ, տեսողությունը՝ աղոտ, շուրթերն ու եղունգները՝ գունատ, մազերն ու մաշկը՝ չոր, մկանները՝ հյուծված, ջլերն ու մկանները՝ թորշոմած, վերջույթները՝ թմրած: Ֆիզիկական շարժումը կզրկվի ճկունությունից, իսկ զարկերակը հազիվ լսելի կլինի:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | Արյունը գերիշխում է սնուցումը: Արյունը կառավարում է խոնավեցումն ու սնուցումը |
| [现行译法] *նոր թարգմանություն* | սնելու գործառույթին ծառայող արյուն, Արյունը պատասխանատու է խոնավեցման և սնուցման համար, արյուն, որը պատասխանատու է մարմինը սնելու համար, արյունը կառավարում է խոնավեցման և սնուցման գործընթացը: |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Արյունը սնում ու խոնավեցնում է մարմինը: |

Մեջբերումներ 引例.

Ցին ջերմացնում է մարդու մարմինը, իսկ արյունը սնուցում ու խոնավեցնում է այն *(«Բարդ դեպքերի կանոն»):*

Այն, որ արյունը սնուցում ու խոնավեցնում է մարդու մարմինը, նշանակում է, որ արյունը կարող է խոնավեցնել ոսկորները ու ջլերը, յուղել հոդերն ու սնուցել զան-ֆու օրգանները *(Տարբերակելով «Բարդ դեպքերի կանոնի» իմաստը):*

Արյունն ունի մարդու մարմինը սնուցելու և խոնավեցնելու գործառույթ: Սակավարյունության դեպքում կարող է տեղի ունենալ ջլերի սպազմ, քանի որ արյունը չի կարողանա սնուցել դրանք *(«Քննախոսություն ցրտահարության վնասների մասին»):*

## Ցին արյան հրամանատարն է
## ցի ուեյ սյուե շուայ 气为血帅

Ցին կարող է ստեղծել, խթանել և վերահսկել արյունը, ինչը սովորաբար նկարագրվում է հետևյալ կերպ՝ «ցին

արյան հրամանատարն է»: Նախևառաջ, ցին արյուն է ստեղծում, այսինքն՝ մասնակցում է արյան ստեղծմանն ու խթանում այն: Երբ ցին առատ է, արյունը բավարար է: Երբ ցին թույլ է, արյունը սակավ է: Ցիի երկարատև սակավությունը հաճախ հանգեցնում է արյան ոչ բավարար քանակի, և հետևաբար, ի հայտ են գալիս սակավարյունության դեպքեր: Երկրորդ, ցին խթանում է արյան շրջանառությունը, այսինքն՝ ցին արյան շրջանառության խթանող ուժն է: Երբ ցին հոսում է, հոսում է նաև արյունը: Երբ ցին կանգ է առնում, արյան հոսքը կանգ է առնում: Երբ ցին թույլ է կամ լճանում է, կարող է տեղի ունենալ արյան ոչ սահուն կամ դանդաղ հոսք կամ նույնիսկ արյան լճացում: Եթե կան ցիի խանգարումներ՝ ոչ բնականոն վերելքով, վայրէջքով, ելքով կամ մուտքով, դա ազդում է արյան շրջանառության վրա և կարող է հանգեցնել արյունահոսության: Դա արյան ոչ կանոնավոր հոսքի հետևանք է, ինչին հետևում է ցիի հակահոսքը կամ ցիի սուզումը: Երրորդ, ցին պարունակում է արյուն: Ցին կարող է վերահսկել արյունը, որպեսզի այն հոսի արյունատար անոթներում և կանխի անոթներից դրանց արտահոսքը: Ցիի սակավության դեպքում ի հայտ են գալիս այնպիսի հեմոռագիկ հիվանդություններ, ինչպիսիք են հեմատուրիան, հեմատոզիան, մետրոռագիան, մետրոստաքսիսը և պուրպուրան: Նման դեպքերում պատճառն այն է, որ անբավարար ցին չի կարողանում վերահսկել արյունը:

［曾经译法］ *հին թարգմանություն*
կենսական էներգիան՝ որպես արյան հրամանատար, «ՑԻՆ» (ԿԵՆՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ)՝ ԱՐՅԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ: Ցին արյան հրամանատարն է: Ցին գործում է՝ որպես արյան հրամանատար:

［现行译法］ *նոր թարգմանություն*
ցին՝ որպես արյան հրամանատար, ցին՝ արյան հրամանատար: Ցին արյան հրամանատարն է, արյունը ղեկավարող ցի

［标准译法］Ցին արյան հրամանատարն է:
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Ցին արյան հրամանատարն է, հետևաբար այն պետք է կարգավորել դաշտանի կարգավորումից առաջ *(«Գինեկոլոգիայի ամփոփ համառոտագիր»):*

Ցիի հակառակ հոսքով պայմանավորված արյունահոսության դեպքում որդեգրեք վարպետ Միաոյի այն մոտեցումը, ըստ որի ցին արյան հրամանատարն է, և բուժման համար օգտագործեք սուզի (Fructus Perillae, պերիլայի պտուղ), յուջին (Radix Curcumae, քրքումի արմատ), սանյե (Folium Mori, թթենու տերև), դանփի (Cortex Moutan Radicis, մուտանի արմատ), ջիանսյան (Lignum Dalbergiae Odorifera, դալբերգիայի կեղև) և չուանբեյ (Bulbus Fritillariae Cirrhosae, սիչուանական աքարի սոխուկ) *(Հիվանդության պատմություն. կլինիկական պրակտիկայի ուղեցույց):*

**Արյունը ցիի մայրն է**
**սյուե ուեյ ցի մու 血为气母**

Արյունը կարող է ցի ստեղծել և փոխադրել այն. այս երևույթը նկարագրվում է «արյունը ցիի մայրն է» արտահայտությամբ: Նախևառաջ, արյունը ստեղծում է ցի: Արյունը շրջանառվում է ամբողջ մարմնով մեկ՝ շարունակաբար սնուցում ապահովելով ցիի ստեղծման և ֆունկցիոնալ գործունեության համար, որպեսզի այն շարունակի կատարել իր բնականոն ֆիզիոլոգիական գործառույթը: Հետևաբար, ցին ակտիվ է, երբ արյունը շատ է, և թուլանում է, երբ արյունը սակավ է: Երկրորդ, արյունը ցիի կրողն է, ցին ամ-

բողջ մարմնին հասցնելու փոխադրամիջոց: Ցին պատկանում է յանին և դինամիկ է, արյունը պատկանում է ինին և ստատիկ է: Հետևաբար, ցիի բնականոն շրջանառությունն ապահովելու համար ցին կախված է շոշափելի արյունից: Հակառակ դեպքում, ցին կլողա ու կցրվի, եթե արյունը չկարողանա փոխադրել ցին: Ցին ոչնչից կախում չունի: Օրինակ, ուժեղ արյունահոսությամբ հիվանդների դեպքում ցին կքայքայվի, ինչը կհանգեցնի մահացու հիվանդության, որը կոչվում է ցիի լքում արյան կորստից հետո, կամ ցին կլճանա, երբ արյան շրջանառության մեջ խոչընդոտ լինի:

| | |
|---|---|
| ［曾经译法］<br>*հին թարգմանություն* | արյունը՝ որպես կենսական էներգիայի մայր, ԱՐՅՈՒՆԸ ՑԻԻ (ԿԵՆՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ) ՄԱՅՐՆ Է: Արյունը ցիի մայրն է արյունը՝ ցիի մայր: Արյունը Ցիի մայրական հիմքն է: |
| ［现行译法］<br>*նոր թարգմանություն* | արյունը՝ ցիի մայր: Արյունը ցիի մայրն է: |
| ［标准译法］<br>*ստանդարտ թարգմանություն* | Արյունը ցիի մայրն է: |

Մեջբերումներ 引例.

Արյունը կրում է ցին, իսկ ցին փոխադրում է արյունը *(Քննախոսություն արյան ախտանիշների մասին):*

Ցին և արյունը հսկում են միմյանց, ուստի անբաժանելի են *(Ակնաբուժության անզին դասական գործերի մանրամասն ուսումնասիրություն):*

## Կենսական ակտիվություն և ցի փոխդասավորություն շենջի ցիլի 神机气立

Կենսական ակտիվությունը կյանքի հիմքն է: Այն մարմնավորում է կենսագործունեությունը կառավարելու և կարգավորելու մեխանիզմը: Ցի փոխդասավորությունը, որը նշանակում է բնության մեջ ցիի շարժում, այն վիճակն է, որի շնորհիվ պահպանվում է կյանքը: Այս երկու հասկացությունները, չնայած համեմատաբար անկախ լինելուն, սերտորեն կապված են: Դրանք միասին բացահայտում են կենդանի օրգանիզմի գործունեության ստեղծման ու ձևափոխման և դրա ներքին ու արտաքին միջավայրի ներքին կապը:

Կենսական գործունեությունը, ցի փոխդասավորության համեմատ, հիմնականում վերաբերում է մարդու մարմնում ցի շարժման կարգավորմանն ու վերահսկմանը և կյանքի ներքին հիմքն է: Կազմակերպված և նպատակային կարգավորման և շարժման միջոցով այն ապահովում է ներքին միջավայրի կայուն վիճակը (հոմեոստազիս) և պահպանում մարդու մարմնի ներքին և արտաքին միջավայրերի համակարգումը ցիի փոխդասավորության օգնությամբ:

Ցի փոխդասավորությունը հիմնականում վերաբերում է «ցիի» փոխանակմանն ու ձևափոխմանը կենդանի օրգանիզմի և բնական միջավայրի միջև, այն է՝ բնահյութի, էներգիայի ու տեղեկատվության փոխանակություն: Սա այն պայմանն է, որից կախված է օրգանիզմի գոյատևումն ու կենսական էներգիայի կարգավորման ու վերահսկման կարգավորումը: Կենսական ակտիվությունն ու ցի փոխդասավորությունը լրացնում են միմյանց՝ պահպանելով կենդանի մարմնի բնականոն կենսագործունեությունը:

［曾经译法］ *հին թարգմանություն* կենսական ակտիվություն, առեղծվածային մեխանիզմ (神机)

[现行译法] *նոր թարգմանություն* կենսական ակտիվություն, առեղծվածային մեխանիզմ, ՀՈԳԵՎՈՐ ՄԵԽԱՆԻԶՄ (神机), կենսական ակտիվություն և ցի փոխդասավորություն, շենջի (մոգական մեխանիզմ) (神机), ցիլի (ցիի ծագում) (气立)

[标准译法] *ստանդարտ թարգմանություն* կենսական ակտիվություն և ցի փոխդասավորություն

Մեջբերումներ 引例.

Այն, ինչ ծագում է արարածների ներսում, կոչվում է կենսական ակտիվություն: Ստեղծման և ձևափոխման գործընթացը կանգ կառնեն, երբ կենսական ուժերն անհետանան: Այն, ինչ առաջանում է իրերի ու երևույթների արտաքինից, կոչվում է ցի փոխդասավորություն: Ստեղծման ու ձևափոխման գործընթացը կդադարի, եթե ցիի ակտիվությունը պակասի *(«Պարզ զրույց»):*

Երբ ցին դադարում է մուտք ու ելք ունենալ, կենսական ակտիվությունն անհետանում է: Երբ ցին դադարում է բարձրանալ ու իջնել, ցի փոխդասավորությունն անհետանում է *(«Պարզ զրույց»):*

Արյան ու ցիի շնորհիվ կենդանիներն իրենց կենսական ուժը տեղավորում են մարմնի ներսում, ընդ որում ոգին գերիշխում է կյանքը, և սա կոչվում է կենսական ակտիվություն… Ինչ վերաբերում է բույսերին ու հանքանյութերին, դրանց կենսունակությունը պահպանվում է արտաքին միջավայրում, ընդ որում ցին գերիխում է աճը, և դա կոչվում է ցի փոխդասավորություն *(«Գաղտնի դպրական գործեր»):*

**Միջօրեական, նորմալ բաբախում**
**ծինմայ 经脉**

Ծինմայ եզրույթը (որը հիմնականում թարգմանվում է միջօրեական) վերաբերում է միջօրեականների համակարգի գլխավոր ուղիներին: Միջօրեականները ցիի ու արյան հոսքի, ինչպես նաև զգացողությունների հիմնական ուղիներն են և բաժանվում են երեք խմբի՝ տասներկու (կանոնավոր) միջօրեական, ութ լրացուցիչ միջօրեական և տասներկու տարամետ միջօրեական: Տասներկու միջօրեականները, որոնք նաև կոչվում են տասներկու գլխավոր միջօրեական, ուղղակիորեն կապված են զան-ֆու օրգանների հետ: Դրանք սկսվում, միանում ու ավարտվում են որոշակի կետերում՝ անցնելով ամրագրված ուղիներով, որոնք ունեն որոշակի ուղղություններ: Մինչդեռ ութ լրացուցիչ միջօրեականները, ի տարբերություն տասներկու հիմնական միջօրեականների, չեն վերաբերում զան-ֆու օրգաններից որևէ մեկին, և ոչ էլ կապված են արտաքին ու ներքին միջավայրերի հետ: Դրանք կառավարում, համակարգում ու կարգավորում են ցին ու արյունը տասներկու միջօրեականներում: Տասներկու տարամետ միջօրեականները ճյուղեր են, որոնք ծագում են տասներկու հիմնական միջօրեականներից, մտնում, դուրս գալիս և միանում են դրանց հետ: Դրանք ամրապնդում են արտաքին-ներքին զույգ միջօրեականների կապը և լրացնում են տասներկու հիմնական միջօրեականները: Քանի որ սրտազարկի ախտորոշումը զբաղեցնում է միջօրեականների տեսության զգալի մասը, ծինմայը կարելի է օգտագործել նաև չինական դասական բժշկության մեջ՝ հղում անելով բնականոն սրտազարկի դրսևորումներին, ի տարբերություն բինմայի (ցավոտ սրտազարկ):

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | միջօրեական և անոթներ, միջօրեական, խողովակներ և անոթներ, միջօրեականներ, խողովակներ, ԽՈՂՈՎԱԿ, ծին-մայ (խողովակներ), խողովականման անոթ |

［现行译法］ *Նոր թարգմանություն* միջօրեականներ, խողովակ, հիմնական միջօրեական, միջօրեական

［标准译法］ *Ստանդարտ թարգմանություն* ① միջօրեական ② բնականոն բաբախում

Մեջբերումներ 引例.

Միջօրեականներն ուղիներ են, որոնցով հոսում են ցին ու արյունը, ինչպես նաև փոխադրվում են ինի ու յանի բաղադրիչները, որոնց խնդիրն է՝ սնուցել մարմինը, խոնավեցնել ջլերն ու ոսկորները և յուղել անոթները *(«Հոգևոր առանցք»):*

Տասներկու միջօրեականներն անցնում են մկանային միջանցքի խորքերով և հետևաբար անտեսանելի են *(«Հոգևոր առանցք»):*

Միայն երբ մարդը լիովին հասկանում է իր բնականոն սրտխփոցը, նա կարող է իմանալ, թե ինչ բան է ախտածին բաբախումը *(«Պարզ զրույց»):*

**Օժանդակ ուղիներ**
**լուոմայ 络脉**

Օժանդակ ուղիները միջօրեականների ճյուղեր են, որոնք ամբողջ մարմնի երկայնքով կազմում են բարդ ցանցանման համակարգ: Ըստ չափսերի՝ հետագայում դրանք բաժանվեցին տարամետ ու երրորդային ուղիների: Տարամետ ուղիները, որոնք նաև կոչվում են «տասնհինգ տարամետ օժանդակ ուղիներ», ավելի մեծ և կարևոր են և կարող են ամրապնդել միջօրեականների արտաքին ու ներքին զույգերի կապը մարմնի մակերեսին: Երրորդային ուղիները սրանց հե-

տագա բաժանումներն են՝ գծային կապից մինչև մակերեսային ներտարածում, որոնք ամրապնդում են կապը հյուսվածքային մակարդակում և նպաստում ցիի ու արյան ինֆուզիային:

Ին-յանի հատկությունների տեսանկյունից, գոյություն ունեն ին օժանդակ ուղիներ և յան օժանդակ ուղիներ: Ին ուղիները շարժվում են ներքև և ներս՝ կապվելով զան-օրգանների հետ: Յան ուղիները շարժվում են վեր և դուրս՝ կապվելով ֆու-օրգանների հետ: Ցիի և արյան տեսանկյունից գոյություն ունեն ցի օժանդակ ուղիներ և արյան օժանդակ ուղիներ: Ցի ուղիներին բնորոշ է ցիի հոսքը, իսկ արյան ուղիներին՝ արյան հոսքը: Զան-ֆու օրգանների տեսանկյունից՝ օժանդակ ուղիները կրում են տարբեր անվանումներ՝ ըստ տեղակայման: Օրինակ, կա զան օժանդակ ուղի, սրտի օժանդակ ուղի, թոքի օժանդակ ուղի, ուղեղի օժանդակ ուղի, ստամոքսի օժանդակ ուղի և այլն: Դրանք առաջին հերթին պատասխանատու են հյուսվածքներին ցի և արյուն մատակարարելու համար, որի ընթացքում ի հայտ են գալիս նրանց սնուցող և խոնավեցնող ազդեցությունները:

| | |
|---|---|
| [曾经译法]<br>*հին թարգմանություն* | օժանդակ ուղիներ և ենթաուղիներ, օժանդակ, օժանդակ ուղիներ, օժանդակ անոթ, լուո-մայ (օժանդակ ալիքներ), ցանցային անոթ: |
| [现行译法]<br>*նոր թարգմանություն* | օժանդակ ուղիներ, ցանցային անոթ, օժանդակ (միջօրեական), օժանդակ ուղի |
| [标准译法]<br>*ստանդարտ թարգմանություն* | օժանդակ |

Մեջբերումներ 引例.

Բոլոր անոթները, որոնք մակերեսին են ու աչքին տեսանելի, օժանդակ ուղիներ են *(«Հոգևոր առանցք»):*

Օժանդակ ուղիների ախտորոշման տեսանկյունից՝ անոթների կապույտ լինելը վկայում է արյան կանգի մասին՝ ցավի ուղեկցությամբ, իսկ անոթների կարմրածությունը վկայում է տաքության մասին *(«Հոգևոր առանցք»):*

Երբ զինին հասնի ստամոքս, օժանդակ ուղիները կլցվեն արյունով: Միջօրեականները, սակայն, դատարկ կլինեն *(Պարզ զրույց):*

**Վեց ծայրահեղություն**
**լիույին ˜六淫**

Վեց ծայրահեղություն ասելով նկատի ունենք վեց արտածին ախտաբանական գործոններ, մասնավորապես՝ քամի, ցուրտ, ամառվա տապ, խոնավություն, չորություն և կրակ: Ընդհանրապես վեց ծայրահեղությունները սերտորեն կապված են վեց ցիի հետ, որոնք վերաբերում են բնության մեջ բնականոն կլիմայական փոփոխություններին (քամի, ցուրտ, ամառվա տապ, խոնավություն, չորություն և կրակ/ջերմություն): Բնականոն կլիմայական փոփոխությունները ախտածին չեն: Այնուամենայնիվ, երբ դրանք դառնում են արտասովոր, օրինակ՝ չափից դուրս շատ կամ չափից դուրս քիչ, անպատեհ կամ այնքան հանկարծակի ու կտրուկ, որ մարդու օրգանիզմն այլևս չի կարող հարմարվել փոփոխություններին, գլուխ են բարձրացնում հիվանդություններ: Այսպիսի դեպքերում վեց ցին կոչվում է վեց ծայրահեղություն:

Վեց ծայրահեղությունները ըստ էության պատճառագիտական մոդել է, որը սահմանվել է՝ բնության մեջ կլիմայական փոփոխությունները (քամի, ցուրտ, ամռան տապ, խոնավություն, չորություն և կրակ) և մարդու մարմնում կլինիկական դրսևորումների բնութագրերը համեմատելու միջոցով հիվանդությունների պատճառները որոշելու համար:

Դրանք վեց պատճառագիտական գործոնների սինթեզն ու ամփոփումն են՝ ըստ մարդու օրգանիզմի օրինաչափություն-ների: Սա արտածին ախտածին գործոնների համալիր ֆունկցիոնալ մոդել է, որը հիմնված է տարբեր խնդիրներին ընդհանուր ֆիզիկական արձագանքների վրա, որով կարելի է որոշել մարդու արձագանքը տարբեր իրավիճակներին:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | վեց արտածին ախտածին գործոն, վեց կլիմայական չարիք, ՎԵՑ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՐՏԱԾԻՆ ԱԽՏԱԾԻՆ ԳՈՐԾՈՆ, վեց ծայրահեղություն |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | վեց կլիմայական ծայրահեղ պայման՝ որպես ախտածին գործոն, վեց ծայրահեղություն, քամու, ցրտի, չորության, խոնավության, կրակի ու ամառվա տապի անբարենպաստ էկոլոգիական պայմաններ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | վեց ծայրահեղություն |

Մեջբերումներ 引例.

Վեց ծայրահեղություն ասելով նկատի ունենք ախտածին գործոնների վեց տեսակ, մասնավորապես՝ ցուրտ, ամռան տապ, չորություն, խոնավություն, քամի և կրակ *(Միսրաքա-նության քննարկում՝ ըստ պատճառագիտության մասին դոկտրինի):*

Երրորդ, վեց ծայրահեղությունները վերաբերում են ար-տածին ախտածին երևույթներին, մասնավորապես՝ քամի, ցուրտ, ամռան տապ, խոնավություն, չորություն և կրակ, որոնք կարող են ներխուժել մարդու օրգանիզմ և հանգեցնել հիվանդությունների *(«Քննարկում առողջության պահպան-ման մասին»):*

Նրանք, ում վրա վեց ծայրահեղությունները բացասաբար են ազդել, պետք է, նախ, կարգավորեն իրենց ցին, հետո անհատական բուժում ստանան՝ ըստ ի հայտ եկած ախտածին գործոնի *(Ցուցումներ բժիշկներին):*

**Վեց զգացմունք**
**ցիցին 七情**

Եզրույթը վերաբերում է յոթ զգացմունքային գործունեության՝ ուրախություն, զայրույթ, անհանգստություն, չափից դուրս շատ խորհրդածություն, տխրություն, վախ և երկյուղ: Դրանք զգացմունքային արձագանքներ են արտաքին գրգռիչ գործոնների հանդեպ: Մեծ մասամբ, դրանք չեն առաջացնում կամ սանձազերծում հիվանդություններ: Միայն եթե գործոնների ուժգնությունը կամ տևողությունը չափից շատ լինեն, զան-ֆու օրգանների էական ցին կվնասվի, և ի հայտ կգան գործառութային խանգարումներ: Եթե առողջ ցին պակասի, հիմնական ցին սպառվի, իսկ զգացմունքային գրգռիչների հանդեպ մարդու օրգանիզմի դիմադրողականությունը նվազի, ի հայտ կգան հիվանդություններ: Սովորաբար երկու կամ ավելի զգացմունքները միաձուլվում են՝ առաջացնելով հիվանդություններ, վնասելով հինգ զան-օրգանները, խոչընդոտելով ցի շարժումն ու հանգեցնելով այնպիսի ֆիզիոլոգիական պայմանների, որոնք հաճախ դժվարությամբ են ենթարկվում բուժման:

［曾经译法］ *հին թարգմանություն* զգացմունքի յոթ տեսակ, յոթ զգացմունք, յոթ ազդեցություն

［现行译法］ *նոր թարգմանություն* յոթ զգացմունք, յոթ ազդեցություն

［标准译法］ յոթ զգացմունք
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Յոթ զգացմունքներն են՝ ուրախություն, զայրույթ, անհանգստություն, չափից շատ խորհրդածություն, տխրություն, վախ և երկյուղ… Որպես մարդու բնութագրիչ՝ յոթ զգացմունքները ներքնածին գործոններ են և կարող են հանգեցնել հիվանդությունների: Դրանք բացասաբար են անդրադառնում մարդու առողջության վրա, եթե մնում են զանգվածաբար օրգաններում և դրսևորվում արտաքին միջավայրում *(Սիստեմատիկ քննարկում՝ պատճառագիտության դոկտրինի հիման վրա):*

Կանանց անպտղությունը կարող է լինել մագիստրալային անոթի և բեղմնավորման անոթի վնասման հետևանք, որի պատճառը վեց ծայրահեղություններն են և/կամ յոթ զգացմունքների ավելցուկը *(Կանանց հիվանդությունների արդյունավետ բաղադրատոմսերի լիակատար ժողովածու):*

Բնության մեջ կա վեց ծայրահեղություն, մասնավորապես՝ քամի, ցուրտ, ամռան տապ, խոնավություն, չորություն և կրակ, մինչդեռ մարդիկ կարող են տառապել վեց զգացմունքներից ծնված ներքին խանգարումներից, մասնավորապես՝ ուրախություն, զայրույթ, անհանգստություն, չափից շատ խորհրդածություն, տխրություն, վախ և երկյուղ *(Բացահայտելով աչքի հիվանդությունների ծագումը):*

**Առողջ ցի**
**Ժենցի 正气**

Եզրույթը վերաբերում է մարդու մարմնի կենսական նյութերի (բնահյութ, ցի, արյուն, հեղուկներ և այլն) և կառուց-

վածքների (ժան-ֆու օրգաններ, միջօրեականներ և այլն) բնականոն ֆունկցիոնալ գործունեությանը, ինչպես նաև առողջությունը պահպանելու ունակություններին, մասնավորապես՝ ինքնակարգավորում, հարմարեցում շրջապատին, դիմադրողականություն հիվանդություններին, կանխարգելում, ինքնաբուժություն և առողջացում: Առողջ ցիի առատությունը կախված է հետևյալ պայմաններից՝ 1. հյուսվածքային կառուցվածքների, զան-ֆու օրգանների, միջօրեականների և այլնի ամբողջականություն, 2. կենսական նյութերի, այդ թվում՝ բնահյութի, ցիի արյան ու հեղուկների բավականաչափ պաշար, 3. կենսագործունեության բոլոր ոլորտների բնականոն գործառույթներ և փոխազդեցություն: Բնահյութը, ցին, արյունն ու հեղուկներն ամբողջ ֆունկցիոնալ կենսագործունեության նյութական հիմքն են, և դրանց առատությունն ապահովում է հյուսվածքների ու օրգանների բնականոն գործառույթն ու համակարգումը, ինչպես նաև բարենպաստ առողջ ցին: Քանի որ բնահյութը, ցին, արյունն ու հեղուկները կարևոր գործոններ են առողջ ցիի պահպանման համար, դրանց պայմանները հաճախ դիտարկվում են որպես առողջ ցիի կարգավիճակը որոշելու կարևոր հիմք:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | առողջ ցի, կենսական ցի, իսկական ցի, ժեն ցի (սկզբնական սկզբունք), ճիշտ ցի |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | կենսական ցի, ճիշտ ցի, առողջ ցի, բնականոն ցի, մարմնի դիմադրողականություն, իսկական ցի |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | առողջ ցի |

Մեջբերումներ 引例.

Ժանտախտի հինգ տեսակների տեսանկյունից… եթե ի հայտ են գալիս ժանտախտի հինգ տեսակները, և չկա

վարակ, պատճառն այն է, որ առողջ ցին մարմնի մեջ առատ է, իսկ ախտածին ցին ներթափանցելու տարբերակ չունի *(«Պարզ զրույց»):*

Սրտի բաբախյունի դրսևորումները նույնն են ցունում (寸), գուանում (关) և չիում (尺)՝ ճառագայթային զարկերակի երեք վերին հատվածներում. սա վկայում է այն մասին, որ առողջ ցին ներդաշնակ է: Նման դեպքերում, թեև ախտածին գործոնները չեն բացառվում, ինչպիսի՞ն կլինի վնասը *(«Քննախուզություն ցրտահարության վնասների մասին. ծանոթագրված»):*

Ախտածին քամին ու ցուրտը ներխուժում են մարմին զան-ֆու օրգանների թուլության հետևանքով՝ առողջ ցիի ու ախտածին ցիի միջև պայքար առաջացնելով, ինչը հանգեցնում է որովայնի ցավի *(«Քննախուզություն զանազան հիվանդությունների ծագման և դրսևորումների մասին»):*

**Ախտածին ցի**
**սիեցի 邪气**

Եզրույթը վերաբերում է բոլոր տեսակի ախտածին գործոններին, ներառյալ նրանց, որոնք գոյություն ունեն արտաքին միջավայրում և մարմնի ներսում: Օրինակ, վեց ծայրահեղություն, վնասակար ցի, յոթ զգացմունքների ավելցուկ, սննդակարգի խանգարումներ, ֆիզիկական վարժությունների պակաս կամ չափազանց շատ աշխատանք, տրավմաներ, միջատների խայթոցներ կամ կենդանիների կողմից վնասվածքներ, մակաբույծներ, խոնավություն, խորխի կանգ, ստատիկ արյուն և քարեր: Ախտածին ցին կարող է վնասել մարդու մարմինը հետևյալ կերպ. 1. ֆիզիկական խանգարումներ, որոնք հանգեցնում են ին-յան անհավասարակշռության, զան-ֆու օրգանների ու միջօրեականների

գործառութային խանգարումների և բնահյութի, ցիի, արյան ու հեղուկների նյութափոխանակության ու գործառութային խանգարումների, 2. զան-ֆու օրգանների և հյուսվածքների ամբողջականության խախտում, 3. անհատի ներքին սահմանադրության, հիվանդությունների հանդեպ նախատրամադրվածության փոփոխություն և 4. հիվանդությունների հանդեպ մարմնի դիմադրողականության և ինքնաբուժության ունակության թուլացում:

| | |
|---|---|
| ［曾经译法］<br>*հին թարգմանություն* | ախտածին գործոններ, չարիքներ, ԱԽՏԱԾԻՆ ՑԻ, սիե (չարիք) ցի, չար ցի |
| ［现行译法］<br>*նոր թարգմանություն* | ախտածին գործոններ, չար ցի, ախտածին գործոն, ախտածին, չար ցի |
| ［标准译法］<br>*ստանդարտ թարգմանություն* | ախտածին ցի |

Մեջբերումներ 引例.

Երբ ախտածին ցին հարձակվում է մաշկի ու մազերի վրա, ներթափանցում է թոք, որին վերաբերում են մաշկն ու մազերը *(«Պարզ զրույց»):*

Հիվանդության առաջացումը բնածին չէ, այն ախտածին ցիի հետևանք է, որն առաջանում է արտաքին հարձակման կամ ներքին ձևափոխության հետևանքով *(«Կոնֆուցիականների պարտքն իրենց ծնողներին»):*

Եթե սրտի բաբախյունի դրսևորումները համապատասխանում են տարվա չորս եղանակներին, սա վկայում է մարմնում առողջ ցիի առատության մասին: Չնայած ախտածին ցիի ներխուժմանը՝ ախտածին գործոններից կարելի

է ազատվել թեթև ու ինքնաբուխ քրտնարտադրության միջոցով *(«Քննախուսություն ցրտահարության վնասների մասին. ծանոթագրված»):*

**Ցասումը բարձրացնում է ցին**
**նու ցե ցիշան 怒则气上**

Ցասումը հանգեցնում է լյարդի ցիի կամ արյան հակառակ հոսքի և ցին ու արյունը հասցնում է վեր: Լյարդը մի օրգան է, որը պատկանում է քամուն և փայտին, պահպանում է շոշափելի արյունն ու խթանում անշոշափելի ցիի հոսքը: Զայրույթը զգացմունք է, որն ասոցացվում է լյարդի հետ: Տևական ավելորդ զայրույթը հանգեցնում է նրան, որ չափազանց շատ լյարդի ցի է ցրվում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է լյարդի ցիի կամ նույնիսկ արյան վերընթաց հակահոսքին: Կլինիկական դրսևորումներից են ճնշող գլխացավը, դեմքի ու աչքերի կարմրությունը, գրգռվածությունը, նյարդային վիճակը և նույնիսկ արյունային փսխումը կամ գլխապտույտը: Տևական ճնշվածությունն ու զայրույթը կարող են հանգեցնել նրան, որ լյարդը չկարողանա ցրել ցին, հանգեցնել լյարդի ցիի կանգի, որին բնորոշ է ճնշող ցավը կրծքավանդակում, կրծքում ու որովայնի ստորին մասում, ինչպես նաև խոր հոգոցներին և այլն: Եթե լյարդի ցին թափանցում է փայծաղ, կարող են ի հայտ գալ որովայնի ցավ և փորլուծություն:

［曾经译法］ *հին բարգմանություն* Ցասումը լյարդի Ցին (կենսական էներգիա) բարձրացնում է վեր, ցիի վերելքին հանգեցնող ցասում, ՑԱՍՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԿԵՆՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈՉ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ: Ցասումը հանգեցնում է նրան, որ (լյարդի) ցին հակահոսի վեր, կենսական էներգիայի ոչ բնականոն

ավելացում զայրույթի պատճառով: Ցասումը կարող է հանգեցնել կենսական էներգիայի բնականոն ավելացման: Զայրույթը հանգեցնում է լյարդի-ցիի հակահոսքի:

［现行译法］ *նոր թարգմանություն*

ցասման պատճառով լյարդի-ցիի հակահոսք, ցասումը ցին տանում է վեր, ցասումը հանգեցնում է նրան, որ լյարդի ցին հոսի դեպի վեր, ցասումը ստիպում է, որ ցին բարձրանա: Ցասումը ստիպում է ցիին բարձրանալ, ցիի վերելքին հանգեցնող ցասում: Ցասումը ցին տանում է վեր:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն*

Ցասումը ցին տանում է վերև:

Մեջբերումներ 引例.

Ցասումը բարձրացնում է ցին… Չափազանց շատ զայրույթը հանգեցնում է ցիի հակահոսքի կամ նույնիսկ արյունային փսխման և սունսիեի (փորլուծություն չմարսված սննդից): Հետևաբար, «ցին հոսում է վեր» *(«Պարզ զրույց»):*

Ցասումը խանգարում է յան ցիին և ցին ու արյունն ուղարկում վեր՝ գլխում լճանալու, ինչն ի վերջո հանգեցնում է գլխապտույտի *(«Պարզ զրույց»):*

Լինելով բռնկուն ու ուղղամիտ՝ մարդկանց այս տեսակը հակված է հեշտ ու արագ բարկանալ: Երբ նրանք զայրանան, ցիի հակահոսքը կգնա վեր ու կկուտակվի կրծքավանդակում՝ հանգեցնելով ցիի ու արյան անհամաչափ հոսքի *(«Հոգևոր առանցք»):*

## Չափազանց շատ մտածելը խոչընդոտում է ցիին սի ցե ցիջիե 思则气结

Չափից շատ մտածելը կարող է հանգեցնել ցիի անհամաչափ հոսքի: Միտքը կամ մտածողությունը զգացմունք է, որն ասոցացվում է փայծաղի հետ: Չափազանց շատ մտածելը հանգեցնում է փայծաղում և ստամոքսում ցիի լճացման, ցիի ոչ համարժեք վերելքի ու վայրէջքի, փոխադրման և ձևափոխման խախտման: Դրա դրսևորումներն են վատ ախորժակը, որովայնի փքվածությունը և փորլուծությունը: Ժամանակի ընթացքում սա կհանգեցնի ոչ բավարար քանակով ցիի ու արյան արտադրության, ինչը դրսևորվում է գլխապտույտի, հոգնածության, մկանների հյուծման և այլնի տեսքով: Բացի այդ, չափազանց շատ մտածելը կարող է սպառել սրտի արյունը, սիրտը զրկել սնուցումից և առաջ բերել այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են սրտի բաբախյունը, անքնությունն ու քնի խանգարումը երազների պատճառով:

［曾经译法］ *հին թարգմանություն*

Մտավոր անհանգստությունը ճնշում է փայծաղի ցին (կենսական էներգիա), ցիի լճացում առաջացնող անհանգստություն, ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ ԿԵՆՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԼՃԱՑՄԱՆ, անհանգստությունը ճնշում է (փայծաղի) ցին: Անհանգստությունը ճնշում է ցին, ցին ճնշող անհանգստություն: Չափից շատ մտածելը կարող է հանգեցնել կենսական էներգիայի ճնշման, կենսական էներգիայի ճնշում չափազանց շատ մտածելու հետևանքով: Ցին ճնշող անհանգստություն: Անհանգստությունը ճնշում է ցին: Անհանգստությունը հանգեցնում է ցիի լճացման:

［现行译法］ *նոր թարգմանություն* ցին ճնշող անհանգստություն, ցիի լճացման հանգեցնող անհանգստություն: Անհանգստությունը ճնշում է ցին: Միտքն արգելակում է ցին: Մտածկոտություն, որը հանգեցնում է ցիի լճացման, ցիի լճացում ստեղծող մտածկոտություն:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Չափից շատ մտածելը խոչընդոտում է ցին:

Մեջբերումներ 引例.

Չափազանց շատ մտածելը խոչընդոտում է ցին … Ավելորդ մտածմունքները հանգեցնում են կոնկրետ խնդրի վրա մտքի ու հոգու կենտրոնացման, ուստի առողջ ցին հետ է մնում ու պատշաճ կերպով չի շրջանառվում: Հետևաբար, «ցին խոչընդոտվում է» *(«Պարզ զրույց»):*

Չափից շատ մտածելը խոչընդոտում է ցին: Ցին լճանում է սրտում, իսկ դա կարող է ազդել փայծաղի վրա *(Ջինյուեի երկերի լիակատար ժողովածու):*

**Ավելորդ ուրախությունը թուլացնում է ցին**
**սի ցե ցիհուան 喜则气缓**

Չափազանց շատ ուրախությունը թուլացնում է սիրտը: Ուրախությունը սրտի հետ կապված զգացմունք է, զգացմունքային արձագանքի օգտակար տեսակ: Չափավոր ուրախությունը կարող է կարգավորել ցիի ու արյան հոսքը, վերացնել խոչընդոտները սնդարար ցիի ու պաշտպանության ցիի ճանապարհին և պահպանել մտքի թեթևությունն ու հանդարտ տրամադրությունը՝ հանելով մտավոր լարվածությունը: Սակայն ավելորդ ուրախությունը կարող է հեշ-

տությամբ թուլացնել սրտի ցին: Բարդ դեպքերում կարող են ի հայտ գալ սրտի ցիի կոլապս, ցրվածություն, անհանգստություն, ուշադրության բացակայություն, անքնություն և նույնիսկ հիստերիկ ծիծաղ, անհողաբաշխ խոսք և վարքի ոչ բնականոն այլ դրսևորումներ: Ինչպես նշված է «Հոգևոր առանցք» գրքի «Ոգու հիմնական վիճակ» բաժնում, «Չափից շատ ուրախությունն ու երջանկությունը հանգեցնում են նրան, որ սրտի ցին ցրվում է, իսկ հոգին այլևս չի պահպանվում»:

［曾经译法］ *հին թարգմանություն*

ցիի թուլացմանը նպաստող ուրախություն: Չափազանց շատ ուրախությունը կարող է թուլացնել կենսական էներգիան: ՉԱՓԻՑ ԴՈՒՐՍ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒԼԱՑՆՈՒՄ Է (ՍՐՏԻ) ՑԻՆ: Ավելորդ ուրախությունը կարող է հանգեցնել կենսական էներգիայի թուլացման: Ուրախությունը հանգեցնում է ցիի թուլացման, ցիի թուլացմանը հանգեցնող ուրախություն, ավելորդ ուրախությունը հանգեցնում է ցիի հանգստի: Չափից շատ ուրախությունը հանգեցնում է ցիի վայրէջքի:

［现行译法］ *նոր թարգմանություն*

չափազանց շատ ուրախությունը հանգստացնում է ցին, ավելորդ ուրախությունը հանգեցնում է ցիի հանգստի, (սրտի) ցին հանգստանում է ավելորդ ցիից: Ուրախությունը թուլացնում է ցին, չափից դուրս շատ ուրախությունը հանգեցնում է ցիի թուլացման: Չափազանց շատ ուրախությունը  հանգեցնում է սրտի ցիի թուլացման:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն*

Չափից շատ ուրախությունը թուլացնում է ցին:

Մեջբերումներ引例.

Չափազանց շատ ուրախությունը թուլացնում է ցին… Չափավոր ուրախությունն ու երջանկությունը հանգեցնում են ցիի ներդաշնակության, մտքի թեթևության և սննդարար ու պաշտպանական ցիի հարթ հոսքի: Չափազանց շատ ուրախությունը, սակայն, թուլացնում ու ցրում է ցին *(«Պարզ զրույց»):*

Ուրախությունն ու երջանկությունը ներդաշնակեցնում ու կարգավորում են ցին ու կամքը, որպեսզի հիվանդություն ի հայտ չգա: Սակայն չափազանց շատ ուրախությունը կտտիպի, որ սրտի ցին ցրվի ու չմնա ներսում՝ առաջացնելով հիստերիկ ծիծաղ ու սեղմվելու անկարողություն: Բարդ դեպքերում կարող են ի հայտ գալ մոլագարության նշաններ *(«Բժշկության անկյունաքարեր»):*

Սիրտը պահպանում է հոգին, զգացմունքներից համապատասխանում է ուրախությանը: Ավելորդ ուրախությունը թուլացնում է սրտի ցին ու ցրում այն, ուստի կարող է ի հայտ գալ սրտի ցիի անբավարարություն ու մտքի կորուստ: Խորհուրդ է տրվում թթու սնունդ ընդունել սրտի ցին ձգելու համար *(Բարեփոխված «Մատերիա մեդիկա»):*

## Ավելորդ թախիծն ուժասպառ է անում ցին
## բեյ ցե ցիսիաո 悲则气消

Ավելորդ թախիծը սպառում է թոքի ցին, որովհետև տխրությունը թոքի հետ կապված զգացմունք է: Չափազանց շատ տխրությունը ցրում է առողջ ցին, հատկապես թոքի ցին, ինչը հանգեցնում է վեր ելնելու, ցրելու, զտման ու իջնելու գործառույթի խանգարման: Կլինիկական դրսևորումներից են հևոցը, խոսելու ցանկության բացակայությունը, ցածր

ճայնն ու թույլ շնչառությունը, թուլությունը, ուժի պակասը, ընկճվածությունը, հարբուխային հիվանդությունների հակումը և այլն:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ցին ցրող ավելորդ թախիծ: Թախիծը կարող է հանգեցնել կենսական էներգիայի սպառման: ԹԱԽԻԾԸ ՍՊԱՌՈՒՄ Է (ԹՈՔԻ) ՑԻՆ, չափազանց շատ թախիծ, որը ցրում է ցին: Ավելորդ թախիծը հանգեցնում է ցիի սպառման: Տխրությունը կարող է հանգեցնել կենսական էներգիայի սպառման, չափազանց շատ տխրությունը հանգեցնում է ցիի սպառման: Ավելորդ տխրությունը հանգեցնում է ցիի սպառման: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | չափազանց շատ տխրություն, որը հանգեցնում է ցիի սպառման, ցիի սպառում վշտի պատճառով: Վիշտը սպառում է ցին: Ավելորդ տխրությունը հանգեցնում է ցիի սպառման: Տխրությունը ցրում է ցին, ցիի սպառմանը հանգեցնող տխրություն, թոքի ցիի սպառում չափից շատ տխրելու պատճառով: |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Ավելորդ թախիծը սպառում է ցին: |

Մեջբերումներ 引例.

Թախիծը կարող է հյուծել ցին… Չափից շատ թախիծը կարող է հանգեցնել սրտի կծկման և թոքի ընդլայնման՝ հանգեցնելով նրան, որ էներգիայի վերին աղբյուրը ցրի ցին, իսկ սննդարար ցին ու պաշտպանության ցին չկարողանան բաշխվել: Հետևաբար, ցին զսպվում է ու վերածվում ջերմության, իսկ ներսում տաք ցին վնասում է առողջ ցին, այստեղից էլ առաջացել է «ցին հյուծվում է» արտահայտությունը *(«Պարզ զրույց»):*

Չափից շատ թախիծը հյուծում է ցին, ինչն էլ հանգեցնում է դատարկ բաքախյունի *(«Անեղնաքուժության հիմունքներ»):*

Չափից շատ թախիծը հյուծում է ցին: Երբ հիասթափությունը ճնշի մարդու կամքն ու մտադրությունները, մարդը ճնշված կզգա, ու ցին նույնպես կցրվի *(Բժշկության անկյունաքարեր):*

**Ավելորդ վախը թուլացնում է ցին**
**կուն ցե ցիսիա** 恐则气下

Ավելորդ վախը կարող է հանգեցնել անվստահության և երիկամի ցիի թուլացման, որովհետև վախը զգացմունք է, որը կապված է երիկամի հետ: Անակնկալ վախը կամ մշտական երկյուղը կարող է վնասել երիկամը՝ երիկամի հոսքն ուղղելով դեպի ներքև: Այն դառնում է ոչ հաստատուն, կարող է հանգեցնել էական ցիի թուլացման և հյուծման: Կլինիկական դրսևորումները ներառում են անմիզապահություն և անկղապահություն, սերմնաժայթքում, դաշտանային ցիկլի խանգարումներ կամ լեյկորեա: Էական ցիի կորստի արդյունքում կարող են ի հայտ գալ ցավային զգացողություններ և թուլություն մեջքի ստորին հատվածում ու ծնկներում, ոտքերի թուլություն և այլ ախտանիշներ:

［曾经译法］ *հին թարգմանություն* Վախը թուլացնում է երիկամի ցին (կենսական էներգիա), ցիի անկմանը հանգեցնող վախ, ՍԱՐՍԱՓԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ ԿԵՆՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓԼՈՒԶՄԱՆ, վախը թուլացնում է (երիկամի) ցին: Վախը հանգեցնում է ցիի վայրէջքին: Վախը թուլացնում է ցին: Սարսափը

կարող է հանգեցնել կենսական էներգիայի ոչ սովորական անկման: Վախը հանգեցնում է ցիի սուզման: Վախը հանգեցնում է երիկամի-ցիի թուլացման:

［现行译法］ *նոր թարգմանություն* Ցիի թուլացմանը հանգեցնող վախ, վախը թուլացնում է ցին: Սարսափը կարող է հանգեցնել ցիի թուլացման, ցիի թուլացմանը հանգեցնող վախ: Վախը հանգեցնում է ցիի թուլացման:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Ավելորդ վախը ցին տանում է ներքև:

Մեջբերումներ 引例.

Չափից շատ վախը թուլացնում է ցին ... Չափից շատ վախը կարող է հանգեցնել հիմնական ցիի նվազման՝ բերելով նրան, որ երիկամն այլևս չի կարողանում համակարգել սիրտն ու թոքը, էներգիայի վերին աղբյուրի ցին արգելափակվում է, ցին վերադառնում է, իսկ էներգիայի ստորին աղբյուրը՝ լարվում: Հետևաբար, «ցին թուլանում է» *(«Պարզ գրույց»):*

Չափազանց շատ վախն առանց թեթևացման կվնասի բնահյութը, իսկ բնահյութի վնասումը կհանգեցնի ոսկորների ցավի ու թուլության, ընկճվածության ու գլխապտույտների և մեծամասամբ ուղեկցվում են սովորական սերմնաժայթքումով *(«Հոգևոր առանցք»):*

Ավելորդ ահը հանգեցնում է ցիի խանգարման, իսկ ավելորդ վախը՝ ցիի նվազման: Լյարդն ու երիկամն անխուսափելիորեն կվնասվեն *(«Չինյուեի երկերի լիակատար ժողովածու»):*

**Ավելորդ վախը խափանում է ցին**
**ծին ցե ցիլուան 惊则气乱**

Հանկարծակի վախը կամ ահը կարող է հանգեցնել սրտի ցիի խանգարման, ինչն էլ հետագայում բերում է ցիի ու արյան աններդաշնակության: Վախը մարդու արձագանքն է անակնկալ իրադարձության, օրինակ, ինչ-որ արտասովոր երևույթի ականատես լինելու կամ հանկարծակի վախի դեպքում: Սա պաշտպանական հոգեբանական մեխանիզմ է, որի օգնությամբ մարդիկ արձագանքում են բացասական արտաքին ազդակներին: Վախը կարող է հանգեցնել ցի շարժման, ցիի հոսքի խանգարման և ոչ սովորական մտավոր վիճակների: Կլինիկական դրսևորումներն են՝ սրտի ուժգին բաբախյունը, անհանգստությունը, տագնապը, անքնությունը և հեշտ վախենալու սովորությունը: Որոշ հիվանդներ նույնիսկ կարող են ունենալ մոլագարներին հատուկ ախտանիշներ, ինչպիսիք են անհոդաբաշխ խոսքը, ֆանատիկ լացն ու ծիծաղը, զառանցանքն ու հուզմունքը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Ցիի խանգարման հանգեցնող վախ: Սարսափը կարող է հանգեցնել կենսական էներգիայի խանգարումների, ՎԱԽԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՑԻԻ ԽԱՆԳԱՐՄԱՆ: Ավելորդ վախը հանգեցնում է ցիի խանգարումների: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ցիի հոսքի խախտում վախի պատճառով, ցին անհանգստացնող վախ, վախ, որը խանգարում է ցին, ցիի խանգարում առաջացնող վախ, ցիի խանգարում սարսափի պատճառով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Ավելորդ վախը խախտում է ցին: |

Մեջբերումներ 引例.

Ավելորդ վախը հանգեցնում է ցիի խանգարման… Անակնկալ վախը կամ ահը հանգեցնում է սրտի ուժգին բաբախյունի, մտավոր շեղման և հապաղման: Հետևաբար, ցին խախտված է *(«Պարզ զրույց»):*

Փորլուծություն լինում է, երբ սիրտը վախենում է: Վախը հանգեցնում է ցիի խանգարման, ինչն էլ իր հերթին՝ սրտի ցիի օբստրուկցիայի և ջրային հեղուկների ներքին հոսքի դեպի աղիքներ, ինչը հետագայում բերում է փորլուծության *(«Ախտանիշներ, պատճառներ, բաբախյուն և բուժումներ»):*

Վախն առաջանում է արտաքին ազդակներից: Այն կարող է հանգեցնել ցիի խանգարման: Հետևաբար, հիվանդի սրտի զարկն անհանգիստ է *(«Ոսկե խցի հիմնական դեղատոմսերի ընդարձակ ծանոթագրություններ»):*

## Ավելորդ ցուրտը հանգեցնում է ցիի կրճատումներին հան ցե ցիշոու 寒则气收

Ախտածին ցուրտը ներխուժում է մարմին ու հանգեցնում ցիի կրճատման, ինչի արդյունքում ի հայտ է գալիս ճեղքերի, միջօրեականների, ջլերի ու անոթների կրճատում և սպազմ: Մրսածության գործնով պայմանավորված հիվանդություններին բնորոշ են կրճատումներ: Երբ ախտածին ցուրտը ներխուժում է մաշկի ու մկանների մակերես, փակում է ծակոտիներն ու մկանային միջանկյալ տարածությունները՝ այդպիսով կանխելով պաշտպանիչ յանի ցրումը: Կլինիկական դրսևորումներից են ցրտի հանդեպ հակակրանքը, տենդը և քրտինքի բացակայությունը: Երբ ցուրտը ներխուժի արյունատար անոթներ, կարող է տեղի ունենալ ցիի ու արյան լճացում և արյունատար անոթների սպազմ, ինչը դրսևորվում է գլխացավի, մարմնի ցավի տեսքով ու սրտի

լարված բաբախյունով: Երբ ցուրտը ներխուժում է միջօրեականներ և հոդեր, կարող է առաջանալ հոդերի կրճատում և սպազմ, որը դրսևորվում է ծալվելու և ձգվելու անկարողությամբ, վերջույթների սառնությամբ ու թմրածությամբ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Ցուրտը հանգեցնում է կծկումների: Ցուրտը թուլացնում է էներգիան: ՑՈՒՐՏԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԿՐՃԱՏՄԱՆ/ԿԾԿՄԱՆ |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | Ցուրտը թուլացնում է յան-ցին, ցուրտը փոքրացնում է ցին, ցին կրճատող ցուրտ, ցուրտը սեղմում է ցին, ցուրտը կրճատում է ցին |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Ավելորդ ցուրտը կրճատում է ցին: |

Մեջբերումներ 引例.

Չափից շատ ցուրտը հանգեցնում է ցիի կրճատման… Ավելորդ ցուրտը հանգեցնում է մկանային միջանկյալ տարածությունների փակման և դժվարացնում է ցիի հոսքը: Հետևաբար, «ցին կրճատվում է» *(«Պարզ զրույց»):*

Ավելորդ ցրտի պատճառով ի հայտ է գալիս հետևյալ ախտաբանական պատկերը. երբ մարդու մարմինը ենթարկվում է ախտածին ցրտի, մկանային միջանկյալ տարածությունը փակվում է, իսկ պաշտպանիչ ցին չի կարողանում հասնել մարմնի մակերես: Արդյունքում զան-ֆու օրգանների ցին չի սեղմվում ներսում *(«Պարզ զրույցի ծանոթագրություններ և մեկնաբանություններ Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

Չափից շատ ցուրտը կրճատում է ցին: Բուժման համար անհրաժեշտ է օգտագործել սուր խոտաբույսեր՝ ցին ցրելու, և քաղցր դեղամիջոցներ՝ վիճակը թեթևացնելու համար *(«Նեֆրիտի առանցքի» մանրամասն բացատրություն):*

### Ավելորդ ջերմությունը հանգեցնում է ցիի լիցքաթափման ջյուն ցե ցիսիե 炅则气泄

Ախտածին ամառային ջերմությունը կարող է հանգեցնել մկանային միջանկյալ տարածությունների բացմանն ու առողջ ցիի լիցքաթափմանը: Ախտածին ամառային տապը, որին հատուկ է բարձրացումն ու ցրումը, հանգեցնում է նրան, որ մարմնի հեղուկները դուրս են գալիս բաց ծակոտիներից: Հեղուկների կորստին զուգահեռ ցին նույնպես լիցքաթափվում է, քանի որ հեղուկների մեջ կա ցի: Կլինիկական տեսանկյունից, սա կարող է դրսևորվել որպես հեղուկի սպառում և ցիի անբավարարություն: Առաջինը ներառում է ծարավ, խմելու բուռն ցանկություն և քիչ քանակով մուգ մեզի առկայություն, իսկ երկրորդը՝ հևոց և հոգնածություն: Ծայրահեղ դեպքերում, երբ ցին ու հեղուկները սպառվում են, թափանցիկ ճեղքերի սնուցման բացակայության հետևանքով կարող են ի հայտ գալ անսպասելի ուշագնացություն և գիտակցության կորուստ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | կենսական էներգիայի սպառմանը հանգեցնող տենդ, տաքությունը հանգեցնում է ցիի լիցքաթափման |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ՏԱՔՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՈՒՄ Է ԿԵՆՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՆ: Տաքությունը հանգեցնում է ցիի լիցքաթափման: Տաքությունը ցրում է ցին, յանի սկզբունքի ցրմանը հանգեցնող տենդ, չափից շատ տապը հանգեցնում է ցիի արտահոսքի |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Չափից շատ տաքությունը հանգեցնում է ցիի արտահոսքի: |

Մեջբերումներ 引例.

Չափազանց շատ ջերմությունը հանգեցնում է ցիի արտահոսքին… Խիստ ամառային տապը բացում է մկանային միջանկյալ տարածությունները, ապահովում սննդարար ցիի ու պաշտպանիչ ցիի սահուն արտահոսքն ու հանգեցնում առատ քրտնարտադրության: Ցին արտահոսում է քրտինքի հետ, այստեղից էլ՝ «ցին արտահոսում է» արտահայտությունը *(«Պարզ զրույց»):*

Չափից շատ շոգը հանգեցնում է ցիի արտահոսքի: Այժմ ախտածին ամառային տապը ներխուժում է պաշտպանիչ ցի, և կարող են ի հայտ գալ տենդ և ինքնաբուխ քրտնարտադրություն: Որպես միապետ-դեղամիջոց՝ հարկ է օգտագործել քաղցր-տաք հուանցին (աստղածաղկի արմատ), որը լրացնում է ցին *(Քննախուսություն փայծաղի և ստամոքսի վերաբերյալ):*

## Գերլարումը սպառում է ցին լաո ցե ցիհաո 劳则气耗

Գերլարումը սովորաբար հանգեցնում է առողջ ցիի սպառման: Գերլարվածությունը հանգեցնում է ծայրահեղ հևոցի ու քրտնարտադրության: Չափազանց շատ հևոցը սպառում է թոքերի ցին, իսկ չափից շատ քրտնարտադրությունը կարող է հանգեցնել առողջ ցիի նվազման, քանի որ ցին հեղուկների հետ կարող է լիցքաթափվել: Այսպիսով, զարգանում է սննդարար ցիի, հատկապես թոքի ու փայծաղի ցիի սպառում: Կլինիկական տեսանկյունից հաճախ դրսևորվում է հևոց, չխոսելու ցանկություն, ուժասպառություն, ուժերի հյուծում և վերջույթների ուժասպառություն:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | գերլարումը կարող է հանգեցնել կենսական էներգիայի սպառման, ցիի սպառմանը հանգեցնող գերլարում |
| [现行译法] *նոր թարգմանություն* | ԳԵՐԼԱՐՈՒՄ, ՈՐԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՑԻԻ ՀՅՈՒԾՄԱՆ, լարվածությունը սպառում է ցին, գերլարվածությունը հանգեցնում է ցիի սպառման, գերլարումը հանգեցնում է ցիի սպառման, գերլարվածությունը հանգեցնում է ցիի կորստի, ցիի հյուծում ծայրահեղ հոգնածության պատճառով |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Գերլարումը սպառում է ցին: |

Մեջբերումներ 引例.

Գերլարումը սպառում է ցին… Այն հանգեցնում է հևոցի, քրտնարտադրության և առողջ ցիի արտահոսքին մարդու մարմնի ներսում և դրանից դուրս: Հետևաբար, «ցին սպառվում է» *(«Պարզ զրույց»):*

Գերլարումը հանգեցնում է ցիի սպառման, և պատճառն այն է, որ գերլարումը խախտում է ցիի շարժումն ու հանգեցնում հևոցի ու քրտնարտադրության: Հևոցի հետևանքով ցին ցրվում է ներսում, իսկ քրտնարտադրության հետևանքով՝ դրսում: Արդյունքում ցին սպառվում ու ցրվում է *(«Պարզ զրույցի» ծանոթագրություններ և մեկնաբանություններ «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

Հնարավոր է, որ գերլարումը հանգեցնի ցիի սպառման: Այդ դեպքում թոքի ցին կվնասվի, ինչը կհանգեցնի ձայնի խռպոտության *(«Շիշանի դեպքի արձանագրություն»):*

## Ախտածին ցիի և առողջ ցիի առատություն և հյուծում սիեջեն շենշուայ 邪正盛衰

Եզրույթը վերաբերում է առողջ ցիի և ախտածին ցիի ուժի փոփոխությանը, այն է՝ պայքարի մեջ, հիվանդությունների զարգացման ընթացքում առատությանը և թուլացմանը: Առողջ ցին կարող է վնասվել, երբ ախտածին ցին ներխուժի մարմին, բայց մյուս կողմից, առողջ ցին կարող է պաշտպանել և վանել ախտածին գործոնները: Պայքարի միտումն ու արդյունքը ոչ միայն հիվանդությունների ծագումը որոշելն է, այլև վիճակի զարգացման, կանխատեսման և ավելցուկի կամ անբավարարության վրա ազդելը: Եթե թե՛ առողջ, թե՛ ախտածին ցին առատ են, պայքարը կլինի կատաղի, և հիմնականում ի հայտ կգա ավելցուկ: Եթե թե՛ առողջ ցին, թե՛ ախտածին ցին թուլացած են, մեծ մասամբ ի հայտ կգա անբավարարություն: Եթե ախտածին ցին առատ է, իսկ առողջ ցին՝ թուլացած, մեծ մասամբ կարող են ի հայտ գալ անբավարարության և ավելցուկի համալիր տարբերակներ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին բարգմանություն* | չարի և բարու բարգավաճում և նվազում, Չարի և կենսական ցիի ավելցուկ և թուլություն, ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԱԶՈՒՄ |
| ［现行译法］ *նոր բարգմանություն* | ախտածին գործոնների և առողջ ցիի առատություն և նվազում, գերակայություն և նվազում, ավելցուկ և նվազում, առատություն և հյուծում |
| ［标准译法］ *ստանդարտ բարգմանություն* | ախտածին ցիի և առողջ ցիի առատություն և հյուծում |

Մեջբերումներ 引例.

Նույնիսկ ավելցուկային մոդելի դեպքում չի կարելի չարաշահել ուժեղ ազդեցությամբ դեղամիջոցները, առավել ևս չի կարելի այն դեպքերում, երբ առկա է անբավարարու-

թյան մոդել: Սա կուտակումների բուժման պատկերացումներից մեկն է: Առողջ ցիի և ախտածին ցիի ավելցուկն ու նվազումը պետք է մանրամասն գնահատել *(«Չիյունի երկերի լիակատար ժողովածու»):*

Բուժումը սկսելուց առաջ հարկ է գնահատել հինգ տարրերի առաջացումը, զսպումը, գերզսպումն ու հակազսպումը, ինչպես նաև սրտի բաբախյունի դրսևորումներն ախտածին ցիի ու առողջ ցիի ավելցուկի և նվազման տեսանկյունից *(«Ցրտահարության դեպքերի ժողովածու»):*

Եթե մարդն ի վիճակի չէ հասկանալ տարվա գերակշռող ցիի փոփոխությունները և դիտարկում է միայն այն հարցը, թե արդյոք ցուրտ է թե տաք, նա չի կարող տարբերակել ախտածին ցիի ու առողջ ցիի առատությունն ու թուլացումը *(«Սահմանված բանաձևերի արդյունավետ օգտագործում»):*

**Կեղծ անբավարարություն՝ իրական ավելցուկ**
**ժենշի ճիասու 真实假虚**

Եզրույթը վերաբերում է կլինիկական վիճակին, երբ հիվանդությունը դրսևորում է այս կամ այն երևույթի առատություն, բայց իրականում կա թաքնված անբավարարություն: Դրա պատճառը հիպերակտիվ ախտածին ցիի ներքին կուտակումն է, որն արգելափակում է միջօրեականներն ու թույլ չի տալիս, որ ցին ու արյունը դուրս գան: Օրինաչափությունը նաև հայտնի է «անբավարարության դրսևորումների առաջացում ծայրահեղ առատության մեջ» անվանմամբ: Օրինակ, ջերմային կուտակումների դեպքում ավելցուկային ջերմության ախտանիշները կարող են դրսևորվել փորկապության, որովայնի ցավի՝ ճզվածության և լցվածության զգացումով, կամ նույնիսկ զառանցանքի տեսքով: Մյուս կողմից, քանի որ յան ցին արգելափակված է ներսում և ի վիճակի չէ ցրվելու, կարող են ի հայտ գալ կեղծ անբավա-

բարության ախտանիշներ, ինչպիսիք են դեմքի գունատությունը, վերջույթների սառնությունն ու հոգնածությունը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ասթենիայի համախտանիշ արտաքինից, բայց սթենիայի համախտանիշ՝ ըստ բնույթի, ավելցուկի համախտանիշ՝ կեղծ անբավարարությամբ, ԻՐԱԿԱՆ ԱՎԵԼ-ՑՈՒԿ՝ ԿԵՂԾ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ավելցուկային տիպի համախտանիշ՝ կեղծ անբավարարության ախտանիշներով, սթենիայի համախտանիշ՝ կեղծ ասթենիայի աշխտանիշներով, իրական սթենիայի և կեղծ սթենիայի համախտանիշ, իրական ավելցուկի և կեղծ անբավարարության համախտանիշ, ավելցուկի համախտանիշ՝ կեղծ անբավարարության ախտանիշներով, իսկական ավելցուկ՝ կեղծ անբավարա-րությամբ, ավելցուկի համախտանիշ՝ կեղծ անվաբարարությամբ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | իսկական ավելցուկ՝ կեղծ անբավարարությամբ |

Մեջբերումներ 引例.

Մարդը չի կարող վստահաբար ասել, որ կեղծ անբավարարությամբ իրական ավելցուկի դրսևորումներ գոյություն չունեն: Օրինակ, ներքնածին-ախտածին ցուրտը կամ սննդի կուտակումը հանգեցնում է ցիի լճացման և սրտի ու որովայնի սուր ցավի՝ թաքնված, ընդհատ-ընդհատ կամ թելանման բաբախյունով: Պատճառն այն է, որ ախտածին ցին արգելակում է միջօրեականները: Չնայած բաբախյունի դրսևորումները սովորաբար վկայում են անբավարարության մասին, պետք է լինեն ավելցուկային այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ցավն ու որովայնի փքվածությունը: Սա կեղծ

անբավարարության օրինաչափ դրսևորում է *(Չինյունի երկերի լիակատար ժողովածու):*

Չի կարելի վստահ լինել, որ կեղծ անբավարարությամբ իսկական ավելցուկի դրսևորումների օրինաչափություն գոյություն չունի: Եթե թեթև հիվանդությունները պետք է բուժել ախտանիշների համաձայն, ապա լուրջ հիվանդությունները պետք է բուժել ըստ սրտի բաբախյունի դրսևորումների: Սա հարմար մեթոդ է *(«Սրտազարկի մեկնաբանություն»):*

### Իրական անբավարարություն՝ կեղծ ավելցուկ
### ժենսու ջիաշի 真虚假实

Եզրույթը վերաբերում է հիվանդի կլինիկական վիճակին, երբ հիվանդությանը բնորոշ է անբավարարությունը, իսկ ավելցուկը թաքնված է: Այս երևույթը հիմնականում կապված է առողջ ցիի անբավարարության հետ զան-ֆու օրգաններում և միջօրեականներում, որը հանգեցնում է շարժողական և գրգռիչ գործառույթների նվազման: Եզրույթը հայտնի է նաև որպես «ավելցուկային երևույթներ ծայրահեղ անբավարարության դեպքում»: Օրինակ, փայծաղի ցիի անբավարարությունը, հանգեցնելով փոխադրման և ձևափոխման գործառույթի խանգարման, կարող է ի հայտ բերել այնպիսի կեղծ ավելցուկային ախտանիշներ, ինչպիսիք են ստամոքսի ու որովայնի փքվածությունն ու ցավը (սովորաբար ընդհատումներով): Մյուս խնդրո առարկան փորկապությունն է, որը տեղի է ունենում տևական կամ լուրջ հիվանդությունից հետո կամ տարեց հիվանդների դեպքում՝ արտաքորման համար անհրաժեշտ անբավարար ցիի անկարողության պատճառով:

［曾经译法］ *հին թարգմանություն* — արտաքինից կեղծ սթենիայի, բայց բնույթով իրական ասթենիայի համախտանիշ, ԻՐԱԿԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԿԵՂԾ ԱՎԵԼՑՈՒԿ, դրսից սթենիայի, ներսից՝ ասթենիայի համախտանիշ, իրական անբավարարություն՝ կեղծ ավելցուկ, անբավարարության համախտանիշ՝ կեղծ ավելցուկի ախտանիշներով, իրական անբավարարություն՝ կեղծ ավելցուկ:

［现行译法］ *նոր թարգմանություն*

անբավարարության համախտանիշ՝ կեղծ ավելցուկի ախտանիշներով, ասթենիայի համախտանիշ՝ կեղծ սթենիայի ախտանիշներով, իրական ասթենիա և կեղծ սթենիա, իրական անբավարարության և կեղծ ավելցուկի ախտանիշ, իրական անբավարարություն՝ կեղծ ավելցուկ:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն*

ճշմարիտ անբավարարություն՝ կեղծ ավելցուկ

Մեջբերումներ 引例.

Ավելին, միջին վիճակագրական մարդիկ հաճախ, պարզվում է, դրսևորում են կեղծ ավելցուկային ախտանիշներով իսկական անբավարարության օրինաչափություն, և նրանց աչքի հիվանդությունները հաճախ համապատասխանում են «բարձր ջերմություն-ցածր ցուրտ» օրինաչափությանը *(«Ականաբուժության մասին դասական գործերի մեծ ժողովածու»):*

Մինչդեռ հնարավոր է, որ ավելցուկային երևույթներ լինեն այն ժամանակ, երբ անբավարարության մոդելը հասնում է ծայրահեղության, ուստի ի հայտ են գալիս կեղծ ավելցուկային ախտանիշներ: Հնարավոր է, որ լինեն անբավարարության դրսևորումներ, երբ ավելցուկային մոդելը հասնի ծայրահեղության, և այդպիսով ի հայտ կգան կեղծ անբավարարության ախտանիշներ *(«Բժշկական արվեստ»):*

**Ին-յան աններդաշնակություն**
**ինյան շիթիաո 阴阳失调**

Եզրույթը ինի ու յանի միջև հավասարակշռության կորուստը բացատրելու կարճ միջոց է: Մասնավորապես, այն ցույց է տալիս, որ հիվանդության զարգացմանն ու առաջընթացին զուգահեռ ինի ու յանի հարաբերական հավասարակշռությունն ու համակարգումը խախտվում է զանազան ախտածին գործոնների պատճառով, ինչը հանգեցնում է մի շարք ախտածին փոփոխությունների, ներառյալ հարաբերական առատությունը կամ նվազումը, փոխադարձ վնասումը, փոխադարձ վանումն ու ինի ու յանի փլուզումը: Ինի ու յանի հավասարակշռության խախտումն առաջին հերթին դրսևորվում է ցրտի կամ շոգի օրինաչափությունների տեսքով: Ի լրումն դրա, ավանդական չինական բժշկությունը սահմանում է, որ ախտածին ցին հիվանդություններ չի առաջացնի, մինչև որ մարդու օրգանիզմում չխախտվի ին-յան հավասարակշռությունը: Հետևաբար, այս իմաստով, եզրույթը նաև ընդհանուր պնդում է, որը ցույց է տալիս տարբեր գործառութային և օրգանական խանգարումներ:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | ԻՆԻ ԵՎ ՅԱՆԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, համակարգման բացակայություն ինի ու յանի միջև, ին-յան աններդաշնակություն, ինի ու յանի անհավասարակշռություն, ինի ու յանի աններդաշնակություն, ինի ու յանի անհավասարակշռություն, ինի և յանի ոչ համակարգում, ինի և յանի անհավասարակշռություն/խանգարում |
| [现行译法] *նոր թարգմանություն* | ինի և յանի անհավասարակշռություն, հավասարակշռության բացակայություն ինի ու յանի միջև, աններդաշնակություն ինի ու յանի միջև, ին-յան աններդաշնակություն, հավասարակշռության խախտում ինի ու յանի միջև |

［标准译法］ին-յան անհավասարակշռություն
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Բոլոր մարդկային հիվանդությունները ծագում են ին-յան աններդաշնակությունից կամ ջրի ու կրակի հարաբերական գերակշռությունից *(Ժենի գաղտնի արձանագրությունները Դիպակե պայուսակում):*

Անբավարարության և խանգարումների հետ կապված բոլոր հիվանդություններն առնչվում են ին-յան աններդաշնակության կամ ջրի կամ կրակի հարաբերական գերիշխանության հետ *(Ընտանիքի գաղտնի բազմակողմանի բժշկական խորհուրդներ):*

**Ինի գերակշռությունը հանգեցնում է ցրտի ինչեն ցե հան 阴胜则寒**

Եզրույթը վերաբերում է ավելցուկային ին ցիի ախտածին վիճակին, որը հիվանդության զարգացման ընթացքում հանգեցնում է ֆիզիոլոգիական ակտիվության արգելակման, ավելորդ ջերմության կորստի և ախտածին մետաբոլիտների կուտակման: Եթե ինը զովացնում, խոնավեցնում, ճնշում ու հանգստացնում է, ապա ինի ախտածին ավելցուկը, որին հատուկ են սառնությունը, ապակտիվությունն ու խոնավությունը, ինչպես նաև յանի բնականոն մակարդակը, հանգեցնում է մրսածության զգացման: Կլինիկական տեսանկյունից այն դրսևորվում է սառը մարմնի, սառը վերջույթների, կծկվածության, գունատ ու խոնավ լեզվի, սրտի դանդաղ բաբախյունի և այլնի տեսքով: Ինի գերակշռությունը, որը հանգեցնում է մրսածության, հիմնականում կապված է

ինի ախտածին գործոնների հետ, ինչպիսիք են ցուրտն ու խոնավությունը, հում կամ սառը ուտելիքի գերսպառումը և էներգիայի միջին աղբյուրում պահվող ցուրտը, որը թույլ չի տալիս, որ մարմնի յան ցին դիմակայի ավելցուկային ինին: Այսպիսով, ին ցին ախտաբանության տեսանկյունից չափազանց շատ է:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ինի ավելցուկն ի հայտ է բերում ցրտի համախտանիշ, ԳԵՐԻՇԽՈՂ ԻՆԸ ՑՈՒՐՏ Է ՏԱՐԱԾՈՒՄ: Ավելցուկային ինը կարող է հանգեցնել ցրտի զգացողության, ինի ավելցուկը հանգեցնում է ցրտի համախտանիշի, ցրտի համախտանիշներ ի հայտ կգան ինի ավելցուկի դեպքում: Ինի գերակշռությունը հանգեցնում է ցրտի համախտանիշի, ակտիվ ինը հանգեցնում է ներքնածին ցրտի: Ավելցուկային ինը հանգեցնում է ցրտի, ավելցուկային ինն առաջացնում է ցուրտ, հիպեր-ինը ցուրտ է արտադրում: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ցրտի համախտանիշ՝ ինի ավելցուկի արդյունքում, ցրտի հանգեցնող գերիշխող ին, ինի գերիշխում, որը հանգեցնում է ցրտի, ինի առատություն, որն ի հայտ է բերում մրսածության դրսևորումներ, չափից շատ ինը հանգեցնում է մրսածության |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Ինի գերակշռումը հանգեցնում է ցրտի: |

Մեջբերումներ 引例.

Երբ մալարիայի ցին միաձուլվում է յանի հետ, տեղի է ունենում յանի գերակշռություն: Երբ այն միաձուլվում է ինի հետ, տեղի է ունենում ինի գերակշռություն: Ինի գերակշռու-

թյունը հանգեցնում է ցրտային դրսևորումների, յանի գերակշռությունը՝ ջերմային դրսևորումներ *(«Պարզ զրույց»):*

Այլ կերպ ասած, դողն ու տենդն ինի ու յանի պայքարի արդյունքն են: Ինի գերակշռությունը հանգեցնում է ցրտային դրսևորումների, յանի գերակշռությունը՝ ջերմային դրսևորումների *(«Ցրտահարության վնասվածքների համառոտ նկարագրություն»):*

Ցրտի ու տենդի հանդեպ հակակրանքն առաջանում են ինի կամ յանի գերակշռությունից: Ինի գերակշռությունը հանգեցնում է ցրտային դրսևորումների և յանի հարաբերական թուլացման, յանի գերակշռությունը՝ ջերմային դրսևորումների և ինի հարաբերական թուլացման *(Չինյուեի երկերի լիակատար ժողովածու):*

**Յանի գերակշռությունը հանգեցնում է ջերմության յանշեն ցե ժե 阳胜则热**

Եզրույթը վերաբերում է ավելցուկային յան ցիի ախտաբանական վիճակին, որը հիվանդության զարգացման ընթացքում հանգեցնում է հիպերակտիվության, օրգանիզմի սուր արձագանքի և բարձր ջերմության: Եթե յանը ջերմացնում, խթանում ու գրգռում է, ապա դրա ախտաբանական ավելցուկը, որն ինի բնականոն մակարդակում աչքի է ընկնում հիպերակտիվությամբ և չորությամբ, հանգեցնում է ջերմության ավելցուկային մոդելի: Կլինիկական տեսանկյունից, այն դրսևորվում է բարձր ջերմությամբ, նյարդային վիճակով, ծարավով, դեմքի ու աչքերի կարմրությամբ, մուգ դեղին մեզով, չոր կղանքով, լեզվի դեղնավուն շերտով, արագ սրտազարկով և այլն: Յանի գերակշռությունը, որը հանգեցնում է ջերմային դրսևորումների, առավել հաճախ կապված է յանի ախտածին գործոնների հարձակման հետ, ինչպիսիք են ջերմությունը, ինի ախտածին գործոնների ներ-

թափանցումը, որը վերածվում է ջերմության, ավելորդ զգացմունքների պատճառած վնասը, որը վերածվում է կրակի, և ջերմությունը, որը պայմանավորված է ցիի լճացմամբ, արյան արգելակմամբ, սննդի կուտակմամբ և այլնով:

［曾经译法］ *հին թարգմանություն* Յանի ավելցուկը հանգեցնում է ջերմային համախտանիշի: ԱՎԵԼՈՐԴ ՅԱՆԸ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ Է ԱՐՏԱԴՐՈՒՄ: Յանի ավելցուկը կարող է ի հայտ բերել ջերմության համախտանիշ, ջերմության համախտանիշի հանգեցնող յանի ավելցուկ: Ավելորդ ջերմության համախտանիշ ի հայտ կգա յանի ավելցուկի դեպքում: Յանի առատությունը հանգեցնում է ջերմության համախտանիշի: Յանի ավելցուկը հանգեցնում է ջերմության համախտանիշի: Ավելցուկային յանը ջերմություն է արտադրում, ջերմություն արտադրող հիպեր-յան:

［现行译法］ *նոր թարգմանություն* ջերմության համախտանիշ՝ պայմանավորված յանի ավելցուկով, ջերմություն արտադրող յանի ավելցուկ, ջերմության հանգեցնող առատ յան, ծայրահեղ շատ յանով պայմանավորված ջերմության համախտանիշ, ջերմության հանգեցնող յանի առատություն

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Յանի գերակշռությունը հանգեցնում է ջերմության

Մեջբերումներ 引例.

Ցրտի ու տենդի հանդեպ հակակրանքի պատճառն ինի կամ յանի գերակշռությունն է: Ինի գերակշռությունը հանգեցնում է ցրտի դրսևորումների յանի հարաբերական թուլացման պատճառով, յանի գերակշռությունը հանգեցնում է

ջերմային դրսևորումների՝ ինի հարաբերական թուացման պատճառով *(Չինյունի երկերի լիակատար ժողովածու)*:

Ինի գերակշռությունը հանգեցնում է ցրտի դրսևորումների, իսկ յանի գերակշռությունը՝ ջերմային դրսևորումների: Ինի ու յանի պայքարը հանգեցնում է միաժամանակ դողէրոցքի ու քրտնարտադրության *(«Ցրտահարության վնասվածքների քննախուզություն. ծանոթագրված»)*:

Ըստ «Դեղին կայսեր Բժշկության ներքին կանոնի»՝ յանի գերակշռությունը կարող է հանգեցնել ջերմային դրսևորումների. սա չափից շատ յան-կրակի հետևանք է: Կլինիկական ախտանիշներն են՝ նյարդային վիճակ, ծարավ, չոր կղանք, մուգ մեզ, բարդ ու ցավոտ միզարձակություն և հաճախացած սրտազարկ դաստակի վեց դիրքերում: Բուժման համար հարկ է կիրառել զովացնող կամ սառեցնող դեղաբույսեր *(«Բժշկության անկյունաքարեր»)*:

**Ինի թուլացումն ազդում է յանի վրա**
**ինսուն ջի յան 阴损及阳**

Եզրույթը վերաբերում է ախտածին վիճակին, որը բնութագրվում է ինի առաջնային և յանի երկրորդային անբավարարությամբ: Ինի էության կամ ին ցիի անբավարարությունը կամ խանգարումն ազդում է յան ցիի ձևավորման վրա կամ հանգեցնում է յան ցիի սպառման, քանի որ ինն ու յանը փոխկախյալ են, ինչն էլ հանգեցնում է յանի անբավարարության՝ ի լրումն ինի անբավարարության: Օրինակ, լյարդի յանի հիպերակտիվության օրինաչափության պատճառը հիմնականում թե՛ լյարդի, թե՛ երիկամի ինի անբավարարությունն է. լյարդը չի կարողանում վերահսկել յանը, կամ, հինգ տարրերի տեսանկյունից, ջուրը չի կարողանում սնել փայտը: Հիվանդությունը, սակայն, կարող է զարգանալ՝ վնասելով արյունը, լյարդի ու երիկամի բնահյութը, ինչը

կանդրադառնա երիկամի յանի ձևափոխության վրա, և ի հայտ կգան երիկամի յանի անբավարարության այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ցրտի հանդեպ հակակրանքը, սառը վերջույթները, դեմքի գունատությունն ու խոր թեւլանման սրտազարկը: Այսպիսով, ի հայտ է գալիս ինի ու յանի անբավարարություն՝ որպես ինի վնասման պատճառով յանի վրա ազդելու արդյունք:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | անբավարար ինն ազդում է յանի վրա, ՅԱՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԻՆԻ ԱՆԲԱՎԱՐԱ-ՐՈՒԹՅՈՒՆ, յան՝ անբավարար ինով, յանի վրա ազդող ինի անբավարարություն, յանի վրա ազդող ինի վնասում, ինի անբավարա-րությունն ազդում է յանի վրա, ինի սպառումը ներառում է յանը |
| [现行译法] *նոր թարգմանություն* | յանի վրա ազդող ինի անբավարարություն, ինի թուլացում՝ յանի մասնակցությամբ, յանի վրա ազդող ինի թուլացում, ինի խախտում՝ յանի մասնակցությամբ, ինի խախտումը խոչընդոտում է յանի առաջա-ցումը, ինի խախտումն ազդում է յանի վրա: Ինի վնասվածքը ներգործում է յանի վրա, ինի խախտումն ազդում է յանի վրա, յանի վրա ազդող ինի վնասման համախտանիշ/օրինաչափություն: |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Ինի վնասումն ազդում է յանի վրա: |

Մեջբերումներ 引例.

Այն դեպքերում, երբ յանի վրա ազդում են ոչ թե վեց արտածին-ախտածին գործոնները, այլ ինի վնասումը, կարելի է կիրառել ցամաքեցման կամ զտման մեթոդներ, և հարկ է, որ

ստամքսը սնուցվի *(«Հիվանդության պատմություն. կլինիկական պրակտիկայի ուղեցույց»):*

Հիվանդը վերջերս մրսում էր, սովի զգացողություն չուներ, ուտելու ցանկություն՝ նույնպես: Սա ինի վնասման դեպք է, որն անդրադառնում է յանի վրա *(«Ծերունի Իփյաոյի հիվանդության պատմություն Սաոյե փնից»):*

**Յանի թուլացումն ազդում է ինի վրա**
**յանսուն ջի ին** 阳损及阴

Եզրույթը վերաբերում է ախտածին վիճակին, որին հատուկ է առաջնային յանի և երկրորդային ինի անբավարարությունը: Յան ցիի անբավարարությունը կամ խախտումն ազդում է ին ցիի առաջացման վրա, քանի որ ինն ու յանը փոխկախյալ են, ինչը հանգեցնում է ինի անբավարարության, ի լրումն յանի անբավարարության: Օրինակ, այտուցվածության պատճառը երիկամի յանի անբավարարությունն է: Անբավարար երիկամի յանը չի կարողանում ձևափոխել ցին, ինչն էլ հանգեցնում է ջրափոխանակության խանգարման, և արդյունքում մաշկում տեղի է ունենում մարմնի հեղուկների կանգ: Սակայն հիվանդությունը կարող է զարգանալ՝ հասնելով ինի անբավարարության, քանի որ անբավարար յան ցին չի կարողանում բավականաչափ ին ցի արտադրել և դրսևորում է երիկամի ինի անբավարարության այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ծայրահեղ հյուծումը և նույնիսկ ցնցումները, ինչը կապված է յանով պայմանավորված քամու տատանումներով: Այսպիսով, թե՛ ինի, թե՛ յանի անբավարարություն վրա է հասնում յանի խախտման արդյունքում, ինչն անդրադառնում է ինի վրա:

［曾经译法］ *հին թարգմանություն* Անբավարար յանն ազդում է ինի վրա: ԻՆԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՂ ՅԱՆԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ինը՝ անբավարար յանում,

յանի թուլությունն ազդում է ինի վրա, յանի թուլացումն ազդում է ինի վրա: Յանը վնասում է ինը: Յանի անբավարարությունն ազդում է ինի վրա, յանի սպառում՝ ինի մասնակցությամբ:

[现行译法] *նոր թարգմանություն* ինի վրա ազդող յանի անբավարարություն, յանի թուլացումն ազդում է ինի վրա, յանի խանգարումը ներառում է ինը, յանի խանգարում, որը ներառում է ինը, յանի խանգարումը խոչընդոտում է ինի առաջացումը, յանի վնասվածքն ազդում է ինի վրա, ինի վրա ներգործող յանի խանգարում, ինի վրա ազդող յանի վնասման համախտանիշ/օրինաչափություն

[标准译法] *ստանդարտ թարգմանություն* Յանի խանգարումն ազդում է ինի վրա:

Մեջբերումներ 引例.

Սրտի անբավարարության պատճառն այն է, որ ինի թուլացումն ազդում է յանի վրա, յանի թուլացումը՝ թե՛ ինի, թե՛ յանի վրա՝ ուղեկցվելով մեծ քանակով ախտածին հեղուկների ու խորխի կանգով *(Ավանդական չինական բժշկության 100 ժամանակակից բժիշկներ. Շի Ջիչաո):*

Երիկամի յանի թուլացումն ազդում է ինի վրա ու կարող է հանգեցնել թե՛ ինի, թե՛ յանի անբավարարության և նույնիսկ դրսևորվել թոքախտային հիվանդությամբ *(Մոդելների պարբերակում՝ ըստ Չինական ավանդական բժշկության ախտաբանության):*

## Յանի գերակշռությունը հանգեցնում է ինի խանգարման յանշեն ցե ինբին 阳胜则阴病

Եզրույթը վերաբերում է զանազան ախտաբանական փոփոխությունների, որոնց բնորոշ է մարմնի հեղուկների և ինի խանգարումը՝ պայմանավորված յանի ջերմության գերակշռությամբ: Երբ յանն առատ է, իսկ դրա պատճառով ինի վնասումը դեռ ակնհայտ չէ, ի հայտ է գալիս ավելցուկային ջերմության պատկեր: Եթե վիճակը վատանա, այսինքն՝ յանի ջերմությունը չափազանց շատանա և հանգեցնի մարմնում ինի ակնհայտ վնասվածքի, հիվանդությունը կզարգանա, և ավելորդ ջերմության մոդելը կվերածվի չափազանց շատ ջերմության մոդելի, որը սովորաբար ուղեկցվում է ինի անբավարարությամբ: Երկարաժամկետ հեռանկարում, քանի որ ինը կարող է լրջորեն վնասվել, հիվանդությունը կարող է էլ ավելի զարգանալ՝ ավելցուկային ջերմության մոդելից վերածվելով անբավարար ջերմության մոդելի:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | յանի ավելցուկը հանգեցնում է ինի թուլացման, ԱՎԵԼՑՈՒԿԱՅԻՆ ՅԱՆԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԻՆԻ ԽԱՆԳԱՐՄԱՆ: Ավելորդ յանը հանգեցնում է ինի անբավարարության: Յանի գերակշռումը սպառում է ինը, յանի գերակշռումը հանգեցնում է ինի խանգարման, չափազանց շատ ինը հանգեցնում է ինի անբավարարության, հիպեր-յան, որը հանգեցնում է հիպո-ինի: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ինի խանգարում, որի պատճառը յանի ավելցուկն է, յանի առատությունը հանգեցնում է ինի խանգարման, ավելորդ յանը ստիպում է, որ ինը տառապի, գերակշռող յանը հանգեցնում է ինի խանգարման, յանի գերակշռումը հանգեցնում է ինի խանգարման |

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Յանի գերակշռումը հանգեցնում է ինի խանգարման:

Մեջբերում 引例.

Ինի գերակշռումը հանգեցնում է յանի խանգարման, ինչն էլ ի հայտ է բերում մրսածության դրսևորումներ, իսկ յանի գերակշռումը հանգեցնում է ինի խանգարման՝ ի հայտ բերելով ջերմային դրսևորումներ *(«Պարզ զրույց»):*

Ինի գերակշռումը հանգեցնում է յանի անբավարարության, իսկ յանի գերակշռումը՝ ինի անբավարարության: Այլ կերպ ասած, ինի գերակշռումը հանգեցնում է յանի, յանի գերակշռումը՝ ինի խանգարման *(Մոդելների մշակման բանաձևեր՝ հանուն կյանքի պահպանության):*

**Ինի գերակշռությունը հանգեցնում է յանի խանգարման ինչպես նաև յանբին** 阴胜则阳病

Եզրույթը վերաբերում է յան-ցիի նվազման ախտաբանական փոփոխությանը, որի պատճառն ին ցրտի գերակշռությունն է: Չափազանց շատ ցուրտը մարմնում երկարաժամկետ հեռանկարում կվնասի յան ցին՝ հանգեցնելով յանի անբավարարության, որին հատուկ է մարմնի ֆիզիոլոգիական գործառույթների նվազումն ու յան-ջերմության անբավարարությունը: Այսպիսով, ի հայտ են գալիս թե՛ ավելցուկային ցրտի, թե՛ յանի անբավարարության ախտանիշներ: Եթե ինի գերակշռությունը տևական ժամանակ վնասել է յանը, յանի ցին լրջորեն կվնասվի, և հիվանդությունը կզարգանա՝ ավելցուկային մոդելից վերածվելով ցրտի մոդելի:

［曾经译法］ *հին թարգմանություն* Ինի ավելցուկը հանգեցնում է յանի թուլացման, ԻՆԻ ԱՎԵԼՑՈՒԿԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՅԱՆԻ ԽԱՆԳԱՐՄԱՆ: Ինի ավել-

ցուկը հանգեցնում է յանի անբավարարության: Ինի գերակշռումը սպառում է յանը: Գերակշռող ինը հանգեցնում է յանի խանգարման: Ինի ավելցուկը հանգեցնում է յանի խանգարման, ինի ավելցուկը հանգեցնում է յանի անբավարարության, հիպեր-ին, որը հանգեցնում է հիպո-յանի:

［现行译法］ *նոր թարգմանություն* յանի խանգարում՝ պայմանավորված ավելցուկային ինով, գերակշռող ին, որը հանգեցնում է յանի հիվանդության, ինի ավելցուկը ստիպում է, որ յանը տառապի, չափազանց շատ ինը ստիպում է, որ յանը տառապի, գերակշռող ինն առաջացնում է յանի խանգարում, ինի գերակշռումը հանգեցնում է յանի խանգարման:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Ինի գերակշռումն առաջացնում է յանի խանգարում:

Մեջբերումներ 引例.

Յան ցիի անբավարարությունը համեմատաբար շատացնում է ինը, և կարող են ի հայտ գալ ցրտահարության նշաններ ու ախտանիշներ: Հետևաբար, ինի գերակշռությունը հանգեցնում է յանի խանգարման, և ի հայտ են գալիս մրսածության դրսևորումներ *(Չինյուեի երկերի լիակատար ժողովածու):*

Ինի ախտաբանական փոփոխությունները կհանգեցնեն արյան կանգի, ինչն էլ իր հերթին կառաջացնի ինի գերակշռում: Ինի գերակշռումը կարող է հանգեցնել յանի խանգարման *(Բժշկական ոլորտի ցուցումներ):*

**Առատ ինը վանում է յանը**
**ինշեն գեյան 阴盛格阳**

Այս եզրույթը, որը նաև անվանում են «յանի վանում», վերաբերում է այնպիսի ախտածին վիճակի, երբ ծայրահեղ առատ ին-սառնությունը կուտակվում է մարնի ներսում՝ ստիպելով, որ յան ցին հոսի դեպի մարմնի մակերես: Ավելորդ ներքին ին-սառնությունը հիվանդության հիմնական պատճառն է: Սակայն, քանի որ ինը վանում է յանի ցին, և այն ուղղվում է դեպի մարմնի մակերես, կարող են ի հայտ գալ կեղծ ջերմային ախտանիշներ, ինչպիսիք են դեմքի կարմրությունը, մարմնի ջերմությունը, ծարավը և հաճախացած սրտազարկը, ինչպես նաև մարմնի ներսում ավելորդ ինի առաջնային ախտանիշներ, ինչպիսիք են դեմքի գունատությունը, վերջույթների սառնությունը, թուլությունն ու թույլ սրտազարկը: Այսպիսով, այս վիճակը նկարագրվում է՝ որպես իսկական մրսածության մոդել՝ կեղծ ջերմությամբ: Կլինիկական տեսանկյունից, հիվանդությունը հայտնի է «լողացող յան» անունով, որը նաև յանը վանող առատ ինի դրսևորում է: Այն բնութագրվում է թույլ մրսածությամբ և թաքնված բարձր ջերմությամբ, որն ի հայտ է գալիս, երբ ինն ու յանը չեն կարողանում աջակցել միմյանց, երբ իսկական յանը (երիկամի ցի) չափազանց թույլ է և չի կարողանում զսպել ինը, երբ ինը մարմնի մեջ չափազանց առատ է և թույլ յանն ուղարկում է մարմնի վերին հատված:

［曾经译法］ *հին թարգմանություն* — Մարմնի ներսի ավելցուկային ինը յանը հանում է դուրս: ԱՎԵԼՑՈՒԿԱՅԻՆ ԻՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ Է ՅԱՆԸ, ավելորդ ինը վանում է յանը, առատ ինը վանում է յանը: Ավելցուկային ինը յանը պահում է դրսում, յանը մերժող ավելորդ ին

［现行译法］ *նոր թարգմանություն* — ներսում՝ ինի ավելցուկ, դրսում՝ յան, գերակշռող ին, որը մերժում է յանը, յանը

մերժող առատ ին, յանը մերժող ավելցուկային ին, կեղծ ջերմության դրսևորումներն արտաքին միջավայրում՝ պայմանավորված ներքին ծայրահեղ ցրտով, առատ ինի համախտանիշ/մոդել, որը մերժում է յանը:

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Առատ ինը վանում է յանը:

Մեջբերումներ 引例.

Հիվանդները, որոնք տառապում են ցրտահարությունից և ունեն առատ ին, որը վանում է յանը, հաճախ ունենում են ցրտի զգացողություն, թելանման խոր ու հաճախացած սրտազարկ, գրգռվածություն, ջուր խմելու ցանկության բացակայություն *(Ինի մոդելի օրինակներ):*

Կեղծ ջերմությամբ մոդելի դեպքում ջուրը դառնում է ծայրահեղ առատ, ինչպես կրակը, և ինի մոդելը նմանվում է յանի մոդելին… Այն նաև նկարագրվում է որպես առատ ին, որը վանում է յանը *(Յեի բժշկական մեթոդներ):*

Եթե հիվանդը երեք օրից պակաս ցրտահարություն է ունեցել, և առկա է ճակատի քրտնարտադրություն, դեմքի կարմրություն ու գրգռվածություն, ապա դա ոչ թե ինի տոքսինային մոդելի, այլ յանը վանող առատ ինի օրինակ է *(Ախտանիշներ, պատճառներ, ազդակներ և բուժումներ):*

**Առատ յանը վանում է ինը**
**յանշեն գեյին 阳盛格阴**

Այս եզրույթը, որը նաև կոչվում է «ինին վանող», վերաբերում է ախտածին վիճակի, որտեղ ծայրահեղ առատ յանի ջերմությունը խոր թաքնված է մարմնի ներսում, կամ, այլ

կերպ ասած, յան ցին խոչընդոտվում է մարմնի ներսում ու չի կարողանում հոսել դեպի մարմնի մակերես, իսկ ին ցին մղվում է դուրս: Հիվանդության հիմնական պատճառը մարմնի ներսում առատ ինն է: Այնուամենայնիվ, քանի որ յան ջերմությունը վանում է ին ցին ու ուղղորդում դեպի մարմնի մակերես, բացի օրգանիզմի ներսում չափից շատ ջերմության ախտածին գործոնի այնպիսի նախնական ախտանիշների, ինչպիսիք են բարձր ջերմությունը, դեմքի կարմրությունը, ծանր շնչառությունը, գրգռվածությունը, կարմիր լեզուն և ուժգին ու արագընթաց սրտխփոցը, կարող են ի հայտ գալ նաև կեղծ ախտանիշներ, ինչպիսիք են վերջույթների սառնությունը, ինչպես նաև խոր թաքնված սրտազարկը: Այսպիսով, սա կոչվում է կեղծ մրսածությամբ իրական ջերմության մոդել:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Մարմնի ներսի ավելորդ յանն ինը պահում է դրսում: ԱՎԵԼՑՈՒԿԱՅԻՆ ՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ Է ԻՆԸ: Մարմնի ներսի չափազանց շատ յանն ինը պահում է մակերեսին: Առատ յանը վանում է ինը: Ավելցուկային յանն ինը պահում է դրսում, ավելցուկային յանը մերժում է ինը: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ինը պահվում է դրսում, երբ ներսում յանի ավելցուկ կա, առատ յանը մերժում է ինը, գերառատ յանը մերժում է ինը, կեղծ ցրտի դրսևորումներ դրսում՝ պայմանավորված ներսի ծայրահեղ տաքությամբ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Առատ յանը մերժում է ինը: |

Մեջբերումներ 引例.

Կեղծ մրսածության մոդելի դեպքում կրակը դառնում է չափազանց շատ, ինչպես ջուրը, և դա ստիպում է, որ յան մո-

դելը նմանվի ին մոդելին… Այն նաև անվանում են «ինը վանող առատ յան» *(Յեի բժշկական մեթոդները):*

Առատ յանը, որը մերժում է ինը, ստեղծում է ինի մոդել, որը դրսևորվում է մարմնի մակերեսի ցավի, սառած վերջույթների, բայց ուժեղ ու խոր արագացած սրտազարկի տեսքով: Դա Չենցի (մաքրող եփուկ) կիրառելու ցուցիչ է *(Ախտանիշներ, պատճառներ, ազդակներ և բուժումներ):*

Տեղային հիվանդությունների դեպքում, եթե ի հայտ է գալիս ցրտի զգացողություն, բայց բերանն ու կոկորդը չոր են, լեզուն՝ դեղնավուն, շուրթերը՝ ճաքած, սա ինը վանող առատ յանի դրսևորում է, այն է՝ ներսում ավելցուկային ջերմություն՝ դրսից հարբուխի նշաններով ու ախտանիշներով: Իրականում դա ցրտի հանդեպ հակակրանք չէ *(Ցրտահարության և տենդային համաճարակների համակարգային տարբերակում):*

### Թույլ բաբախյուն յանում, ուժգին բաբախյուն ինում յանուեյ ինսիան 阳微阴弦

Եզրույթը վերաբերում է սրտի թույլ բաբախյունին ցուն (寸) հատվածում և լարված բաբախյունին՝ չի (尺) հատվածում. ախտաբանության տեսանկյունից սրանք դժվարացած շնչառության և սրտի ցավի դրսևորումներ են: Ցուն հատվածում սրտի բաբախյունը յան է, չի հատվածում՝ ին: Թույլ բաբախյունը ցուն հատվածում վկայում է էներգիայի վերին աղբյուրում յան ցիի անբավարարության և կրծքավանդակում յան ցիի հիպոֆունկցիայի մասին: Ալիքանման բաբախյունը չի հատվածում վկայում է ին-ցրտի ավելցուկի և ջրի արգելակման մասին: Սրտի բաբախյունի երկու դրսևորումների համընկնումը ցույց է տալիս, որ կրծքավանդակի դժվարացած շնչառությունը և սրտի ցավը պայմանավորված են էներգիայի վերին աղբյուրում յանի անբավարարությամբ,

ինչը հանգեցնում է ինի ախտածին գործոնների կողմից էներգիայի վերին աղբյուրի հարձակման և ախտածին ցիի և առողջ ցիի միջև պայքարի: Ըստ «Ոսկե խցի հիմնական դեղատոմսեր» գրքի «Սրտի բաբախյուն, օրինաչափություններ, կրծքավանդակի հիվանդությունների, սրտի ցավի, դժվարացած շնչառության բուժում» բաժնի՝ «Հիմա հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ յանի անբավարարություն կա էներգիայի վերին աղբյուրում: Կրծքավանդակի խոչընդոտներն ու սրտի ցավը կապված են ինի ու յանի միջև պայքարի հետ, ինչի մասին վկայում է ինում սրտի լարված բաբախյունը (չի հատվածում): Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ յանում թույլ բաբախյունի և ինում լարված բաբախյունի դրսևորումները կրծքավանդակի դժվարությունների և սրտի ցավի պատճառագիտության և ախտաբանության անբաժանելի մասն են:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | / |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | թույլ բաբախյուն յանում և լարված բաբախյուն՝ ինում |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | թույլ բաբախյուն յանում և լարված բաբախյուն՝ ինում |

Մեջբերումներ 引例.

Սրտի զարկերը ստուգելիս ուշադրություն դարձրեք ավելցուկին և անբավարարությանը: Թույլ բաբախյունը յանում (ցուն հատված) և լարված բաբախյունն ինում (չի հատվածում) վկայում է կրծքավանդակի դժվարության և սրտի ցավի մասին: Հիմնական պատճառն այն է, որ յան ցին չափազանց թույլ է *(Ոսկե խցի հիմնական դեղատոմսեր):*

Կրծքավանդակի դժվարանցանելիության դեպքում նկատվում է թույլ բաբախյուն յանում և լարված բաբախյուն հինում: Թույլ բաբախյունը յանում նշանակում է, որ հիվանդությունն էներգիայի վերին կենտրոնում է, իսկ լարված բաբախյունն հինում նշանակում է, որ կարող է ի հայտ գալ սրտի ցավ: Այսպիսով, յանի ապարգելակման բուժումը պետք է սկսել ըստ «Ոսկե խցի հիմնական դեղատոմսեր» և «Հազար ոսկի արժեցող կարևոր ձևակերպումներ» ժողովածուների *(Մողելների դասակարգում՝ բուժման հսպակ մեթոդներով)*:

Խոր ու դանդաղ ճառագայթային բաբախյուն, ինչպես նաև թույլ բաբախյունը յանում և լարված բաբախյունն հինում վկայում է ոչ թե ջերմության, այլ ցրտի մոդելի մասին *(«Հիվանդության պարմություն. կլինիկական պրակփիկայի ուղեցույց»)*:

**Ցի շարժման խանգարում**
**ցիջի շիթիաո 气机失调**

Եզրույթը վերաբերում է ցիի արգելակված հոսքի կամ ցիի չհամակարգված ու չհավասարակշռված վերելքի, վայրէջքի, մուտքի ու ելքի ախտաբանական փոփոխություններին: Ըստ ավանդական չինական բժշկության՝ ցիի բնականոն շարժումը պետք է լինի սահուն, անարգել, համակարգված և հավասարակշռված. այլ կերպ այն կոչվում է ցի շարժման խանգարում: Ցիի շարժման բազմազանության պատճառով գոյություն ունեն ցիի շարժման խանգարման զանազան դրսևորումներ: Օրինակ, ցիի կանգը նշանակում է, որ ցիի շարժումն արգելակված է, սահմանափակ, դժվարացած ու լճացած, ինչը հանգեցնում է փքվածության, ճնշվածության ու ցավի: Ցիի հակահոսք ասելով նկատի ունենք ցիի ավելորդ վերելք կամ ոչ բավարար վայրէջք, որը մեծամասամբ հանգեցնում է թոքի, ստամոքսի, լյարդի ու այլ զան-ֆու օրգան-

ների ախտածին փոփոխությունների: Ցիի նվազումը կապված է ցիի ոչ համարժեք վերելքի կամ չափից շատ վայրէջքի հետ: Սա բնութագրվում է ցիի նվազումով, քանի որ ցին անբավարար է կամ ի զորու չէ բարձրանալ: Ցիի արգելակումը նշանակում է, որ ցիի շարժումը սահմանափակ է ու արգելակված, և այն չի կարողանում դուրս գալ, ինչն էլ հանգեցնում է թափանցիկ ճեղքերի խցանման և բնութագրվում գլխապտույտով ու գիտակցության կորստով: Ցիի կոլապսը նշանակում է, որ ցին չի հաջողվում մնալ մարմնի ներսում ու մեծ քանակով հոսում է դուրս՝ հանգեցնելով մարմնի գործառույթների անակնկալ ու լիարժեք ձախողման:

［曾经译法］/
*հին թարգմանություն*

［现行译法］ցի շարժման խանգարում
*նոր թարգմանություն*

［标准译法］ցի շարժման խանգարում
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Հեն՛շեն փոշին (ժեն՛շենի փոշի) օգտագործում են կլման ակտի խանգարման հինգ տեսակները բուժելու համար, մասնավորապես՝ ստամոքսի խոռոչում ցիի լճացում, սրտի ու կրծքավանդակի լցվածություն և ճնշում, կոկորդում արգելակում, ցի շարժման խանգարումներ և ուտելու անկարողություն *(Դեղատոմսեր ընդհանուր թեթևացման համար):*

Քանի որ կեղտն ու խոնավությունը մնում են մարմնի ներսում, կարող է առաջանալ լեզվի դեղին նստվածք, ստամոքսի փքվածության զգացում, ինչպես նաև ցի շարժման խանգա-

րում: Ժամանակի ընթացքում ջերմություն է արտաղրվում: Այս դեպքում պետք է օգտագործել ցի փոշու (ցին ուղղող փոշի) երրորդ տարբերակը *(Ջերմությամբ պայմանավոր-ված հիվանդությունների համակարգված փարբերակում):*

**Սննդարար-պաշտպանիչ աններդաշնակություն ինուեյ բուհե 营卫不和**

Եզրույթը վերաբերում է սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի ոչ ներդաշնակ վիճակին: Սննդարար ցին կամ սննդա-րար նյութը համապատասխանում է ինին և մնում է մարմնի ներսում, իսկ պաշտպանիչ ցին կամ պաշտպանական նյութը համապատասխանում է յանին և պաշտպանում է դրսից: Ֆիզիոլոգիական վիճակում պաշտպանության ցին, որն անոթներից դուրս է հոսում, պաշտպանում է մսեղ արտաքին շերտն ու տաքացնում, ինչպես նաև սնուցում մկանները, մաշկն ու մարմնի մազածածկույթը: Այն նաև կարգավորում ու վերահսկում է մաշկի գծերի ու միջանկյալ ճեղքերի բաց-ման ու փակման գործընթացը, ինչպես նաև քրտնարտա-դրությունը և այլն: Սննդարար ցին, որը հոսում է անոթների ներսում, սնուցում ու խոնավեցնում է զան-ֆու օրգանները, վերջույթներն ու կմախքը: Սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի միջև ներդաշնակությունն ու համակարգումը կարևոր նախադրյալ է մարդու մարմնի բնականոն գործառույթի հա-մար և պաշտպանում է արտաքին ախտածին նյութերից: Եթե մարմինը թույլ է կամ արտաքին կողմով շփման մեջ է մտնում քամու հարուցիչի հետ, սննդարար ցիի ու պաշտպա-նության ցիի միջև ներդաշնակությունը խախտվում է: Ար-դյունքում յան ցին չի կարողանում պաշտպանել արտաքին կողմը, իսկ ինի հեղուկները հակված են հեշտությամբ դուրս գալ օրգանիզմից՝ հանգեցնելով այնպիսի ախտանիշների, ինչպիսիք են բարձր ջերմությունը, ինքնաբուխ քրտնարտա-դրությունը, վախը ցրտից կամ քամուց: Սննդարար-պաշտ-պանիչ աններդաշնակություն կարելի է նկատել քամու հա-

բուցիչի կամ զանազան ներքին հիվանդությունների հետ արտաքին շփման դեպքերում:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | անհավասարակշռություն ին-էներգիայի և ույեյ-էներգիայի միջև: ԻՆԻ (ՄՆՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐ) ԵՎ ՈՒԵՅԻ (ՊԱՇՏՊԱՆՈՒ-ԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ) ոչ ներդաշնակությունը, սննդարար և պաշտպանիչ ցիի խանգարում, սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի ներդաշնակության խախտում, աններդաշնակություն սննդարար Ցիի և պաշտպանիչ Ցիի միջև: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի ոչ-ներդաշնակություն, ին ցիի ու ույեյ ցիի աններդաշնակություն, սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի աններդաշնակություն, սննդարարի ու պաշտպանականի աններդաշնակություն, ին և ույեյ համակարգերի միջև ներդաշնակության խանգարում, սննդարար և պաշտպանիչ (համակարգերի) ոչ ներդաշնակություն, սննդարար-պաշտպանիչ աններդաշնակություն, սննդարար և պաշտպանիչ ցիերի ոչ ներդաշնակություն, սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի աններդաշնակության համախտանիշ/մոդել: |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | սննդարար-պաշտպանիչ ոչ-ներդաշնակություն |

Մեջբերումներ 引例.

Նույնիսկ եթե սննդարար-պաշտպանիչ աններդաշնակության այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են լողացող սրտազարկն ու ինքնաբուխ քրտնարտադրությունը չեն

վերաբերում արտածին հիվանդություններին, դրանք վկայում են գույժի եփուկի (դարչնի ճյուղերի եփուկ) օգտագործման անհրաժեշտության մասին *(Ցրտահարության վնասների մասին քննախոսության շարունակություն)*:

Սննդարար-պաշտպանիչ աններդաշնակության դեպքերում անոթները պետք է որ խցանված լինեն, ուստի սննդարար և պաշտպանիչ գործառույթները ներդաշնակեցնելու համար հարկ է կիրառել շաոյաո (սպիտակ կամ կարմիր քաջվարդի արմատ), գանկաո (մատուտակի արմատ) և դացաո (չինական արմավ) *(Հապավված բանաձևերի արդյունավետ կիրառում)*:

Ցիի ու արյան կանգը, սննդարար-պատպանիչ ոչ-ներդաշնակության հետ մեկտեղ հանգեցնում է ժամանակի ու քանակի տեսանկյունից անկանոն ժամանակաշրջանների *(Բժշկական ցուցումներ)*:

**Թույլ սնուցում և ուժեղ պաշտպանություն**
**ինգրուո ուեյցիան 营弱卫强**

Եզրույթը վերաբերում է թայյանի (ավելի մեծ յան) քամու ներխուժմանը, այն է՝ պաշտպանության յանը լողալով դուրս է գալիս, իսկ սննդարար ինը չի կարողանում մնալ մարմնի ներսում: Քամին յանի հարուցիչ է և դրսից հարձակվում է պաշտպանիչի վրա: Երբ ախտածին քամին ներխուժում է, պաշտպանիչ ցին, որը բարձրանում է, ցրվում է ու շարժվում, դուրս լողում մարմնի մակերեսից, որպեսզի պայքարի քամու հարուցիչի դեմ, ինչի արդյունքում մարմնի ջերմաստիճանը բարձրացնում է: Բացվելու և ցրվելու իր հատկությամբ՝ ախտածին քամին պաշտպանությունն արտաքինից դարձնում է ոչ հուսալի և չի կարողանում սննդարար ցին պահել ներսում, ինչը հանգեցնում է ինքնաբուխ քրտնարտադրության: Երբ միջմկանային տարածությունն ընդլայնվում է, և մկանները

թուլանում են քրտնարտադրությունից, մարդու մարմինը չի կարողանում պաշտպանվել քամու հարուցչից, և կարող է առաջանալ քամու հանդեպ հակակրանք: Պայմանավորված սննդարար ցիի թուլությամբ ու քամու ցրվող բնույթով՝ հիվանդի սրտի բաբախյունը լողացող է ու չափավոր: Ընդհանուր առմամբ, թայյանի քամու ներթափանցման մոդելի հիմնական ախտանիշներն են՝ տենդ, քամու հանդեպ հակակրանք, ինքնաբուխ քրտնարտադրություն և լողացող չափավոր սրտազարկ:

| | |
|---|---|
| ［曾经译法］/ *հին թարգմանություն* | |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | սննդարար-ցիի թուլություն և պաշտպանիչ ցիի հիպերակտիվություն, ուժեղ պաշտպանիչ գործոն՝ թույլ սննդարար գործոնով (卫强营弱), պաշտպանիչ ցիի ավելցուկ և սննդարար ցիի անբավարարություն (卫强营弱) |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | թույլ սննդարար և ուժեղ պաշտպանիչ |

Մեջբերումներ 引例.

Թայյան հիվանդությունը, որին բնորոշ են տենդն ու ուժեղ քրտնարտադրությունը, վկայում է թույլ սննդարար և ուժեղ պաշտպանիչ ցիի մասին: Դա է քրտնարտադրության պատճառը: Քամու հարուցչով պայմանավորված հիվանդությունների բուժման պատշաճ բանաձևը գույժի եփուկն է (Դարչնի ճյուղերի եփուկ) *(Ցրտահարության վնասվածքների քննախոսություն):*

Դրանով կարելի է բացատրել նախորդ հոդվածի «լողա-

ցող պաշտպանիչ յանը հանգեցնում է տենդի, իսկ թույլ սննդարար ինը՝ քրտնարտադրության» մեջբերումը: Սա նշանակում է, որ այսպիսի ախտանշանների պատճառը թույլ սննդարարն ու ուժեղ պաշտպանիչն են: Սննդարար ցին ավելի է թուլանում՝ պայմանավորված մարմնի հեղուկների կորստով, իսկ պաշտպանիչ ցին ավելի է ուժեղանում՝ պայմանավորված ախտածին քամու ներթափանցումով *(Բժշկական զգուշացումներ)*:

**Ուժեղ սնուցում և թույլ պաշտպանություն**
**ինցիան ուեյրուո 营强卫弱**

Եզրույթը վերաբերում է թայյան ցրտի վնասվածքի մոդելի ախտաբանությանը, երբ սննդարար ինը սահմանափակ է, իսկ պաշտպանական ինը՝ դժվարացած: Ցուրտն ին հարուցիչ է և հակված է հարձակվել սննդարար ինի վրա: Երբ ախտածին ցուրտը ներթափանցում է օրգանիզմ, սննդարար ցին, պայմանավորված վարընթաց շարժումով և ապակտիվությամբ, մարմնի ներսում խոչընդոտում է պաշտպանիչ ցիին՝ թույլ չտալով, որ պաշտպանիչ ցին տարածվի մարմնի մակերեսին և ջերմացնի մաշկը, ուստի արդյունքում ի հայտ է գալիս ցրտի հանդեպ հակակրանք: Ավելին, երբ ախտածին ցուրտը դրսից սեղմում ու փակում է ծակոտիները, նկատվում է քրտնարտադրության բացակայություն և լողացող ու լարված սրտազարկ: Վերջապես, պաշտպանիչ-սննդարար ցիերի աններդաշնակությունն ու փակված միջօրեականներն ու օժանդակ ուղիները կարող են հանգեցնել գլխացավերի, ծոծրակի ձգման ու ցավի և հոդացավերի: Ընդհանուր առմամբ, թայյանի արտաքին ավելցուկային մոդելի հիմնական ախտանիշներն են տենդը, ցրտի հանդեպ հակակրանքը, քրտնարտադրության բացակայությունը, գլխացավը, ծոծրակի, հոդերի ցավը և լողացող լարված սրտազարկը:

［曾经译法］/ *հին թարգմանություն*

［现行译法］ *նոր թարգմանություն* թույլ պաշտպանություն՝ ուժեղ սննդարար բաղադրիչով (卫弱营强), թույլ պաշտպանական ցի և ուժեղ սննդարար ցի (卫弱营强), անբավարար պաշտպանիչ ցի և առատ սննդարար ցի (卫弱营强)

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* ուժեղ սննդարար և թույլ պաշտպանիչ

Մեջբերումներ 引例.

Երբ ախտածին ցուրտը նվաճում է սննդարար ցին, ի հայտ է գալիս սննդարար գործոնի ավելցուկ և պաշտպանիչ գործոնի անբավարարություն: Դրա ախտանիշներն են քրտնարտադրության բացակայությունն ու քամու հանդեպ հակակրանքը՝ որպես ուժեղ սննդարար գործոնի (կանգով պայմանավորված) և թույլ պաշտպանիչ գործոնի (սահմանափակումներով պայմանավորված) արդյունք *(«Ցրտահարության մասին քննախուզության» խոր իմաստն ու կիրառության հնարամիտ միջոցները)*:

Մահուանգի՝ էֆեդրայի եփուկը, որը քրտնարտադրություն է առաջացնում, հարկ է օգտագործել հնոցը թեթևացնելու համար, որի պատճառը ցիի հակահոսքի ավելացումն է՝ պայմանավորված ուժեղ սննդարար և թույլ պաշտպանիչ գործոնով *(Ցրտահարության վնասների ուղեցույց)*:

## Հինգ զգացմունքները վերածվում են կրակի ուժի հուա հուո 五志化火

Եզրույթը վերաբերում է ախտաբանական փոփոխու-

թյանը, որի պատճառը հինգ զգացմունքների և մտավոր գործունեության, մասնավորապես՝ զայրույթի, ուրախության, չափից շատ մտածելու, տխրության և վախի ավելցուկն է: Երկարաժամկետ հեռանկարում դրանք առաջացնում են ջերմություն և վերածվում կրակի: «Հինգ զգացմունքները վերածվում են կրակի» կամ «կրակի վերածվող հինգ զգացմունքների ավելցուկ» արտահայտությունները վերաբերում են ախտաբանական փոփոխությունների, որոնք առաջանում են մտավոր և զգացմունքային գերլարման հետևանքով, ինչն ազդում է զան-ֆու օրգանների, էական ցիի ու ինի և յանի համակարգման և հավասարակշռության վրա՝ հանգեցնելով յանի ավելցուկի, հիպերակտիվության, զան-ֆու օրգանների հակահոսքի կամ ցիի սահմանափակման և լճացման, որը վերածվում է յանի ու կրակի, եթե սահմանափակումն ու լճացումը երկար են տևում: Օրինակ, անկառավարելի զգացմունքներից ու ճնշումից առաջացած ներքին վնասվածքը հաճախ հանգեցնում է լյարդի ցիի սահմանափակման և լճացման, ինչը հետագայում վերածվում է լյարդի կրակի: Մյուս օրինակն այն է, որ զայրույթը վնասում է լյարդը՝ հանգեցնելով հիպերակտիվության և լյարդի ցիի հակահոսքի, որը, հնարավոր է, վերածվի լյարդի կրակի:

［曾经译法］ *հին թարգմանություն* կրակի համախտանիշ՝ հինգ զգացմունքների խանգարումների հետևանքով, ԿՐԱԿ ԱՐՏԱԴՐՈՂ ՀԻՆԳ ԶԳԱՑՄՈՒՆՔ, կրակի համախտանիշ՝ հինգ զգացմունքների խանգարումների հետևանքով, հինգ զգացմունքները ձևափոխվում են կրակի: Հինգ ավելցուկային զգացմունքները վերածվում են ներքին կրակի:

［现行译法］ *նոր թարգմանություն* հինգ զգացմունքների խանգարումներով պայմանավորված ջերմության համախտանիշեր, հինգ զգացմունք, որ վերածվում է կրակի, զգացմունքային սթրեսով պայմանավորված կրակի համախտանիշ, հինգ

զգացմունքների ձևափոխում կրակի, հինգ մտքի ձևափոխում կրակի, հինգ միտք, որ վերածվում են կրակի

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Հինգ զգացմունքները վերածվում են կրակի:

Մեջբերումներ 引例.

Լիու Հեջիանը մի անգամ ասաց, որ չափազանց շատ հինգ զգացմունքները կարող են վերածվել կրակի *(Դանսիի բժշկության վարպետություն):*

Վրդովմունքն ու գերլարումը կարող են հանգեցնել հինգ զգացմունքների ավելցուկի, որոնք կարող են վերածվել կրակի ու հանգեցնել կաթվածի: Ախտաբանությունն այն է, որ ծայրահեղ ջերմությունը կրակ է ծնում *(«Հիվանդության պատմություն. կլինիկական պրակտիկայի ուղեցույց»):*

Ի լրումն դրա, որոշ հիվանդներ կաթված են ունենում հինգ զգացմունքների ավելցուկի պատճառով, որոնք կարող են վերածվել ուժեղ ներքին ջերմության: Ովքեր հավատացած են, որ այդպիսի կաթվածի պատճառը քամին է, տեսնում են միայն ճյուղն ու մոռանում արմատի մասին *(«Բազմակողմանի բժշկություն բժիշկ Ժան Լուից»):*

## Լյարդի յանը փոխակերպվում է քամու գանյան հուա ֆեն 肝阳化风

Եզրույթը վերաբերում է լյարդի ինի և երիկամի ինի հյուծմամբ պայմանավորված ախտաբանական փոփոխություններին, որտեղ երիկամը (ջուր) չի կարողանում սնել լյարդը (փայտ), ուստի լյարդի յանի հիպերակտիվությունն ու հակահոսքն առանց սահմանափակման քամի են բարձրացնում: Հիմնականում քամու փոխակերպվող լյարդի յանը

պայմանավորված է զգացմունքների ճնշումով, ինչը հանգեցնում է ներքին վնասվածքի և փոխակերպվում կրակի՝ այդպիսով վնասելով ինը: Մյուս հավանականությունն այն է, որ գերլարումը կարող է սպառել ու վնասել լյարդի ինն ու երիկամի ինը՝ հանգեցնելով ինի անբավարարության և յանի հիպերակտիվության: Այսպիսով, լյարդի յանը լողում է ու չի կարող ճնշվել, իսկ դրա հիպերակտիվությունն ու հակահոսքը փոխակերպվում են տատանվող քամու: Կլինիկական տեսանկյունից, այն դրսևորվում է գլխապտույտով, ուշագնացությամբ, մկանային կծկումներով, վերջույթների թմրածությամբ ու դողով, դիմային նյարդի կաթվածով կամ հեմիպլեգիայով: Ծայրահեղ ծանր դեպքերում կարող է լինել գիտակցության կորուստ ցիի ու արյան հակահոսքի պատճառով, ինչպես նաև կաթված և կոլապս: Նման դեպքերում դիտարկվում են քամու վերածված լյարդի յանի օրինակներ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Լյարդ-յանը վերածվում է լյարդ-քամու: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ներքին քամի՝ չափազանց շատ լյարդի յանի հետևանքով, լյարդի յան, որը փոխակերպվում է քամու, լյարդի յանի փոխակերպում քամու, քամու վերածվող լյարդի յանի համախտանիշ/մոդել |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Լյարդի յանը փոխակերպվում է քամու: |

Մեջբերումներ 引例.

Լյարդից ցիի վերընթաց հակահոսքն իր հետ տանում է նախարարական կրակը, ուստի ցիի հետ կապված հիվանդությունների մեծ մասը դրսևորում է լյարդի ցիի հակահոսքի ախտաբանություն, որի ընթացքում այն ներթափանցում է

ստամոքս կամ լյարդ հիպերակտիվ յան, որը փոխակերպվում է քամու *(Պասակարգված մոդելներ՝ բուժման հսպակ մեխանիզմներով):*

Հիվանդի ձախ ձեռքի արագացած զարկերակն ու աջ ձեռքի թույլ զարկերակը վկայում են երիկամի ինի անբավարարության մասին, որը չի կարողանում սնուցել և խոնավեցնել լյարդը և հետևաբար, լյարդի յանը դառնում է հիպերակտիվ ու վերածվում քամու *(«Հիվանդության պատմություն. կլինիկական պրակտիկայի ուղեցույց»):*

Հիպերակտիվ լյարդի յանը ձևափոխվում է քամու, դրա ներթափանցումն ազդում է փայծաղի ու ստամոքսի վրա՝ հանգեցնելով փոխադրման և ձևափոխման խանգարումների: Արդյունքում, չհեռացվող խոնավությունը կուտակվում է խորխի տեսքով, որը հոսում է դեպի լյարդի ու լեղապարկի միջօրեականներ *(«Չինսիանի առանձնապան հիվանդության պատմություն»):*

**Ինի անբավարարությունը քամի է ծնում**
**ինսու շեն ֆեն 阴虚生风**

Եզրույթը վերաբերում է լյարդի ինի ու երիկամի ինի հյուծումով պայմանավորված ախտաբանական փոփոխության, որը հանգեցնում է նրան, որ ջլերը զրկվում են սնուցումից, իսկ քամին սկսում է տարուբերվել ներսում: Այն, որ ինի անբավարարությունը քամի է ծնում, հաճախ պայմանավորված է ին-հեղուկի անբավարարությամբ, որը վրա է հասնում տենդային հիվանդությունների ուշ փուլում, կամ պայմանավորված է տարիքի պատճառով լյարդում և երիկամում ին-հեղուկների բնական սպառմամբ: Անբավարարությունը թույլ չի տալիս, որ ին հեղուկները սնեն ու խոնավեցնեն ջլերն ու անոթները, ինչն առաջացնում է ներքին քամի: Կլինիկական տեսանկյունից այն դրսևորվում է վերջույթների դողով ու

մկանների կծկումներով, որոնք ուղեկցվում են ինի հյուծման այնպիսի ախտանիշներով, ինչպիսիք են սուբֆիբրալ ջերմությունը, գիշերային քրտնարտադրությունը, ոսկրային համակարգի խանգարումները, լեզվի կարմրությունը՝ թեթև նստվածքով ու թքով, հաճախացած ու թույլ սրտազարկը: Քանի որ սա իր էությամբ անբավարարության ախտաբանական փոփոխություն է, ախտանիշները հիմնականում մեղմ են ու չափավոր ու սովորաբար նկատվում են տարիքով հիվանդների և տենդային կամ խրոնիկական հիվանդների դեպքում:

| | |
|---|---|
| ［曾经译法］<br>*հին թարգմանություն* | / |
| ［现行译法］<br>*նոր թարգմանություն* | ինի անբավարարությամբ պայմանավորված ներքին քամի, քամի առաջացնող ինի ասթենիա, քամի առաջացնող ինի անբավարարություն |
| ［标准译法］<br>*ստանդարտ թարգմանություն* | Ինի անբավարարությունը քամի է ծնում: |

Մեջբերումներ 引例.

Սա վկայում է այն մասին, որ ինի անբավարարությունը քամի է ծնում, այլ ոչ թե հանգեցնում ախտածին ցիի արտաքին կրճատման *(Խորասուզվելով Մատերիա Մեդիկայի նկարագրության մեջ):*

Ցիի անբավարարությունը ստեղծում է խորխ, իսկ ինի անբավարարությունը՝ քամի: Քամու ախտածին գործոնը խորխի հետ անցնում է միջօրեականներով՝ քարացնելով հոդերը *(«Չեն Լիաֆանի հիվանդության պատմություն»):*

Լյարդի ու ստամոքսի ինի անբավարարությունը, որտեղ քամի է ծնվում, ու տեղի է ունենում վերջույթների ատրոֆիա, կարելի է վերացնել բուժման պահպանողական մեթոդներով: Դեղորայքային միջոցները, որոնք հարկ է օգտագործել, հետևյալն են՝ շուդի (Radix Rehmanniae Praeparata, ռեմանիայի արմատ,) նիուսի (Radix Achyranthis Bidentatae, երկատամ աքիրանթեզի արմատ), յուանջի (Radix Polygalae, բարակատերև իշկաթնուկի արմատ), քիզի (Fructus Lycii, գայլապտուղ), շիհու (Caulis Dendrobii, դենդրոբիումի ցողուն) և գութեն (Ramulus Uncariae Cum Uncis, գամբիրի բույս) (Դասակարգված մոդելներ՝ բուժման հստակ մեխանիզմներով):

## **Արյան անբավարարությունը քամի է ծնում**
## **սյուեսու շեն ֆեն 血虚生风**

Եզրույթը վերաբերում է արյան անբավարարությամբ պայմանավորված ախտաբանական փոփոխությանը, որը հանգեցնում է ջլերի վատ սնուցմանն ու անբավարար քամու ներքին թեթև տարուբերումներին: Դրա պատճառը հաճախ ոչ բավարար քանակով արյան արտադրությունն է կամ արյան զգալի կորուստը: Մյուս պատճառը լյարդի անբավարար արյունն է, որը չի կարողանում սնուցել ջլերը՝ խրոնիկական հիվանդություններով պայմանավորված սննդարար արյան սպառման ու վնասվածքի պատճառով: Երրորդ պատճառն այն է, որ արյունը չի կարողանում սնուցել զուգահեռականները: Կլինիկական տեսանկյունից այն դրսևորվում է վերջույթների թմրածությամբ, ջլերի ու մկանների կծկումներով և նույնիսկ վերջույթների դողով ու ջղաձգումներով, ինչն ուղեկցվում էր արյան անբավարարության ախտանշաններով: Քանի որ այս ախտաբանական փոփոխությունն իր էությամբ անբավարարության մոդել է, քամու տատանումների դրա ախտանշանները համեմատաբար մեղմ ու չափավոր են:

[曾经译法] *հին թարգմանություն* Արյան անբավարարությունը կարող է հանգեցնել քամու համախտանիշի, արյան անբավարարությունը քամի է ծնում: Քամու համախտանիշ՝ արյան անբավարարության պատճառով:

[现行译法] *նոր թարգմանություն* ներքին քամի՝ պայմանավորված արյան անբավարարությամբ, քամի ստեղծող արյան ասթենիա, քամի արտադրող արյան անբավարարություն, արյան անբավարարություն, որը քամի է առաջացնում, ներքնածին քամու առաջացում՝ պայմանավորված արյան անբավարարությամբ, արյան անբավարարության համախտանիշ/մոդել՝ քամու ստեղծմամբ, քամի արտադրող արյան անբավարարություն, քամի ստեղծող արյան անբավարարության համախտանիշ/մոդել

[标准译法] *ստանդարտ թարգմանություն* Արյան անբավարարությունը քամի է առաջացնում:

Մեջբերումներ 引例.

Եթե ի հայտ են գալիս տենդային նոպաներ կամ նմանատիպ այլ ախտանշաններ, ապա պատճառն այն է, որ լյարդի միջօրեականի արյան անբավարարությունը քամի է ծնում: Այս դեպքում բուժման համար հարկ է կիրառել Սիվու եփուկ (չորս բաղադրիչների եփուկ)՝ թիանմայի և գոութենգոուի համադրությամբ *(Բազմակողմանի բժշկություն՝ բժիշկ Ժան Լուից):*

Այն հիվանդների դեպքում, որոնք մեծ քանակով արյուն են կորցրել, և որոնց արյան անբավարարությունը քամի է ստեղծում, հարկ է կիրառել Սյաոյաո փոշին (Ազատ թափա-

ռականի փոշի)՝ չուանսյունի, ցինսիանցիի և սիակուցաոյի համադրությամբ *(Արյան համախտանիշերի քննախուսություն):*

Դուհուո Ջիշենի եփուկը (խավավոր հրեշտակախոտ և ճագոմ) հիմնականում օգտագործվում է արյան անբավարարության հետծննդաբերական ախտանիշները բուժելու համար, ինչպիսիք են ձեռքերի ու ոտքերի դողէրոցքը, ջլերի սպազմն ու լարվածությունը, մկանների հաճախակի թրթռոցն ու հեմիպլեգիան *(Արդյունավետ բանաձևեր բժիշկների սերունդներից):*

**Ծայրահեղ ջերմությունը քամի է ծնում**
**ռեջի շեն ֆեն 热极生风**

Եզրույթը վերաբերում է ախտաբանական փոփոխության, որի պատճառն ինտենսիվ ախտածին ջերմությունն է, որը վնասում է սննդարար արյունը, այրում լյարդի միջօրեականը, ջլերը զրկում սնուցումից, ինչը հանգեցնում է սպազմի, լարվածության և ջղակծկումների: Ախտաբանությունն այն է, որ լարված ախտածին ջերմությունը չորացնում է մարմնի հեղուկները, վնասում սննդարար արյունը, այրում լյարդի միջօրեականն ու հանգեցնում նրան, որ ջլերը քարանում ու ձգվում են: Կլինիկական տեսանկյունից, այն դրսևորվում է ջղաձգային գլխապտույտի, վերջույթների դողէրոցքի, աչքերի սպիտակության և օպիստոտոնուսի տեսքով, ուղեկցվում բարձր ջերմությամբ, գիտակցության կորստով, զառանցանքով և այլն: Քանի որ դրա ախտաբանական պատկերը պայմանավորված է ջերմության ախտածին գործոնի հիպերակտիվությամբ, այն իր էությամբ ավելցուկային է և հաճախ ընկած է դրսից փոխանցվող տենդային հիվանդությունների հիմքում:

［曾经译法］ *հին թարգմանություն* ԾԱՅՐԱՀԵՂ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՄԻ Է ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ, քամի բարձրացնող ծայրահեղ ջերմություն: Ծայրահեղ ջերմությունը քամի է ծնում, չափազանց բարձր ջերմությունը քամի է առաջացնում

［现行译法］ *նոր թարգմանություն* ներքին քամի՝ պայմանավորված ախտածին ջերմության գերառատությամբ, քամի առաջացնող ծայրահեղ ջերմություն, քամի բարձրացնող ավելցուկային ջերմություն, քամի ծնող ինտենսիվ ջերմություն, ծայրահեղ ջերմության համախտանիշ/մոդել՝ քամու առաջացմամբ, քամի արտադրող ծայրահեղ ջերմություն

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Ծայրահեղ ջերմությունը քամի է ծնում:

Մեջբերումներ 引例.

Կամ ծայրահեղ ջերմությունը քամի է առաջացնում, այսինքն՝ չորության ու ջերմության ներքին զսպումը հանգեցնում է լեզվի քարացման, կարկամախտի և մկանային ցնցումների *(Խոր քանաչներ՝ Դեղին կայսեր պարզ զրույցի ներշնչանքով):*

Մանկական հիվանդությունների մեծ մասի պատճառը ծայրահեղ բարձր ջերմությունն է, որը քամի է առաջացնում, ինչն էլ հանգեցնում է մանկական ցնցումների, ուստի ջերմությունը պետք է իսկույնևեթ չեզոքացնել *(Համառոտ բժշկական ուղեցույց):*

Այս բուժումը կիրառվում է՝ քամի բարձրացնող ծայրահեղ ջերմության մոդելը բուժելու համար, ուստի ջերմությունն իջեցնելու համար կիրառվում են լիանցիաո (Fructus

Forsythiae, լացող ֆորսիտիայի դեղապատիճ) և ժույե (Folium Phyllostachydis Henonis, բամբուկի տերև) *(Քննախոսություն սեզոնային հիվանդությունների մասին):*

**Արյան չորությունը քամի է ծնում**
**սյուեցաո շեն ֆեն 血燥生风**

Եզրույթը վերաբերում է ախտաբանական փոփոխության, որը դրսևորվում է չոր մաշկով ու քորով, ինչպես նաև թեփոտությամբ, որի պատճառն այն է, որ արյունն անբավարար է, և հեղուկները չեն կարողանում խոնավեցնել ու սնել մկաններն ու մաշկը: Արյան չորությունը, որն արտադրում է ներքնածին քամի, հաճախ կապված է բնահյութի ու արյան սպառման, խրոնիկական հիվանդությունների, բնահյութի ու արյան անբավարարության՝ պայմանավորված ծերությամբ, արյան արտադրության անբավարարության՝ պայմանավորված երկարաժամկետ ոչ պատշաճ սննդակարգով կամ արյան արտադրության թերֆունկցիայի հետ՝ պայմանավորված ստատիկ արյան կուտակմամբ, ինչը հանգեցնում է հեղուկների ու արյան հյուծման, ինչն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ այն այլևս չի կարողանում խոնավեցնել և սնուցել մկաններն ու մաշկը ու փոխակերպվում է քամու: Կլինիկական տեսանկյունից, այն բնութագրվում է չոր կամ թեփոտած մաշկով, քորով, մաշկի թեփոտությամբ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | արյան չորությունը ներքնածին քամի է առաջացնում |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | քամի առաջացնող/արտադրող արյան չորություն, արյան չորությունը ներքին քամի է բարձրացնում, արյան չորությունը քամի է ստեղծում, արյան չորությունը քամի է բարձրացնում |

［标准译法］ Արյան չորությունը քամի է առաջացնում:
*ստանդարտ*
*թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Կանանց եղնջացանը պայմանավորված է լյարդի միջօրեական զայրույթի կրակով և ներքին քամով, որը պայմանավորված է արյան չորությամբ *(Արդյունավետ և լիարժեք դեղատոմսեր կանանց հիվանդությունների համար):*

Չոր մաշկը, նիհարությունը, քորը, ցավը, արյունահոսող քերծվածքներն ու քերծվածքների սպիտակ նստվածքը՝ առանց արյունահոսության, պայմանավորված են ներքնածին քամով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է արյան չորությամբ և ջերմությամբ, որը զսպված քամու հետևանք է *(Հիվանդությունների պատմության ժողովածու արտաքին մոդելներում):*

Հիվանդներին, որոնք ունեն լյարդի միջօրեականում քամի առաջացնող արյան չորության խնդիր, պետք է բուժել երիկամաջուր սնուցելով և լյարդի արյուն ստեղծելով, որը մարում է կրակն ու քամին՝ քորը դադարեցնելու համար *(Ջինյուեի երկերի լիակատար ժողովածու):*

**Հողի լճացում և փայտի ճնշում**
**թույուն մույու 土壅木郁**

Եզրույթը վերաբերում է այն ախտաբանական փոփոխությանը, որի դեպքում լյարդի ցիի լճացումը և դրա բարձրացման և իջեցման խանգարումը հանգեցնում են նրան, որ լյարդն այլևս չի կարողանում կառավարել ցիի ազատ հոսքը: Այն հայտնի է նաև լյարդի ճնշում անունով, որը պայմանա-

վորված է փայծաղի խոնավությամբ կամ փայտին հակազդող հողով, քանի որ ըստ հինգ տարրի տեսության՝ փայծաղը պատկանում է հողին, իսկ լյարդը՝ փայտին: Մխալ սննդակարգը վնասում է փայծաղն ու ստամոքսը՝ հանգեցնելով նրան, որ փայծաղն այլևս չի կարողանում փոխադրել, և առաջանում է ներքին խոնավություն: Փայծաղի հողն, այսպիսով, խիստ ծանրաբեռնվում է, ինչը հանգեցնում է էներգիայի միջին կենտրոնում ցիի լճացման, իսկ դրա բարձրացման և իջեցման խանգարումը հանգեցնում է նրան, որ լյարդն այլևս չի կարողանում կառավարել ցիի ազատ հոսքը: Կլինիկական տեսանկյունից այն բնութագրվում է վատ մարսողությամբ, ստամոքսի փքվածությամբ, վատ ախորժակով, թույլ կղանքով և լեզվի յուղոտ նստվածքով, ինչը պայմանավորված է փայծաղը ծանրաբեռնող խոնավությամբ: Հետագա ախտանիշներից են հիպոքոնդրիկ ճնշող ցավն ու մտավոր դեպրեսիան, որոնք լյարդի ցիի լճացման հետևանք են: Բերանում կարող է առաջանալ դառնահամ և դեղնություն, եթե խոնավ ջերմությունն ազդի ցիի ազատ հոսքը կառավարող փայծաղի վրա՝ հանգեցնելով հակահոսքի և լեղու լցվածության:

［曾经译法］/
*հին թարգմանություն*

［现行译法］hողի լճացում և փայտի ճնշում
*նոր թարգմանություն*

［标准译法］hողի լճացում և փայտի ճնշում
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Ստամոքսի խանգարումներով հիվանդների դեպքում ի հայտ են գալիս այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ստա-

մոքսի փքվածությունն ու ցավը ստամոքսի վերին՝ նախասրտային հատվածում, որը խցանման զգացողություն է առաջացնում անդրկողային մասում, որտեղով անցնում է լյարդի միջօրեականը: Սրանք լյարդի ցիի լճացման դրսևորումներ են, որոնք հանգեցնում են նրան, որ լյարդն այլևս չի կարողանում կառավարել ցիի ազատ հոսքը *(«Պարզ զրույց» և «Հոգևոր առանցք» դասակարգված ժողովածու և հակիրճ ծանոթագրություններ):*

Փայծաղը կառավարում է մկանները, և այսպիսով, մարմնի ավելցուկը վկայում է այն մասին, որ փայծաղի խոնավությունը ծանրաբեռնում է լյարդը, ու լյարդն այլևս չի կարողանում կառավարել ցիի ազատ հոսքը՝ ի հայտ բերելով այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են որովայնի փքվածությունը, միզարձակության և կղարձակման արգելքները *(Չլուծված հարցերի բացատրություն «Պարզ զրույցում»):*

Լորձն ու ցին միմյանց կապելը հանգեցնում է լյարդի ցիի լճացման և լյարդի ցիի ճնշման, ինչն էլ իր հերթին բերում է լյարդի դիսֆունկցիայի *(Ժան Յուցինի հիվանդության պարմությունը):*

### **Հողը չի կարողանում վերահսկել ջուրը**
### **թու բու ժիշույ 土不制水**

Եզրույթը վերաբերում է այն ախտաբանական փոփոխությանը, որը բնութագրվում է խոնավության լճացմամբ ու կանգով, պայմանավորված նրանով, որ փայծաղի թույլ հողը չի կարողանում փոխադրել, ձևափոխել ու վերահսկել հեղուկներն ու խոնավությունը: Հինգ տարրերի տեսության համաձայն՝ փայծաղը պատկանում է հողին, իսկ երիկամը՝ ջրին: Բնականոն վիճակում փայծաղի հողը վերահսկում է ջուրը, որպեսզի ապահովի պատշաճ փոխադրում և փոխակերպում՝ կանխելով ախտածին փքվածությունը:

Սակայն երբ փայծաղի հողը թույլ է և չի կարողանում վերահսկել ջուրը, կարող է ի հայտ գալ չափից շատ լցված լինելու զգացողություն և այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են այտուցները և հարբուխը՝ խորխի առկայությամբ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ՋՈՒՐԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՀՈՂԻ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ: Հողը չի կարող վերահսկել ջուրը, հողը չի կարող զսպել ջուրը: Փայծաղը չի կարող զսպել ջուրը (երիկամ): |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | Հողը չի զսպում ջուրը, հողն անկարող է վերահսկել ջուրը, հողի՝ ջուրը զսպելու անկարողություն, փայծաղն ի զորու չէ զսպել երիկամը, հողը (փայծաղ) չի կարող վերահսկել ջուրը (երիկամ): |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Հողը չի կարողանում վերահսկել ջուրը: |

Մեջբերումներ 引例.

Երիկամի յանի անբավարարությունն ի զորու չէ ջերմացնել լյարդի յանը, ինչը հանգեցնում է փայծաղի հողի թուլության, և այն չի կարողանում վերահսկել ջուրը: Այսպիսով, կարող է ի հայտ գալ ջրի խելահեղ հոսք, էներգիայի եռակի աղբյուրի ջրուղիների արգելակում և ցիի արգելակում միջօրեականներում: Երբ ցիի շարժումը մարդու մարմնում խանգարվում է, բնականաբար ի հայտ է գալիս հևոց: Երբ չվերահսկվող ջուրը ներթափանցում է միջօրեականներ ու օժանդակ ուղիներ, ի հայտ է գալիս այտուցվածություն, հատկապես ոտքերում, ոտնաթաթերում և աչքերի տակ *(Միսրաքանության քննարկում Եռակի պատճառագիտության դոկտրինի հիման վրա):*

Սովորաբար փայծաղի ցիի իջեցման և նախնական ցիի

հյուծման դեպքում փայծաղի հողը չափազանց թույլ է, որ վերահսկի ջուրը, ուստի ի հայտ են գալիս փքվածության խնդիրներ *(Յանի ընկրանիքի բանաչներ):*

Խորխը ձևափոխվում է ջրից, որը սկզբնավորվում է երիկամից ու ստեղծվում փայծաղից… Այն, որ խորխն արտադրում է փայծաղը, պայմանավորված է նրանով, որ փայծաղը չի կարողանում փոխադրել ու ձևափոխել սնունդն ու խմիչքը, ինչպես նաև վերահսկել ջուրն ու խոնավությունը *(Ջինյուեի երկերի լիակատար ժողովածու):*

**Փայտի կրակը թուլացնում է մետաղը մուհուո սին ջին 木火刑金**

Եզրույթը վերաբերում է ախտաբանական փոփոխությանը, որը տեղի է ունենում, երբ լյարդի ինտենսիվ կրակի վերընթաց հակահոսքը թուլացնում է թոքը, երբ զտում ու մաքրում է ցին: Սա նաև հայտնի է «թոք ներթափանցող լյարդի կրակ» անունով: Ըստ հինգ տարրերի տեսության՝ լյարդը պատկանում է փայտին, իսկ թոքը՝ մետաղին, այստեղից էլ առաջացել է անվանումը: Ֆիզիոլոգիական տեսանկյունից, լյարդի ցին բարձրանում է, իսկ թոքի ցին՝ իջնում: Դրանք հակադիր են, բայց փոխադարձաբար լրացնում են իրար՝ միմյանց զսպելով, կանխելով ավելցուկը կամ անբավարարությունը: Եթե լյարդի ցին զսպված է, ցիի ճնշումը կարող է վերածվել կրակի, իսկ կրակը կարող է այրել թոքի օժանդակ ուղիներն ու վնասել թոքը՝ ցին զտելու նպատակով: Այսպիսով, կարող են ի հայտ գալ կլինիկական ախտանիշներ, որոնցից են գրգռվածությունը, նյարդային վիճակը, կրծքավանդակի հիպոքոնդրիկ ցավը, բերանում դառնահամը, աչքերի կարմրությունը, հազը, հևոցն ու արյունային հազը:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | ՓԱՅՏԻ ԿՐԱԿԸ ՎՆԱՍՈՒՄ Է ՄԵՏԱՂԸ: Փայտի կրակը վնասում է մետաղը: Փայտի կրակն այրում է մետաղը: |
| [现行译法] *նոր թարգմանություն* | փայտի կրակը վնասում է մետաղը, փայտի կրակը տանջում է մետաղը, փայտի (լյարդ) կրակը տանջում է մետաղը (թոք) |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Փայտի կրակը վնասում է մետաղը: |

Մեջբերումներ 引例.

Արյունային հազը, ձայնի կորուստը, նիհարությունը, դեմքի կարմրությունը վկայում են այն մասին, որ փայտի կրակը վնասում է մետաղը, և պետք է համապատասխան բուժում կիրառել *(Ծերունի Յիփիաոյի հիվանդության պատմությունը Սաոյե պանը):*

Հազը, որը պայմանավորված է փայտի կրակով և վնասում է մետաղը, պետք է բուժվի Ժիսոու փոշու օգնությամբ (հազը դադարեցնող փոշի)՝ ավելացնելով չայհու (Radix Bupleuri, չինական տորովակի արմատ), ժիցիաո (Fructus Aurantii, նարնջի պտուղներ) և չիշաո (Radix Paeoniae Rubra, քաջվարդի արմատ) *(Բիհուայի բժշկական գործեր):*

Անդադար հազն ու խեղդոցը, նույնիսկ սրտխառնոցն ու ործկումը, որոնք պայմանավորված են նրանով, որ փայտի կրակը վնասում է մետաղը, հարկ է բուժել գլխավորապես լյարդը մաքրելու և թոքը խոնավեցնելու համար *(Գանշան պնակի հիվանդության պատմություններ):*

## Զավակ-օրգանն ազդում է մայր-օրգանի վրա
## ցի դաո մուցի 子盗母气

Խոսքը թերի զավակ-օրգանի ախտաբանության մասին է, որը, հինգ տարրերի (այն է՝ զանօրգաններ) ստեղծման օրենքի համաձայն, ազդում է մայր-օրգանի վրա: Օրինակ, փայծաղի հողը մայր-օրգանն է, իսկ թոքի մետաղը՝ զավակ-օրգանը: Թոքի ցիի անբավարարությունը կարող է ազդել փայծաղի վրա, այն է՝ զավակ-օրգանն ազդում է մայր-օրգանի վրա՝ այդպիսով խախտելով փայծաղի ցիի տեղափոխումն ու հանգեցնելով ցի աղբյուրի բացառման: Կլինիկական տեսանկյունից, այն դրսևորվում է ստամոքսի անանցանելիությամբ, հոգնածությամբ, գունատ ու անփայլ դեմքով, նիհարությամբ և այլն: Մեկ այլ օրինակ էլ վերաբերում է լյարդի ու սրտի միջև մայր-զավակ հարաբերություններին: Սրտի արյան անբավարարությունը կհանգեցնի լյարդի արյան անբավարարության, ինչն էլ կհանգեցնի սիրտ-լյարդ արյան անբավարարության:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | զավակ-օրգանի հիվանդությունը կարող է ներառել նաև մայր-օրգանը, հիվանդություն, որի ժամանակ զավակը գողանում է մայրական ցին |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | զավակ-օրգանի հիվանդությունը կարող է ներառել նաև մայր-օրգանը, զավակ-օրգանի՝ մայր-օրգանի վրա ազդող հիվանդություն: Զավակ-օրգանը գողանում է ցին մայր-օրգանից: Զավակ-օրգանի խանգարումն ազդում է մայր-օրգանի վրա: |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Զավակ-օրգանն ազդում է մայր-օրգանի վրա: |

Մեջբերումներ 引例.

Անքնությունը տեղի է ունենում սրտի ցիի անբավարարության հետևանքով, ինչի պատճառն այն է, որ զավակ-օրգանն ազդում է մայր-օրգանի վրա, ինչի արդյունքում կարող է առաջանալ հոգևոր և մտավոր անհանգստություն *(Շիշանի արչանագրություններ):*

Դեմքի գունատությունն ախտածին ցիի ներխուժման հետևանք է, երբ առողջ ցին թուլանում է, որովհետև զավակ-օրգանն ազդում է մայր-օրգանի վրա *(Զննման և ախտորոշման ընթացքում պահպանվող սկզբունքներ):*

Այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են խռպոտ ձայնը, կոկորդի ցավն ու հազը՝ վարդագույն թարախի կամ արյան առկայությամբ, պայմանավորված են երիկամի ինի անբավարարությամբ, որը հանգեցնում է կրակի անբավարարության և այրում է թոքի մետաղը. սա մայր-օրգանի վրա զավակ-օրգանի ազդեցության մոդել է *(Ունժայի դեպքերի արչանագրություն):*

**Մայր-օրգանն ազդում է զավակ-օրգանի վրա մուբին ջի ցի 母病及子**

Եզրույթը վերաբերում է մայր-օրգանի ախտաբանությանը, որն ազդում է զավակ-օրգանի վրա՝ հինգ տարրերի, այսինքն՝ զան-օրգանների առաջացման օրենքի համաձայն: Օրինակ, երիկամը պատկանում է ջրին, լյարդը՝ փայտին, իսկ ջուրը փայտ է ստեղծում, հետևաբար, երիկամը մայր-օրգանն է, իսկ լյարդը՝ զավակ-օրգանը: Եթե երիկամի հիվանդությունն անդրադառնում է լյարդի վրա, այն նկարագրվում է՝ որպես մայր-օրգան, որն ազդում է զավակ-օրգանի վրա: Կլինիկական տեսանկյունից, այն աչքի է ընկ-

նում լյարդ-յան հիպերակտիվությամբ. պատճառն այն է, որ երիկամի ինը չափազանց անբավարար է՝ լյարդի փայտը սնելու համար, ինչը հանգեցնում է լյարդ-ին անբավարարության, ու այդպիսով ինը չի կարողանում զսպել յանը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ՄԱՅՐ-ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԴՈՒՄ Է ԶԱՎԱԿԻ ՎՐԱ: Մայր-օրգանի հիվանդությունը կարող է ազդել զավակ-օրգանի վրա, հիվանդ մայրն ազդում է երեխայի վրա, մոր օրգանի հիվանդությունն ազդում է երեխայի վրա |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | մայր-օրգանի խանգարումներն ազդում են զավակ-օրգանի վրա, մայր-օրգանի խախտումներն անդրադառնում են զավակ-օրգանի վրա, մայր-օրգանի խանգարումն ազդում է զավակ-օրգանի վրա, մոր ներքին օրգանների հիվանդություններն ազդում են երեխայի վրա, մայր-օրգանի խանգարում, որն ազդում է զավակ-օրգանի վրա: |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Մայր-օրգանն ազդում է զավակ-օրգանի վրա |

Մեջբերումներ 引例.

Ըստ հինգ տարրերի տեսության՝ թոքը պատկանում է մետաղին, որի մայրը հողն է: Եթե ստամոքսի հողի խոնավ ջերմությունը չեզոքացվում է, էներգիայի վերին կենտրոնում այն անպայման կգոլորշացնի թոքը: Սա «մայր-օրգանն ազդում է զավակ-օրգանի վրա» մոդելի օրինակ է *(«Չորս բժիշկների հիվանդության պայմանություն, Լիու Բաոժի»):*

Գոյություն ունի «մայր-օրգանն ազդում է զավակ-օրգանի վրա» մոդել: Օրինակ, թոքի հիվանդությունը կարող է

հանգեցնել երիկամի խանգարումների *(Իսկական բժշկական սկզբունքների փոխանցում)*:

Լողացող սրտի բաբախյունը վկայում է անբավարարության մասին, իսկ լարանման բաբախյունը ենթադրում է, որ մայր-օրգանն ազդում է զավակ-օրգանի վրա, որը լյարդի վրա ազդող երիկամի հիվանդության արդյունք է *(«Պարզ զրույցի» մեկնաբանություն)*:

**Կարծր զանգը չի կարող զնգալ**
**ջինշի բու մին 金实不鸣**

Եզրույթը վերաբերում է ախտաբանական փոփոխությանը, որը դրսևորվում է խռպոտ ձայնի կամ նույնիսկ անձայնության տեսքով՝ թոքի ցիի ավելցուկի պատճառով: Կոկորդը թոքի դարպասն է, մաքուր ու պղտոր ցիի մուտքի և ելքի ճանապարհը և գլխավոր ձայնային օրգանը: Թոքի ցին հանգեցնում է նրան, որ կոկորդում ձայնալարերը թրթռում են և հնչյուն արտադրում, այսպիսով, թոքը կառավարում է ձայնը: Ֆիզիոլոգիական տեսանկյունից, թոքի ցիի ազատ ու հարթ հոսքն ու բավականաչափ թոքի ինը համատեղ նպաստում են անխոչընդոտ շնչառությանը, ինչպես նաև բարձր և հստակ ձայնին: Ախտաբանական տեսանկյունից, եթե ցուրտ քամին կամ տաք քամին հարձակվում է թոքի վրա, թոքի ցին ի վիճակի չի լինում բնականոն ձևով ցրվել, և կարող են ի հայտ գալ այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են խռպոտ ձայնը, ձայնի բացակայությունը, կոկորդի քորն ու ցավը: Քանի որ, ըստ հին տարրերի տեսության, թոքը վերաբերում է մետաղին, ապա ախտաբանական փոփոխությունը նկարագրվում է այսպես՝ «կարծր զանգը չի կարող զնգալ»:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ԴԻՍՖՈՆԻԱ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՉԱՓԱԶԱՆՑ ԾԱՏ ՄԵՏԱՂՈՎ, կարծր զանգը չի կարող հնչել, կոտրված զանգը չի կարող զնգալ |

| | |
|---|---|
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | Կարծր զանգը չի կարող զնգալ: Կարծր զանգը չի կարող զնգալ (խռպոտություն կամ դիսֆոնիա՝ պայմանավորված թոքի սթենիայի համախտանիշով), խռպոտություն՝ պայմանավորված արտաքին ախտածին գործոնների հարձակմամբ, արգելակված թոք, որը բնականոն ձևով չի գործում, խլացած մետաղը չի կարող հնչյուն արձակել: |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | Կարծր զանգը չի կարող զնգալ: |

Մեջբերումներ 引例.

Աֆոնիան (անձայնություն) մեծ մասամբ վկայում է թոքի հիվանդությունների մասին: Դրա պատճառն ամենայն հավանականությամբ սուր հիվանդություններն են, որոնք ի հայտ են գալիս ախտածին ցիհ և ցիհ վերընթաց հակահոսքի սահմանափակման արդյունքում, կամ խրոնիկական հիվանդությունները՝ որպես հեղուկների և արյան հյուծման արդյունք… Սա նկարագրվում է հետևյալ կերպ՝ «կարծր զանգը չի կարող զնգալ» կամ «կոտրված զանգը չի կարող զնգալ» *(Բազմակողմանի բժշկություն բժիշկ Ժան Լուից):*

Հազն ու խռպոտ ձայնը հաճախ վկայում են «կարծր զանգը չի կարող զնգալ» կամ «կոտրած զանգը չի կարող զնգալ» մոդելի մասին: «Կարծր զանգ» համախտանիշով հիվանդներին հարկ է բուժել մաքրող և զտող մեթոդով, իսկ «կոտրված զանգ» համախտանիշով հիվանդներին՝ լրացուցիչ թերապիայով: Երկու դեպքում էլ բուժման թիրախը թոքն է *(Բժշկության առանցքային օղակ):*

Հազով պայմանավորված անձայնությունը կարելի է

բաժանել չորս տեսակի՝ նոր ձեռք բերված, խրոնիկական, անբավարար և ավելցուկային: Նոր ձեռք բերված խանգարումը հաճախ պատկանում է ավելցուկային տեսակին, որին հատուկ է խորխային օբստրուկցիան և սահմանափակումը, որը նկարագրվում է հետևյալ կերպ՝ «կոտրված զանգը չի կարող զնգալ» *(«Ոսկե խցիկի հիմնական դեղատոմսերի» լրացումներ):*

**Կոտրված զանգը չի կարող զնգալ**
**ջինփո բու մին 金破不鸣**

Եզրույթը վերաբերում է ախտաբանական փոփոխության, որը դրսևորվում է խռպոտ ձայնով կամ նույնիսկ անձայնությամբ՝ պայմանավորված հեղուկների սպառմամբ և խոնավության բացակայությամբ, որը թոքի ցիի և թոքի ինի խանգարման և անբավարարության արդյունք է: Ըստ հինգ տարրերի տեսության՝ թոքը վերաբերում է մետաղին: Եթե թոքի ցին վնասված է, իսկ թոքի ինը՝ անբավարար, անբավարարության կրակը կվառվի ներսում՝ ի հայտ բերելով այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են թույլ ձայնը, ձայնի խռպոտությունը կամ նույնիսկ անձայնությունը, կամ չոր և փոքր-ինչ ցավոտ կոկորդը, ինչը նկարագրվում է հետևյալ կերպ՝ «կոտրված զանգը չի կարող զնգալ»:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | դիսֆոնիա՝ կոտրված մետաղի հետևանքով, կոտրված մետաղական զանգը չի կարող զնգալ: Խցանված զանգը չի զնգում: |
| [现行译法] *նոր թարգմանություն* | Կոտրված կոչնակը ձայն չի հանում: Կոտրված զանգը չի հնչում (աֆոնիա՝ պայմանավորված թոքային ցիի սթենիայով, հանկարծակի աֆոնիա), թոքի դիսֆունկցիայով պայմանավորված խռպոտ ձայն, վնասված թոքը բնականոն չի գործում, կոտրված մետաղը չի հնչում |

［标准译法］Կոտրված զանգը չի կարող զնգալ:
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Հազով պայմանավորված խռպոտ ձայնի պատճառը հավանաբար այն է, որ խորխը սեղմված է մնում թոքում, ինչը նկարագրվում է հետևյալ կերպ՝ «պինդ զանգը չի կարող զնգալ», կամ թոքի ցիի վնասմամբ, որը նկարագրվում է հետևյալ կերպ՝ «կոտրված զանգը չի կարող զնգալ» *(Խոցերի և վերքերի բուժման լիակատար ժողովածու):*

Ժամանակին չբուժելու դեպքում թոքախտային հիվանդության հետևանքով տեղի ունեցած ախտահարումը և ներքնածին գործոններով պայմանավորված հազը կհանգեցնեն աֆոնիայի: Սա համապատասխանում է «կոտրված զանգը չի կարող զնգալ» մոդելին *(Երեք խորհրդանշանով բժշկական քանասպեղծություններ):*

**Կենսագործունեության կարգավորում՝ ըստ սեզոնային փոփոխությունների**
**սիցի թյաոշեն 四气调神**

Եզրույթը վերաբերում է կենսագործունեության կարգավորմանը տարվա չորս եղանակների կլիմայական և ֆենոլոգիական փոփոխությունների համաձայն: Տարվա չորս եղանակների ընթացքում կյանքի արմատն ինի ու յանի փոփոխությունն է, որը բնորոշվում է գարնանը ծաղկելով, ամռանը աճելով, աշնանը բերքահավաքով և ձմռանը պահուստավորմամբ՝ օրենք, որին պետք է հետևեն մարդ արարածները: Հետևաբար, առողջության պահպանման պրակտիկան պետք է համապատասխանի տարվա չորս եղանակների

կլիմայական և ֆենոլոգիական փոփոխություններին: Միայն այդ դեպքում կպահպանվի մարդու կենսագործունեության և բնական սեզոնային փոփոխությունների ներդաշնակությունը: Մասնավորապես, ինչ վերաբերում է առօրյա կյանքին, հարկ է, որ գարնան և ամռան ամիսներին մարդիկ շուտ պառկեն քնելու և առավոտյան վաղ արթնանան: Յան ցիի աճը, բարգավաճումն ու տարածումը խթանելու նպատակով մարդը պետք է նաև զբոսանքի գնա, ձգումներ անի և չափավոր կերպով մասնակցի բացօթյա միջոցառումների: Աշնանն ու գարնանը (բնության մեջ վերացման, քողարկման և պահպանման սկզբունքների համաձայն) մարդը պետք է վաղ գնա քնելու, համեմատաբար կրճատի ակտիվ գործունեությունը և խուսափի արտածին ցրտի ներխուժումից՝ հանուն յան ցիի կապակցման և պահուստավորման: Ինչ վերաբերում է հոգևոր կարգավորմանը, գարնանն ու ամռանը նախընտրելի է հանգստանալ և ուրախ լինել, իսկ աշնանն ու ձմռանն անհրաժեշտ է հանդարտ ու խաղաղ լինել և պահպանել հոգու զսպվածությունը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | կարգավորել կենսագործունեությունը՝ ըստ տարվա չորս եղանակների բնական փոփոխությունների |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | կարգավորել կենսագործունեությունը՝ ըստ սեզոնային փոփոխությունների |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | կարգավորել կենսագործունեությունը՝ սեզոնային փոփոխությունների համաձայն |

Մեջբերումներ 引例.

Կենսագործունեությունը պետք է կարգավորել սեզոնային փոփոխությունների համաձայն: Կլիմայական փոփոխությունները կարելի է սահմանել ըստ հինգ շրջանների տե-

սության: Սերունդների ցիկլը նման է մոր և մանկան, սահմանափակման ցիկլը՝ ամուսնու և կնոջ հարաբերություններին *(Սուն դինասփիայի Հույցուն կայսեր սուրբ բարեհաճության դասական գործ):*

Ժանի սովորական դեղատոմսում դեղամիջոցների ավելացումն ու բացառումը կատարվում են տարվա չորս եղանակներին ինի և յանի ելնելու կամ իջնելու համաձայն, ինչը համապատասխանում է Դեղին կայսեր «Բժշկության ներքին կանոնի» «կենսագործունեությունը սեզոնային փոփոխությունների համաձայն կարգավորելու» սկզբունքին *(Չինական բժշկության ժողովածու):*

Կենսագործունեությունը սեզոնային փոփոխությունների համաձայն կարգավորելը հին չինացի իմաստունների կողմից հիվանդությունները և խանգարումները կանխարգելելու բանալին է *(Սահմանված բանաձևերի արդյունավետ կիրառում):*

### Հանդարտություն և անգոյություն
### թիանդան սուվու 恬惔虚无

Եզրույթը նշանակում է, որ մարդու միտքը խաղաղ ու հանդարտ է, ազատ ցանկություններից և ձգտումներից: Ավանդական չինական բժշկությունն ընդգծում է զգացմունքային գործունեության և ֆիզիկական բարեկեցության հարաբերությունը և համարում է, որ ներքին օրգանները և դրանց ստեղծած բնահյութն այնպիսի զգացմունքների հիմք են, որոնք իրենց հերթին ազդում են մարդու մարմնի վրա: Հետևաբար, ըստ չինական ավանդական բժշկության մեջ առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման սկզբունքի, կարևոր է զարգացնել հոգևոր առողջությունն ու պահպանել առողջ ցին: Հոգևոր ոլորտի կարգավորման տեսանկյունից առաջնահերթությունները

հետևյալն են՝ ներքին խաղաղության հաստատում, չափից շատ ցանկությունների զսպում, խռնարհ և վայելուչ մոտեցում, անտարբերություն փառքին կամ հարստությանը և մշտապես բարեփոխում՝ բացասական զգացմունքներից խուսափելու համար: Այդպիսով մարդը կարող է պահպանել հանդարտ միտքն ու հոգին, որպեսզի հնարավոր լինի կարգավորել ինչպես զան-ֆու օրգանները, այնպես էլ ցին և արյունը, հասնել ցիի ազատ հոսքին, կայուն վիճակում պահպանել ինն ու յանը և հաստատել մարմնի և հոգու ներդաշնակություն: Այսպես մարդը կարող է վայելել առողջությունն ու երկարակեցությունը:

| | |
|---|---|
| ［曾经译法］<br>*հին թարգմանություն* | / |
| ［现行译法］<br>*նոր թարգմանություն* | հանդարտ և մտահոգություններից ու ցանկություններից ազատ, խաղաղված միտք, անտարբերություն փառքին կամ եկամտին, մաքուր միտք և խուսափում ագահությունից |
| ［标准译法］<br>*ստանդարտ թարգմանություն* | հանդարտություն և անզոյություն |

Մեջբերումներ 引例.

Պահպանեք հանդարտությունն ու անզոյությունը, ազատվեք ցանկություններից ու ձգտումներից, և մարմնում առողջ ցին կլինի ներդաշնակ, հոգին կմնա ներսում: Եթե այդպես լինի, ապա ինչպե՞ս կարող են ի հայտ գալ հիվանդություններ *(Պարզ զրույց):*

Այսպիսով, իմաստունները երբեք բնության դեմ ոչինչ չեն անում: Նրանք խաղաղ կյանք են վարում, բոլոր ցանկություններից ու ձգտումներից ազատ, ու երջանիկ են զգում:

Դա է պատճառը, որ վայելում են կյանքի բնական շարունակականությունը *(«Պարզ զրույց»):*

Անվրդովությունն ու անգոյությունը վերաբերում են խաղաղությանն ու լռությանը: Հետևելով «Դաոսիզմի» խաղաղության ու լռության սկզբունքին՝ մարդը կարող է ներքին ցին պահպանել կարգուկանոնի մեջ ու պաշտպանել այն ախտածին ցիից *(«Պարզ զրույց» Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում, ծանոթագրությունը՝ Ուան Բինի):*

### Ոչինչ չի կարող վնասել նրան, ով ժամանակին կանգ է առնում
### ժիժի բուդայ 知止不殆

Եզրույթը նշանակում է, որ մարդը, ով գիտի, թե երբ կանգ առնել, վտանգի չի ենթարկվի: Ավանդական չինական բժշկությունն ընդգծում է զգացմունքների ու առողջության հարաբերությունը և համոզված է, որ յոթ զգացմունքների ավելցուկը կարող է ուղղակի վնաս հասցնել զան-ֆու օրգաններին՝ հանգեցնելով ցի-շարժման խանգարման և հետագա հիվանդությունների: Բացասական զգացմունքները կանխելու համար շատ կարևոր է, որ մարդիկ կրճատեն իրենց ցանկություններն ու հասկանան, թե երբ է պետք կանգ առնել՝ կարիքի և իրականության միջև բախումը բացառելու համար: Եթե մարդը չափազանց շատ ցանկություններ ու կարիքներ ունի, ուրեմն առավել հակված է դեպրեսիայի, հուսահատության, տխրության, թախծի ու զայրույթի, երբ նրա ցանկությունները չեն կատարվում, և դա հանգեցնում է հոգեխանգարման, ցի շարժման խանգարումների և հետագա հիվանդությունների: Միայն նվազագույն ցանկությունների, մտքի խաղաղության ու հոգու պաշտպանության դեպքում կարելի է հասնել զան-ֆու օրգաններում ցի-արյան ներդաշնակության, ցիի ազատ հոսքի, ուժեղ իմունային համակարգի և երկարակեցության:

［曾经译法］/ *հին թարգմանություն*

［现行译法］/ *նոր թարգմանություն*

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* Անգոյությունը չի կարող վնասել նրան, ով ժամանակին կանգ է առնում:

Մեջբերումներ 引例.

Փառք թե կյանք. ո՞րն է ավելի թանկ: Կյանք թե հարստություն. ո՞րն է ավելի արժեքավոր: Փառքի, հարստության թե կյանքի կորուստ. ո՞րն է ավելի վատ: Փառքի հանդեպ չափազանց մեծ սերը թանկ է արժենում, իսկ բարիքների կուտակումը հանգեցնում է աղետալի կորուստների: Հետևաբար, մարդը, ով գոհ է իր ունեցածով, չի խայտառակվի, ու ոչինչ չի վնասի մարդուն, ով գիտի ժամանակին կանգ առնել: Նա ընդմիշտ ապահով է ու անվտանգ *(Լաո Ցզի):*

Բարձր կարգավիճակ ունեցողը նախընտրում է մոռանալ իր առավելության մասին, իսկ ցածր կարգավիճակ ունեցողը գոհ է իր ունեցածից: Ոչ մեկը չի նախանձում, և ոչինչ չի կարող վնասել նրան, ով ժամանակին կանգ է առնում *(Նախնական բժշկական ցուցումներ):*

## Ապրել ինի և յանի սկզբունքով
## ն ա յու ինյան 法于阴阳

Առողջության պահպանումը պետք է իրականացնել բնության մեջ ինի ու յանի սկզբունքի համաձայն: Դեղին կայսեր «Բժշկության ներքին կանոնի» համաձայն՝ տարվա չորս եղանակների կլիմայական և ֆենոլոգիական փոփո-

խությունները կարող են ներգործել մարդու կենսագործունեության վրա: Հետևաբար, հարկ է պաշտպանել առողջությունը բնության մեջ ինի և յանի փոփոխությունների համաձայն՝ ֆիզիկական գործառույթները կարգավորելու, շրջակա միջավայրի փոփոխությունների հանդեպ հարմարվողականությունը բարելավելու և տարվա չորս եղանակների ախտածին ցիից պաշտպանվելու համար: Դրանից հետո գաղափարը կարևոր ուղեցույց է դարձել հետագա սերունդների առողջության պահպանման և առողջապահության համար, և դասականները մշտապես ներառել են այն պատմության ամբողջ ընթացքում:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Ին-յան օրենքի համաձայն |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | պահպանել ինի և յանի օրենքը, հետևել ինի և յանի օրենքին |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | պահպանել ինի և յանի սկզբունքը |

Մեջբերումներ 引例.

Հին ժամանակներում իմաստուն մարդը, որը գիտեր առողջությունը պահպանելու միջոցները, հետևում էր ինի և յանի սկզբունքին, էական ցին կարգավորում ու սնուցում էր Շուշուով (առողջության պահպանման մեթոդներ և տեխնիկա) *(Պարզ զրույց):*

Ոչ քմահաճ և անմեղ էությունը դրսևորվում է նախ հոգին կարգավորելու և մշակելու քննարկումից առաջ: Կարևոր է հետևել ինի ու յանի սկզբունքին, ապա կարգավորել կենսագործունեությունը տարվա չորս եղանակների կլիմայական և

ֆենոլոգիական փոփոխությունների համաձայն *(«Դանիի բժշկության վարպետություն». կից լրացումներ):*

**Էական ցիի կարգավորում և սնուցում Շուշուով**
**հե յու շուշու 和于术数**

Եզրույթը վերաբերում է էական ցին կարգավորելու և սնուցելու նպատակով համապատասխան մեթոդների կիրառմանը: Շուշուն (术数, բառացի, մեթոդներ և թվեր) վերաբերում է մեթոդներին կամ տեխնիկային, որով մարդիկ գուշակություններ են անում, հաջողություն բերում և հեռու վանում չարիքը, ինչպես նաև խորհրդածում մարդկանց ու պետությունների բախտի ու ճակատագրի մասին՝ հիմնվելով այնպիսի ոլորտների գիտական իմացության վրա, ինչպիսիք են աստղագիտությունը, օրացույցն ու երաժշտությունը: Այն իրականացվում է «երկնքի և մարդու միասնականության» և «երկնքի և մարդու փոխազդեցության տեսությունների» համաձայն, ին-յան տեսության և հինգ տարրերի տեսության շրջանակներում: Հիմնվելով թվերի մասին մի շարք օրենքների վրա՝ բնության մեջ նկատելի երևույթները հետազոտելու համար օգտագործվում են զանազան մեթոդներ: Այստեղ Շուշուն վերաբերում է առողջության պահպանման միջոցներին, ինչպիսիք են դաոինն ու մերսումը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | / |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | առողջությունն ամրապնդող միջոցների ճշտում |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | կարգավորել և սնուցել էական ցին Շուշուով |

Մեջբերումներ 引例.

Հին ժամանակներում իմաստուն մարդը, ով գիտեր առողջության պահպանման մեթոդները, հետևում էր ինի և յանի սկզբունքին, կարգավորում ու սնուցում էական ցին Շուշուով (առողջության պահպանության մեթոդներ և միջոցներ) *(«Պարզ զրույց»):*

Հե (和) նշանակում է կարգավորում, իսկ շուշու՝ էական ցին կարգավորելու և սնուցելու միջոցներ *(«Պարզ զրույցի» ծանոթագրությունների ժողովածու Դեղին կայսեր «Բժշկության ներքին կանոնում»):*

Շուշուն ընդհանուր եզրույթ է, ներառում է շնչառական և ֆիզիկական վարժություններ, ինչպիսիք են ներշնչումն ու արտաշնչումը, մերսումը, ծնոտի, բերքի ու պահուստավորման պահպանման մեթոդներ, որոնք քննարկվում են «Հոգու կարգավորման հիմնական խնդիրներ՝ ըստ տարվա չորս եղանակների փոփոխությունների» բաժնում: Այն ներառում է նաև «ինը կայուն է, յանը՝ սեղմ» գաղափարը՝ «Կյանքի և մահվան փոխհարաբերության քննարկման մեջ», «յոթ խանգարում և ութ օգուտ» գաղափարը՝ «Ինի և յանի տեսության և բնության մեջ ամեն ինչի համապատասխան հարաբերությունների հիմնական քննարկման» մեջ, «երկար կյանք՝ անփոփոխ աչքերով ու ականջներով» գաղափարը «Հոգևոր առանցքի» «Հոգու հիմնական վիճակ» բաժնում և սննդակարգեր, ինչպես նաև կենսակերպեր, որոնք նկարագրվում են այս տեքստի հաջորդ մասում *(«Պարզ զրույցի» ծանոթագրություններ և մեկնաբանություններ «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

**Յոթ թերություն և ութ առավելություն ցիսուն բայի 七损八益**

Եզրույթը վերաբերում է հին ժամանակներում սեռական կյանքի յոթ վնասակար և ութ օգտակար կողմերին: Ըստ բամբուկե թերթերի մակագրությունների՝ «Թիան Սիա Ժի Դաո Թանի» («Զրույցներ երկնքի տակ բարձրագույն մեթոդի մասին»), որը պեղել են Չանշայի Մավանդուիի Հան գերեզմաններում, «ութ առավելությունները սրանք են. առաջին, սեռական կյանքը կարգավորում է շնչառությունը, երկրորդ, խթանում է թքարտադրությունը, երրորդ, պահպանում է ժամանակի զգացողությունը, չորրորդ, պահպանում է նախնական ցին, հինգերորդ, ներդաշնակեցնում է ին հեղուկները, վեցերորդ, կուտակում է էական ցին, յոթերորդ, պահպանում է էական ցիի առատությունը, ութերորդ, պահպանում է հանդարտությունն ու հավասարակշռությունը: Յոթ թերություններն են՝ ներքին արգելափակում (սեռական օրգանների ցավ սեռական ակտի ընթացքում), արտահոսք (քրտնարտադրություն սեռական ակտի ընթացքում), հյուծում (ցիի սպառում սեռական ակտի ընթացքում), անկարողություն (իմպոտենցիա), գրգռվածություն (անհանգստության զգացում և հևոց սեռական ակտի ընթացքում), անելանելիություն (բռնություն, երբ զուգընկերը ցանկություն չունի) և վատնում (շտապողականություն)» (英文翻译参考: *Դուգլաս Ուայլ. Ննջասենյակի արվեստ. չինական սեքսուալ յոգայի դասական ուղեցույց՝ կանանց համար նախապեսված մեդիտացիայի տեքստերով: Նյու Յորք, Նյու Յորքի պետական համալսարանի հրատարակչություն, 1992թ., էջ 81):*

［曾经译法］ *հին թարգմանություն* ՅՈԹ ԹԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԹ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ, յոթ վնասակար մեթոդ և ութ արդյունավետ միջոց սեռական կյանքում

［现行译法］ *ընր թարգմանություն* յոթ թերություն և ութ օգուտ, յոթ հիվանդություն և ութ բուժում, յոթ խախտում և ութ առավելություն

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* յոթ խանգարում և ութ օգուտ

Մեջբերումներ 引例.

Ինը և յանը կարելի է ներդաշնակեցնել, եթե հետևենք յոթ թերությունների և ութ առավելությունների օրենքներին: Հակառակ դեպքում մարդիկ ժամանակից շուտ կծերանան *(«Պարզ զրույց»):*

Յոթ թերությունները ու ութ առավելությունները հասկանալը կօգնի կանխել ինի գերակշռությունն ու յանի անբավարարությունը, և հետևաբար, այսպես հնարավոր է հասնել ինի և յանի ներդաշնակության *(Չլուծված խնդիրների բացատրություն «Պարզ զրույցում»):*

Կարելի է խոհեմաբար պահպանել սեփական բնածին ցին, եթե մարդը չամուսնանա քանը լրանալուց առաջ և պահպանի յոթ թերությունների և ութ առավելությունների պատվիրանները, որոնք առաջ էին քաշում իմաստունները *(Հետևելով բժշկական սկզբունքներին):*

**Բուժում՝ ըստ ախտաբանական փոփոխությունների միտումների**
**ինշի լիդաո** 因势利导

Խոսքն այնպիսի իրավիճակների մասին է, երբ երևույթները զարգանում են ախտաբանական փոփոխությունների միտումների համաձայն՝ այդպիսով նպաստելով նպատակ-

ների իրականացմանը: Ավանդական չինական բժշկության մեջ կարևոր է դիտարկել հիվանդությունների բուժման բոլոր գործոնները, ներառյալ, իհարկե, դրանց ընթացքը, տեղակայումն ու բնութագիրը և համապատասխանությունն ինի և յանի ավելացման և նվազման տեսությանը, ինչպես նաև զան-ֆու օրգաններում ցիի ու արյան շրջանառությանը: Նաև կարևոր է ընտրել լավագույն պահը, լիարժեք համախմբել և օգտագործել ֆիզիոլոգիական մեխանիզմն ու մարդու մարմնի՝ հիվանդությունների դեմ պայքարելու, ցրելու, բուժման ընթացքում «ինը և յանը ինքնաբուխ ներդաշնակեցնելու» ունակությունը, հարմարվել բուժման ամենահամապատասխան տեսակին և խթանել ավտոմատ ինքնակարգավորումը՝ ինի և յանի, ցիի և արյան հավասարակշռությունը վերականգնելու նպատակով: Օրինակ, ըստ մարմնի վերին, ստորին, արտաքին ու ներքին տեղակայման հիվանդությունների տարբեր պայմանների՝ կարելի է կիրառել բուժման տարբեր եղանակներ, ինչպիսիք են ործկումը, մաքրումն ու մակերեսային թեթևացումը, որոնք կնպաստեն հիվանդության ամենապարզ և ամենաարագ բուժմանը: Այդ դեպքում առողջ ցին չի վնասվի կամ հնարավորինս քիչ կվնասվի, և լավագույն արդյունքի կարելի է հասնել ամենաքիչ ծախսով:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | բուժում՝ ըստ ախտաբանական փոփոխությունների միտումների |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | բուժում՝ ախտաբանական փոփոխությունների միտումների համաձայն |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | բուժում՝ ըստ ախտաբանական փոփոխությունների միտումների |

Մեջբերումներ 引例.

Ինչ վերաբերում է փորլուծությանը... Ախտածին ցին կուժեղանա, եթե կիրառվի ցիի ավելացման մեթոդը, իսկ կրակի մաքրումը կխորացնի փորլուծության ախտանիշները: Եթե հիվանդությունը բուժվի ախտաբանական փոփոխությունների միտումների համաձայն, այս դժվար բուժելի վիճակը կթեթևանա *(Քարե սենյակի գաղտնի գրառումներ):*

Խոր սրտազարկով հիվանդների մարմնում կա ախտածին ցի: Նրանց բուժելը համեմատաբար հեշտ կլինի լուծողական մեթոդով, ինչի արդյունքում կհեռացվեն ախտածին գործոնները. սա համապատասխանում է ախտաբանական փոփոխությունների միտումների համաձայն բուժման սկզբունքին *(«Ոսկե խցիկի հիմնական դեղատոմսերի» ըմբռնում):*

Մալարիայի բռնկումն առավոտյան ժամերին պայմանավորված է ախտածին գործոնների վերին տեղակայմամբ, որը յան փուլում է: Այն հարկ է բուժել ախտաբանական փոփոխությունների միտումների համաձայն, նշանակել սիառ չայհու եփուկ (եզան լեզվի եփուկ)՝ ավելացնելով ժիցիառ (Fructus Aurantii, նարնջի պտուղներ) և ջիեգեն (Radix Platycodonis, պլատիկոդոնի արմատ) *(Բազմակողմանի բժշկություն բժիշկ Ժան Լուից):*

### Հասնել ին-յանի հավասարակշռության ին փին ուեյ ցի 以平为期

Եզրույթը նշանակում է, որ բուժման նպատակը մարդու ներսում ինի և յանի հարաբերական հավասարակշռության վերականգնումն է: Ըստ ավանդական չինական բժշկության՝ ֆիզիոլոգիական մեխանիզմը պետք է լավ աշխատի,

որպեսզի պահպանվի առողջ վիճակը, զան-ֆու օրգանների ու հյուսվածքների, ինչպես նաև մարդու և շրջակա միջավայրի միջև դինամիկ հավասարակշռությունը: Հակառակ դեպքում ի հայտ կգան հիվանդություններ: Այսպիսով, ընդհանուր առմամբ հիվանդության բուժումն իրենից ներկայացնում է շեղումների վերացում և ներքին ու արտաքին միջավայրի միջև հարաբերությունների համակարգում, որի նպատակը հավասարակշռության պահպանումն է: Ինի կամ յանի գերակշռության կամ անբավարարության ճշգրտումների հետ մեկտեղ, դրանք ճիշտ քանակի հասցնելու համար հարկ է կարգավորել ցիի, արյան և զան-ֆու օրգանների աններդաշնակությունը, ինչպես նաև վայրէջքի և վերելքի խախտումները, որի արդյունքում հավասարակշռությունը կվերականգնվի:

［曾经译法］
*հին թարգմանություն*

［现行译法］/
*նոր թարգմանություն*

［标准译法］հասնել ին-յան հավասարակշռության
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Ին-յան հավասարակշռության հասնելու համար կարգավորումից առաջ պետք է մանրամասն ուսումնասիրել ինի և յանի տեղակայումը *(«Պարզ զրույց»):*

Բնույթով սառը հիվանդությունները բուժելիս հարկ է կիրառել ջերմ դեղամիջոցներ և ընդունել դրանք, երբ շոգ է: Նպատակն է՝ հասնել ին-յան հավասարակշռության և չչարաշահել դեղամիջոցների օգտագործումը. սա է բուժման բանալին *(«Գիրք կյանքեր փրկելու մասին»):*

Բուժման ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում ավելցուկը հեռացնելուն, անբավարարությունը լրացնելուն, մարդկանց մեջ ին-յան հավասարակշռություն հաստատելուն *(Կոնֆուցիականների պարպականությունները ծնողների հանդեպ):*

**Ներքին վիճակի մասին դատողություն անել՝ ուսումնասիրելով արտաքին դրսևորումները**
**սիուայ չուայնեյ 司外揣内**

Եզրույթը, որը նաև անվանում են «ճանաչել ներսը դրսից», վերաբերում է ճանաչողական մեթոդին, որի միջոցով մարդիկ պատկերացում են կազմում ներքին վիճակի մասին՝ ուսումնասիրելով արտաքին դրսևորումները: Ըստ Մենցիուսի «Գաոցի Մաս 2»-ի՝ «ներսը պետք է արտացոլվի դրսում». սա նշանակում է, որ հին ժամանակներում մարդիկ հասկացել էին ներքին էության ու արտաքին դրսևորումների փոխազդեցությունը, և այն, որ ներքին փոփոխությունները կարող են արտացոլվել արտաքին ասպեկտներում: Հետևաբար, ուսումնասիրելով արտաքին դրսևորումները, կարելի է որոշակիորեն հասկանալ ներքին մեխանիզմները: Կյանքի երևույթներին հետևելու և դրանք նույնականացնելու միջոցով ավանդական չինական բժշկությունը հասել է ընկալողական ճանաչողության զարգացմանը: Այն բացահայտում և ամփոփում է մարդ արարածի ներքին էության և արտաքին վիճակի անխախտ հարաբերությունը: Հետագայում սահմանվում է գաղափարը, և ավարտին է հասցվում «արտաքին դրսևորումների» ուսումնասիրությունը, որն «օգնում է ներքին վիճակի մասին եզրակացություն անել՝ դիտարկելով արտաքին դրսևորումները»: Ապա գաղափարը զարգանում է նույնականացման և դատողությունների միջոցով՝ հասնելով «ներքին վիճակի մասին դատողություն անելու» մակարդակին: «Դատողություն անելն» ըստ էության տրամաբա-

նական մտածողության գործընթաց է՝ դրսևորումների ուսումնասիրությունից մինչև գաղափարի զարգացում, և ներառում է դատողությունների ու խորհրդածությունների ամբողջ գործընթացը: Հետևաբար, «ներքին վիճակի մասին եզրակացություն անել՝ դիտարկելով արտաքին դրսևորումները» գաղափարը ցույց է տալիս մտածողության այն միջոցներն ու մեթոդները, որոնք կիրառվում են՝ «դրսևորում-վիճակ» մակարդակում կյանքի օրենքը հասկանալու համար

［曾经译法］/ *հին թարգմանություն*

［现行译法］ *նոր թարգմանություն* ներսի մասին դատողություն անել՝ դիտարկելով դուրսը, ներսի մասին կանխատեսում անել՝ ուսումնասիրելով դուրսը, ներսի մասին դատել՝ ելնելով դրսի ուսումնասիրությունից, ուսումնասիրել դուրսը՝ ներսի մասին կանխատեսումներ անելու համար

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* ներքին վիճակի մասին դատել՝ ուսումնասիրելով արտաքին դրսևորումները

Մեջբերումներ 引例.

Ներքին ախտաբանական փոփոխությունների մասին պետք է դատողություն անել՝ ուսումնասիրելով հիվանդի արտաքին դրսևորումները: Իր հերթին, արտաքին դրսևորումների մասին կարելի է պատկերացում կազմել՝ հասկանալով զան-ֆու օրգանների ներքին խանգարումները *(«Հոգևոր առանցք»):*

Արտաքին դրսևորումներին հետևելն առողջ տեղեկատվություն է տրամադրում մարդու զան-ֆու օրգանների մասին և օգնում կանխատեսումներ անել, թե ինչ հիվանդություններ կարող են ի հայտ գալ *(«Հոգևոր առանցք»):*

Իրենց բնականոն վիճակը համեմատելով հիվանդների ոչ բնականոն վիճակի հետ և ուսումնասիրելով արտաքին դրսևորումները՝ բժիշկները պատկերացում են կազմում ներքին ախտաբանական փոփոխությունների մասին: Սրանք են այն մեթոդները, որ նրանք կիրառում են՝ որոշակի երևույթների գերակշռությունը և/կամ անբավարարությունը պարզելու համար *(«Պարզ զրույց»):*

**Նուրբ նշաններից եզրակացնել նշանակալի փոփոխությունների մասին**
**ծիանուեյ ժիժու 见微知著**

Նուրբ նշանները կարող են վկայել զգալի փոփոխություն-ների ու արդյունքների մասին, որոնք տեղի են ունենում մար-դու օրգանիզմում: Փոխաբերական իմաստով, սա նշանա-կում է փոքր երևույթների հիման վրա մեծ իրադարձություն-ներ կանխատեսել: Չինական ավանդական բժշկության հա-մաձայն՝ ուեյը (微, նուրբ կամ փոքր) վերաբերում է մարմնի օրգաններում տեղի ունեցող փոքր, տեղային բնույթի փոփո-խություններին, և ժուն (著, նշանակալի)՝ մարմնի ակնհայտ, ընդհանուր վիճակին: Եզրույթը նշանակում է, որ տեղական բնույթի մանր փոփոխությունները կարող են վկայել ամբողջ մարմնի ֆիզիոլոգիական և ախտաբանական վիճակի մա-սին, այն է՝ ընդհանուր վիճակն արտացոլվում է տեղական բնույթի նուրբ փոփոխությունների մեջ, քանի որ ամբողջ մարմնում հիվանդությունները կարող են դրսևորվել բազմա-թիվ ձևերով: Ուսումնասիրելով այս նուրբ փոփոխություննե-րը՝ կարելի է որոշել ընդհանուր վիճակը: Սրտազարկի, դեմ-քի, լեզվի ու ականջի ուսումնասիրություններն այս սկզբուն-քի պրակտիկ կիրառման ձևեր են:

［曾经译法］/
*հին թարգմանություն*

［现行译法］ / *նոր թարգմանություն*

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* նուրբ նշաններից եզրակացնել զգալի փոփոխությունների մասին,

Մեջբերումներ 引例.

Բուժել հիվանդությունը, երբ այն ի հայտ է գալիս. ահա թե ինչ է անում ցածրակարգ բժիշկը: Փորձառու բժիշկը կարող է տեսնել նշանակալի փոփոխությունները նուրբ նշանների օգնությամբ և սաղմնային վիճակում ոչնչացնել բոլոր հնարավոր վտանգները *(Բժշկական ըմբռնում):*

Եթե նուրբ նշանների միջոցով կարողանաք նկատել նշանակալի փոփոխությունները, կկրկնե՞ք ձեր նախորդների սխալները *(Յու Չանի՝ հիվանդության և բուժման պատմություններ):*

Հներն առաջնահերթությունը տալիս էին ոչ թե հիվանդներին բուժելուն, երբ նրանք հիվանդանում էին, այլ կանխարգելմանը: Ովքեր հասկանում են այս սկզբունքը, կարող են կանխատեսել հիվանդությունների նշանակալի փոփոխությունները. հետևաբար, լավագույն ռազմավարությունն առողջությունը կարգավորելն ու ամրապնդելն է *(Չինսիանի առանձնապան գործի պատմություն):*

## Նկատել փոփոխությունները՝ համեմատելով բնականոն վիճակի հետ ի չան հեն բիան 以常衡变

Հիմնվելով բնականոն վիճակի վրա՝ կարելի է տարբերակել և բացահայտել այնպիսի ոչ բնականոն փոփոխություն-

ներ, ինչպիսիք են ավելցուկը կամ ոչ համարժեքությունը: Չան (常, բնականոն) եզրույթը վերաբերում է առողջ ֆիզիոլոգիական վիճակին, բիան (变, փոփոխություն) եզրույթը վերաբերում է ոչ բնականոն ախտաբանական վիճակին: Ըստ ավանդական չինական բժշկության՝ շեշտը նախևառաջ պետք է դնել միջին վիճակագրական մարդկանց առողջ վիճակի մասին և «բնականոնն» ընդունել որպես չափանիշ՝ շեղումն ու հիվանդությունը նույնականացնելու համար: Ըստ «Պարզ զրույցի» «Առողջ մարդու մեջ ցիի դրսևորման քննարկում» բաժնի, օրինակ, հիվանդության ավելցուկը և/կամ անբավարարությունը կարելի է որոշել՝ հիմնելով առողջ մարդու քրտնարտադրության և սրտազարկի հարաբերության վրա: Արտաշնչելու և ներշնչելու ցիկլի ընթացքում առողջ անհատի սիրտը զարկում է չորս անգամ: Եթե հարաբերակցությունը գերազանցում է այս ցուցանիշը, ապա սրտազարկն արագ է, իսկ եթե չորս անգամից պակաս է, ուրեմն սրտազարկը դանդաղ է: Առաջնորդվելով «նկատել փոփոխությունները՝ համեմատելով բնականոն ցուցանիշի հետ» սկզբունքով՝ ավանդական չինական բժշկության ներկայացուցիչները ստուգում են հիվանդների դեմքի գույնն ու լեզուն:

［曾经译法］/ *հին թարգմանություն*

［现行译法］/ *նոր թարգմանություն*

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* նկատել փոփոխությունները՝ համեմատելով նորմալ ցուցանիշի հետ

Մեջբերումներ 引例.

Առողջ են այն անհատները, ովքեր հիվանդ չեն: Առողջ մարդու շնչառության հաճախականությունը սովորաբար կիրառվում է՝ որպես հիվանդ մարդու վիճակը գնահատելու չափանիշ: Բժիշկներն առողջ մարդիկ են, ուստի կարող են կարգավորել իրենց շնչառության հաճախականությունը, որպեսզի ստուգեն հիվանդների սրտազարկի հաճախականությունը *(«Պարզ զրույց»):*

Սրտազարկի չափման սկզբունքն է՝ վեր հանել փոփոխությունները՝ դրանք համեմատելով բնականոն սրտազարկի հետ…Նորմալ սրտազարկի պայմանները պետք է հստակ հասկանալ, որպեսզի հնարավոր լինի նույնականացնել շեղումները *(Չինյուեի երկերի լիակատար ժողովածու):*

Երբ դեմքի գույնը, սրտի զարկը և այլ դրսևորումներ կայուն են, դա համարվում է նորմալ, եթե ոչ, ուրեմն՝ ոչ նորմալ: Հասկանալով մարմնի նորմալ և ոչ նորմալ պայմանները՝ բժիշկը կարող է ախտորոշել հիվանդությունները *(«Զննման և ախտորոշման սկզբունքներ»):*

**Հիվանդության դրսևորումներն օգնում են որոշել պատճառը**
**ին ֆա ժի շոու 因发知受**

Բժիշկները պետք է որոշեն ախտածին գործոնները, այն է՝ քամի, ցուրտ, ամռան տապ, խոնավություն, չորություն և կրակ, հիմնվելով ոչ թե կլիմայական փոփոխության, ջերմաստիճանի կամ խոնավության, այլ հիվանդության ընդհանուր պատկերի վրա: Ֆա (发, դրսևորում) եզրույթը վերաբերում է հիվանդության ընդհանուր պատկերի նշաններին ու

ախտանիշներին: Շոու (受, ընդունել) եզրույթը վերաբերում է ախտածին ցիին, որն ազդում է մարդու վրա, և այն արձագանքներին, որ տալիս է մարդու մարմինը: Հիվանդությունը վրա կհասնի թե ոչ, կախված է առողջ ցիի և ախտածին ցիի պայքարից: Ախտածին ցիի բնույթը հիմնականում որոշվում է ընդհանուր պատկերի ուսումնասիրությունից: Օրինակ, երբ եղանակն անսպասելիորեն փոխվում է, արտաքին ախտածին գործոններն ազդում են ոչ բոլորի վրա: Արդյո՞ք մարդն ախտահարված է ախտածին ցիով, և կոնկրետ որ տեսակով, հիմնականում որոշվում է մարդու օրգանիզմի՝ ախտածին գործոնները հաղթահարելու ունակությամբ և վիճակով, իսկ դրանք պետք է ախտորոշել՝ ըստ օրգանիզմում ի հայտ եկող նշանների ու ախտանիշների: Պատճառը որոշելու այս մեթոդը նաև կոչվում է «ախտանիշների հետազոտություն՝ պատճառը նույնականացնելու համար», այսինքն՝ հասկանալ հիվանդության զարգացման ներքին մեխանիզմն ու էությունը՝ հետազոտելով նշաններն ու ախտանիշները:

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | գնահատել պատկերն ու փնտրել պատճառը, պատճառը փնտրել նույնականացված պատկերներից ( 注：对应“审症求因”) |
| [现行译法] *նոր թարգմանություն* | փնտրել պատճառը՝ հենվելով ախտանիշների վրա, որոշել հիվանդության պատճառը՝ ըստ կլինիկական դրսևորումների, տարբերակել համախտանիշը՝ պատճառը որոշելու համար, պատճառի նույնականացում՝ ըստ համախտանիշի տարբերակման: |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | Հիվանդության արտաքին դրսևորումներն օգնում են որոշել պատճառը: |

Մեջբերումներ 引例.

Դժվար է ենթադրել, թե որ արտածին ախտածին գործոնները են ազդում մարդու մարմնի վրա, մինչև ի հայտ կգա հիվանդությունը: Այն կարելի է նույնականացնել միայն հիվանդության վրա հասնելուց հետո: Դրսևորումները կարող են օգնել որոշել հիվանդության պատճառը *(Գրնել ցրպահարության աղբյուրը)*:

Սրտազարկի և այլ ախտանիշների հետազոտությունը կօգնի որոշել հիվանդության պատճառը, իսկ բուժումը պետք է նշանակվի պատկերի համաձայն *(«Ցրպահարության վնասների մասին»)*:

## Չորս ախտորոշիչ մեթոդների սինթեզ սիժեն հեկան 四诊合参

Չորս հավասարապես կարևոր ախտորոշիչ մեթոդները, որոնք կիրառվում են խաչաձև հղումների համար, հետևյալն են՝ զննում, լսում և հոտոտում, հարցուփորձ, ինչպես նաև սրտազարկի և շոշափելիքի ստուգում: Հիվանդությունների մասին հավաքագրված տեղեկատվությունը պետք է մանրամասն ուսումնասիրել՝ ճշգրիտ ախտորոշումը հաստատելու համար: Հիվանդությունը բարդ ու համալիր գործընթաց է, և դրա կլինիկական դրսևորումները կարող են արտացոլվել տարբեր առումներով և ժամանակ առ ժամանակ գուցե փոխվեն: Չորս ախտորոշիչ մեթոդները, յուրաքանչյուրն իր յուրօրինակ տեխնիկայով և կարևորությամբ, կիրառվում են՝ հիվանդությունները հասկանալու համար և օգնելու համապատասխան տեղեկատվություն հավաքել տարբեր կողմերից: Դրանք չեն կարող փոխարինել միմյանց: Եթե միայն մի մեթոդ կիրառվի, սա անխուսափելիորեն կհանգեցնի տվյալների հավաքագրման միակողմանիության, ինչը կազդի ախ-

տորոշման ճշգրտության վրա: Հետևաբար, բազմակողմանի, ճշգրիտ ու մանրամասն կլինիկական տվյալներ ձեռք բերելու համար ավելի քան անհրաժեշտ է չորս ախտորոշիչ մեթոդների համատեղ կիրառումը, որոնք պետք է լրացնեն իրար:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | բազմակողմանի վերլուծություն՝ ըստ չորս հետազոտական մեթոդների, ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ՉՈՐՍ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ, բազմակողմանի վերլուծություն ստուգման չորս մեթոդներով, չորս հետազոտությունների համադրություն |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | տվյալների բազմակողմանի վերլուծություն, որը ձեռք է բերվում չորս ախտորոշիչ միջոցներով, չորս հետազոտությունների համակողմանի դիտարկում, չորս ախտորոշիչ մեթոդի սինթեզ, չորս մեթոդով բազմակողմանի ախտորոշում, տվյալների բազմակողմանի վերլուծություն չորս հետազոտությունից, չորս ախտորոշիչ մեթոդների սինթեզ, չորս հետազոտությունների համադրություն, չորս հետազոտությունների բազմակողմանի վերլուծություն |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | չորս ախտորոշիչ մեթոդի սինթեզ |

Մեջբերումներ 引例.

Դեմքի գույնի ուսումնասիրությունը (պարզ կամ աղոտ) կօգնի նույնականացնել հիվանդության՝ ին կամ յան հատկությունը. մուգ կամ բաց գույնը կօգնի որոշել հիվանդության բնույթը (անբավարարություն կամ ավելցուկ): Չորս ախտորոշիչ մեթոդների սինթեզը չի կարող սխալ լինել, ճի՞շտ է *(Զննման և ախտորոշման սկզբունքներ):*

Լավագույն բժիշկները պետք է գնահատեն բոլոր չորս ախտորոշիչ մեթոդները, երբ ձգտում են համակողմանի հասկանալ հիվանդությունը *(Բինհուի սրտազարկի ուսումնասիրություն):*

**Երեք հատված և ինը դրսևորում**
**սանբու ջիհոու** 三部九候

Եզրույթը վերաբերում է սրտազարկի չափման այն մեթոդին, երբ հիվանդությունների ախտորոշելու համար շոշափվում է գլխի, ձեռքերի ու ոտքերի  զարկերակը: Առաջին անգամ այն նկարագրվել է «Պարզ զրույցի» «Քննարկում երեք բաժինների և ինը դրսևորումների մասին» բաժնում: Երեք հատվածների, այն է՝ գլխի (վերին), ձեռքի (միջին) և ոտքի (ստորին) զարկերակները շոշափվում են, և յուրաքանչյուր հատված բաժանվում է երեք ենթահատվածի, մասնավորապես՝ երկինք, մարդ և հող, այսինքն՝ ընդհանուր առմամբ ստացվում է ինը բաժին: Վերին բաժնի երկինքը, համապատասխանում է երկու կողմի քունքային զարկերակներին, որոնք կարող են վկայել ճակատի և քունքերի ցավի մասին: Վերին բաժնի մարդը՝ առաջնային ականջային զարկերակը, կարող է ցույց տալ աչքերի և ականջների վիճակը, վերին բաժնի հողը՝ այտի զարկերակները, կարող են խոսել բերանի և ատամների վիճակի մասին: Միջին բաժնի երկինքը վերաբերում է ձեռքի թայինի թոքի միջօրեականի զարկերակին, որտեղ կարող է երևալ թոքի ցիի վիճակը, միջին բաժնի մարդը համապատասխանում է ձեռքի շաոինի սրտի միջօրեականի զարկերակին, որով կարելի է որոշել սրտի ցիի վիճակը, միջին բաժնի հողը համապատասխանում է ձեռքի յանմինի հաստ աղիքի միջօրեականի զարկերակին, որտեղ բացահայտվում է կրծքավանդակի ցիի վիճակը: Ստորին բաժնի երկինքը ոտնաթաթի ջուեինի լյարդի միջօրեականի զարկերակն է, որն արտացոլում է լյարդի ցիի վիճակը,

ստորին բաժնի մարդը համապատասխանում է ոտնաթաթի թայինի փայծաղի միջօրեական զարկերակին կամ ոտնաթաթի յանմինի ստամոքսի միջօրեականին, որը կարող է ցույց տալ լյարդի ցիի և ստամոքսի ցիի վիճակը: Ստորին բաժնի հողը ոտնաթաթի շաոինի երիկամի միջօրեականի զարկերակն է, որը կարող է բացահայտել երիկամի ցին: Հետագա սերունդները որդեգրում են ցունկոու ախտորոշիչ մեթոդը (տե՛ս հաջորդ գլուխը)՝ ցունը (寸), գուանը (关) և չին (尺) ընդունելով որպես սրտազարկի ստուգման երեք բաժին: Ապա յուրաքանչյուր բաժնում սրտազարկը բաժանվում է երեք տարբեր ասպեկտի՝ ըստ ուժգնության, այն է՝ թեթև, միջին և ծանր, այսպես էլ առաջ է գալիս ինը դրսևորում: Սա նաև նկարագրվում է «երեք բաժին և ինը դրսևորում» անվանմամբ:

［曾经译法］ *հին թարգմանություն* երեք շրջան և ինը դրսևորում՝ սրտի զարկը զգալու համար, երեք շրջան և ինը ձև, երեք շրջան և ինը տեղակայում՝ սրտի զարկը զգալու համար, երեք չափաբաժին և սրտազարկի ինը ստուգում, երեք դիրք և ինը ցուցիչ

［现行译法］ *նոր թարգմանություն* երեք չափաքանակ և սրտազարկի ինը ստուգում, երեք բաժինների ինը ուսումնասիրություն, երեք շրջան, (սրտի բաբախյունի չափման) երեք չափաքանակ, սրտի զարկի չափման երեք չափաքանակ և ինը դիրք, երեք բաժինների ինը մեկնաբանություն, երեք դիրք և ինը ցուցիչ, երեք դիրք և սրտի զարկի ինը չափում

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* երեք բաժին և ինը դրսևորում

Մեջբերումներ 引例.

Հետևաբար, մարդու օրգանիզմում կա սրտի զարկը չափելու երեք բաժին, յուրաքանչյուր բաժին բաժանված է երեք ենթաբաժնի, որոնք ուսումնասիրվում են՝ կանխատեսումը որոշելու, հիվանդությունները ախտորոշելու և անբավարարությունը կամ ավելցուկը վերացնելու համար: Այս ամենի գլխավոր նպատակը հիվանդությունները վերացնելն է *(«Պարզ զրույց»):*

Անկանոն և ոչ ներդաշնակ սրտազարկը վկայում է մոտալուտ հիվանդության մասին: Եթե երեք բաժնի բոլոր ինը դրսևորումները ոչ ներդաշնակ են, սա վկայում է մոտալուտ մահվան մասին *(«Պարզ զրույց»):*

Ցունկոու ախտորոշիչ մեթոդը նշանակում է երեք բաժինների և ինը դրսևորումների ուսումնասիրություն: Ի՞նչ է սա նշանակում: Ահա և պատասխանը. երեք բաժին ասելով նկատի ունենք ցուն, գուան և չի, իսկ ինը դրսևորումները վերաբերում են այն արդյունքներին, որոնք ձեռք են բերվում սրտի զարկը ստուգելիս ուժի երեք տարբեր մակարդակ ուսումնասիրելով՝ թեթև, միջին և ծանր *(«Բարդ հարցերի կանոն»):*

## Ցունկոու ախտորոշիչ մեթոդ ցունկոու ժենֆա 寸口诊法

Եզրույթը վերաբերում է ախտորոշիչ մեթոդին, երբ սրտի բաբախյունը շոշափվում է ստիլոիդի կենտրոնական մասում՝ ճառագայթային զարկերակի վրա, որի միջոցով բժիշկը կարող է որոշել մարդու մարմնի ֆիզիոլոգիական և ախտաբանական վիճակները: Դուրս ցցված ոսկորը, այսինքն՝ ճառագայթային ոսկորի ելուստը, իրենից ներկայացնում է

կտրվածք: Դրա միջին մասը կոչվում է գուան (关), գուանի առջևի մասը՝ (դեպի դաստակ)՝ ցուն (寸), իսկ գուանի հետնամասը՝ (դեպի արմունկ)՝ չի (尺): Յուրաքանչյուր ձեռքի վրա կա երեք բաժին, հետևաբար դրանց ընդհանուր թիվը վեցն է: Ցուն, գուան և չի հատվածներում սրտի զարկերը կարելի է ստուգել համապատասխանաբար ուժի երեք տարբեր մակարդակներում՝ թեթև, միջին և ծանր: Համարվում է, որ յուրաքանչյուր բաժին համապատասխանում է զան-ֆու օրգաններից մեկին: Ձախ ձեռքի ցունը համապատասխանում է սրտին, աջ ձեռքի ցունը՝ թոքին, ինչպես նաև կրծքավանդակից վերև մարմնամասերին, այդ թվում և գլխին: Ձախ ձեռքի գուանը համապատասխանում է լյարդին ու լեղապարկին, աջ ձեռքի գուանը՝ փայծաղին ու ստամոքսին, ներառյալ ստոծանու ու պորտի միջև ընկած բոլոր օրգանները: Երկու ձեռքի չին համապատասխանում է երիկամին, ներառյալ պորտից մինչև ոտնաթաթեր ընկած հատվածները: Ցունի, գուանի և չիի փոխարեն մարդը կարող է ուսումնասիրել զան-ֆու օրգանները՝ ըստ կիրառված ուժի երեք մակարդակի, այն է՝ թեթև, միջին և ծանր: Օրինակ, ձախ ձեռքի վրա թեթև ուժը, միջին ուժն ու ծանր ուժը կիրառվում են՝ համապատասխանաբար սրտի, լյարդի ու երիկամի վիճակը որոշելու համար: Ձախ ձեռքի դեպքում դրանք օգտագործվում են՝ համապատասխանաբար թոքի, փայծաղի ու երիկամի (կյանքի դարպաս) վիճակը որոշելու համար:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | / |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | սրտի բաբախյունը դաստակով որոշելու մեթոդ, սրտի զարկի ցուն մեթոդ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | ցունկոու ախտորոշիչ մեթոդ |

Մեջբերումներ 引例.

Սրտի բաբախյունի չափման ընթացքում դեմքի գույնի ստուգումն ու արմունկից մինչև դաստակ մաշկի ուսումնասիրությունը վերաբերում է ցունկոու ախտորոշիչ մեթոդին *(Սրտի զարկի վերաբերյալ բարդ հարցերի Բիանկեի կանոն):*

Ներկայում ցունկոու ախտորոշիչ մեթոդի կիրառումը հանճարեղ է *(«Դասակարգված դասական գործեր»):*

## Հիվանդության մոդելների տարբերակում և բուժում բիանժեն լունժի 辨证论治

Եզրույթը վերաբերում է մտածական գործընթացին, հավաքագրված տվյալների հիման վրա կաղապարների տարբերակմանը և համապատասխան բուժման պլանի ձևակերպմանը՝ ըստ ավանդական չինական բժշկության տեսության: Այն ներառում է երկու փուլ. մոդելի տարբերակում և բուժում: Առաջինը նշանակում է տվյալների, ինչպես նաև նշանների ու ախտանիշների հավաքագրում չորս ախտորոշիչ մեթոդի միջոցով (զննում, լսում և հոտոտում, հարցուփոձ, ինչպես նաև սրտի բաբախյունի ստուգում և շոշափում) և տեղեկատվության բազմակողմանի վերլուծության մշակում՝ հիվանդության պատճառը, բնույթն ու տեղակայումը որոշելու, իսկ հետագայում ավանդական չինական բժշկության տեսության սկզբունքների համաձայն ախտածին ցիի և առողջ ցիի հարաբերությունը պարզելու համար: Ակնկալվում է, որ վերջնարդյունքում հնարավոր է ընդհանրացնել տվյալները՝ որոշելով հիվանդության մոդելի բնույթը: Այսպիսին է հիվանդությունն օրգանիզմի արձագանքների տեսանկյունից հասկանալու տրամաբանական և մտածական գործընթացը: Կլինիկական դրսևորումների վերլուծությունն

օգնում է որոշել դրանց ներքին հարաբերությունները, ինչի վրա հիմնվելով կարելի է որոշակի փուլում որոշել հիվանդության բնույթը: Վերջինս ներառում է համապատասխան բուժման սկզբունքի և մեթոդների որոշում՝ ըստ մոդելի տարբերակման, և հիվանդությունը վերացնելու նպատակով համապատասխան բուժման ընտրություն:

［曾经译法］ *հին թարգմանություն* ԲԻԱՆԺԵՆ ԼՈՒՆԺԻ (ԲՈՒԺՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ՝ ԸՍՏ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ), բուժման ընտրություն՝ ըստ տարբերակիչ ախտորոշման, բուժում՝ ըստ համախտանիշի տարբերակման, որոշել կաղապարներն ու բուժումը, որոշել բուժումը՝ ըստ նույնականացված կաղապարների, ախտորոշում և բուժում՝ նշանների ու ախտանիշների ընդհանուր վերլուծության հիման վրա, բուժում՝ համախտանիշի տարբերակմամբ

［现行译法］ *նոր թարգմանություն* բուժման ընտրություն՝ ըստ տարբերակիչ ախտորոշման, բուժում՝ համախտանիշի տարբերակման հիման վրա, համախտանիշի տարբերակում և բուժում, կաղապարի տարբերակում, համախտանիշի տարբերակում և բուժում, կաղապարի տարբերակում և բուժում

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* կաղապարի տարբերակում և բուժում

Մեջբերումներ 引例.

Ինչպե՞ս կարելի է բուժել հիվանդությունը, եթե բժիշկը չգիտի վեց ցիի տեսության մասին (քամի, ցուրտ, ամռան տապ, խոնավություն, չորություն և կրակ) կամ կաղապարի տարբերակման հիման վրա հիվանդությունների բուժման սկզբունքը *(Բժշկական զգուշացումներ):*

Կաղապարների տարբերակումը և բուժումը, ինչպես կրթական ավանդույթը, որը վարպետը ժառանգություն էր թողնում աշակերտին Հան և Թան դինաստիաներում, անշուշտ շատ կարևոր է և կարող է դառնալ հավերժական սկզբունք *(Կարթվածի մեկնաբանություն)*:

Ժան Ժունջինը գրքերում շարադրել է իր տեսությունները … Նա առաջին բժիշկն էր, ով առաջ քաշեց հիվանդության մոդելների տարբերակման ու բուժման գաղափարը, որին պետք է հետևեին հետագա սերունդների գիտնականները *(«Ցրտահարության վնասների պատճառները»)*:

**Նույն հիվանդության տարբեր բուժումներ թունքին յիժի** 同病异治

Եզրույթը նշանակում է, որ նույն հիվանդությունը հարկ է բուժել տարբեր մոտեցումներով՝ ըստ զանազան մոդելների, որոնք դրսևորվում են տարբեր փուլերում, կամ ըստ աշխարհագրական, կլիմայական և ֆիզիոլոգիական տարբերությունների: Բուժումը պետք է տարբերվի՝ ըստ զանազան փուլերի ախտաբանական զարգացման: Վաղ փուլում ցանն ամբողջությամբ զարգացած չէ, և բուժումը պետք է ուղղված լինի մակերեսային փոփոխությունների վերացմանը, որոնք խթանում են ցանավորումը: Միջին փուլում թոքի ջերմությունը միտ գերիշխող է, ուստի կարևոր է մաքրել թոքը: Ուշ փուլում մնացած ջերմությունը վատթարացնում է թոքի ինի ու ստամոքսի ինի վիճակը, ինչը պահանջում է սնել ինն ու մաքրել ջերմությունը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | նույն հիվանդությունը բուժել տարբեր մեթոդներով, տարբեր բուժումներ՝ նույն հիվանդության համար |

| | |
|---|---|
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | նույն հիվանդությունը բուժել տարբեր մեթոդներով, տարբեր բուժումներ՝ նույն հիվանդության համար |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | բուժման տարբեր ձևեր՝ նույն հիվանդության համար |

Մեջբերումներ 引例.

Ցիի լճացումով պայմանավորված պարանոցի կարբունկուլը կարելի է բուժել ասեղնաբուժությամբ՝ ցրելով ցին: Այն դեպքերում, երբ ցիի գերակշռության և արյան մակարդելիության պատճառով թարախ է գոյացել, ստատիկ արյունը հեռացնելու համար կարելի է կիրառել Բիանի քարեր: Բուժման այդպիսի մեթոդները հայտնի են «տարբեր բուժումներ՝ նույն հիվանդության դեպքում» անվանմամբ *(«Պարզ գրույց»):*

Հյուսիս-արևմուտքում ցուրտ է, ուստի բուժումը պետք է կենտրոնացնել ցուրտը ցրելու և ներքին ջերմությունը մարելու համար, հարավ-արևելքում տաք է, ուստի բուժումը պետք է կենտրոնացնել յան ցիի արտահոսքը կանգնեցնելու և ջերմացման միջոցով ներքին ցուրտը ցրելու վրա: Սա կոչվում է «տարբեր բուժումներ՝ նույն հիվանդության համար» *(«Պարզ գրույց»):*

## Նույն բուժում տարբեր հիվանդություններին իբին թոնժի 异病同治

Եզրույթը նշանակում է, որ տարբեր հիվանդություններ կարելի է բուժել նույն մեթոդով, եթե դրանք իրենց զարգացման ընթացքում դրսևորում են նույն ախտաբանական փոփոխությունները կամ հիվանդության պատկերը: Օրինակ, այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են խրոնիկական

էնտերիտը, նեֆրիտը և ասթման, կարելի է բուժել նույն մեթոդով՝ ջերմացնել և թարմացնել երիկամի յանը, քանի որ բոլոր հիվանդությունները իրենց զարգացման ընթացքում դրսևորում են երիկամի յանի անտաքանական փոփոխություններ:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | տարբեր հիվանդություններ բուժել նույն մեթոդով, նույն բուժումը կիրառել տարբեր հիվանդությունների համար, զանազան հիվանդություններ բուժել նույն մեթոդով, տարակերպ հիվանդությունների նույնակերպ բուժում, նույն բուժումը տարբեր հիվանդությունների համար |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | տարբեր հիվանդությունները բուժել նույն թերապևտիկ սկզբունքով, նույն բուժումը՝ տարբեր հիվանդությունների համար, զանազան հիվանդություններ բուժել նույն թերապիայով, տարբեր հիվանդություններ բուժել նույն մեթոդով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | նույն բուժումը՝ տարբեր հիվանդությունների համար |

Մեջբերումներ 引例.

Այս հիվանդությունն ունի հետևյալ պատկերը. տենդային հիվանդության ախտածին ցին քնած վիճակում է մնում շաոին միջօրեականում, ախտածին ջերմությունը սպառում է ստամոքսի ինը, իսկ ախտածին կրակը ներթափանցում է սրտապարկ: Հետևաբար, այս ամենը կարելի է բուժել նույն մեթոդով *(Բազմակողմանի բժշկություն՝ ըստ բժիշկ Ժան Լուի):*

Այս հիվանդությունների դեպքում հարկ է հետևել «նույն հիվանդությանը՝ տարբեր բուժումներ» կամ «նույն բուժումը՝

տարբեր հիվանդությունների համար» սկզբունքին *(Այրման կանոններ և սկզբունքներ):*

**Ցուրտը բուժել ցրտով**
**հանին հանյան 寒因寒用**

Եզրույթը վերաբերում է պարադոքսալ բուժումներից մեկին և առաջակում է բնույթով սառը դեղամիջոցների օգտագործում այնպիսի հիվանդությունների դեպքում, որոնք ցույց են տալիս ցրտահարության նշաններ և ախտանիշներ: Այս մեթոդը կիրառելի է «իսկական ջերմություն՝ կեղծ մրսածության դրսևորումներով» մոդելի թեթևացման համար. այն պայմանավորված է չափազանց բարձր ներքին ջերմությամբ, որը թույլ չի տալիս, որ յան ցին հասնի մաշկին: Վերցնենք, օրինակ, ջերմային ուշագնացությունը: Մի կողմից, ներքին յանի ջերմությունը գերակշռող է, իսկ ախտածին ջերմությունը թաքնված է ներսում և դրսևորում է ներքին ջերմության այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են բարձր ջերմությունը, տապի անընկալունակությունը, նյարդային վիճակը, սառը խմիչքներ ընդունելու ցանկությունը, մուգ մեզը և սրտի արագ բաբախյունը: Մյուս կողմից, չափազանց գերակշռող ներքին ջերմությունը թույլ չի տալիս, որ յան ցին հոսի դուրս, և ի հայտ են գալիս կեղծ ցրտահարության այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են սառը վերջույթներն ու խոր բաբախյունը: Այս դեպքում բնույթով ցուրտ և/կամ զով դեղամիջոցներ պետք է օգտագործել՝ ներքին ջերմությունը մարելու, հիվանդության բուն պատճառն արմատախիլ անելու և այդպիսով համապատասխանաբար կեղծ մրսածության ախտանիշները թեթևացնելու համար:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | կեղծ մրսածությունը բուժել սառը դեղամիջոցներով, ցուրտը բուժել ցրտով, սառը դեղամիջոցներ կիրառել՝ կեղծ մրսածության համախտանիշը բուժելու համար |

| | |
|---|---|
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | սառը դեղամիջոցներ կիրառել՝ մրսածության համախտանիշը բուժելու համար, ցուրտը բուժել ցրտով, կեղծ մրսածության համախտանիշը բուժել սառը դեղաբույսերով, սառը դեղաբույսերով բուժել կեղծ մրսածության համախտանիշը, կիրառել սառը միջոցներ, երբ պատճառը ցուրտն է, բուժել ցուրտը ցրտով, ցուրտը բուժել ցրտով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | ցուրտը բուժել ցրտով |

Մեջբերումներ 引例.

Ջերմությունը բուժել ջերմությամբ, մրսածությունը՝ ցրտով... Հիվանդությունը բուժելու համար, նախ, պետք է պարզել պատճառը *(«Պարզ զրույց»):*

Կամ՝ ցուրտը բուժիր ցրտով, տաքը՝ տաքով: Երկուսն էլ համապատասխանում են, եթե բուժումը կատարվում է հատուկ պայմանների համաձայն *(«Մանկաբուժության ժողովածու»):*

**Ջերմությունը բուժել ջերմությամբ**
**հեյին ըեյոն** 热因热用

Եզրույթը վերաբերում է պարադոքսային բուժումներից մեկին և առաջարկում է տաք դեղամիջոց կիրառել ջերմային դրսևորումներով հիվանդությունների համար: Վերցնենք, օրինակ, ավելցուկային ներքին ին-շաոին հիվանդությունը: Դրա կլինիկական դրսևորումներն են՝ փորլուծությունը, չմարսված սնունդը, վերջույթների սառնությունը, ինչպես նաև թույլ և անշոշափելի սրտի բաբախյունը: Սակայն կա-

րող են ի հայտ գալ նաև կեղծ ջերմության այնպիսի նշաններ ու ախտանիշներ, ինչպիսիք են «դեմքի կարմրությունն» ու «ցրտի հանդեպ ընկալունակությունը»՝ պայմանավորված նրանով, որ չափազանց ակտիվ ինը վանում է յանը: Հետևաբար, այս դեպքում կիրառվում է ջերմ-տաք բնույթի Թունմայ Սինի եփուկ (սառած վերջույթները բուժելու եփուկ. այն խթանում է անոթների աշխատանքը), որը հարմարվում է արտաքին ջերմությանը, բայց հակասության մեջ է ին ցրտի արմատային պատճառի հետ: Մյուս օրինակը ցի-անբավարարության մոդելն է՝ ջերմության առկայությամբ: Փայծաղի և ստամոքսի յան ցիի անբավարարության պատճառով սննդից և խմիչքներից ստացված բնահյութը չի կարողանում բարձրանալ, փոխարենը իջնում ու հասնում է էներգիայի ստորին աղբյուրին ու վերածվում ին կրակի, որը բարձրանում է ու հանգեցնում տենդի: Փայծաղի յանը (ցին) բարձրացնելու և էական ցիի անկումը կասեցնեու համար հարկ է օգտագործել քաղցր-տաք Բուժուն Յիցի եփուկ (էներգիայի միջին աղբյուրը թարմացնող և ցին բարձրացնող եփուկ). սա կոչվում է «բարձր ջերմության վերացում քաղցրահամ և ջերմ դեղամիջոցներով»: Սա նաև ջերմությունը ջերմությամբ բուժելու օրինակ է:

［曾经译法］ *հին թարգմանություն*
կեղծ տաք համախտանիշը բուժել տաք դեղերով, տաքը բուժել տաքով, կեղծ ջերմային հիվանդությունները բուժել տաք դեղերով, օգտագործել տաք դեղաբույսեր՝ կեղծ ջերմային համախտանիշը բուժելու համար

［现行译法］ *նոր թարգմանություն*
տաք դեղեր օգտագործել՝ կեղծ ջերմային համախտանիշը բուժելու համար, տաքի համար օգտագործել տաք, կեղծ ջերմային համախտանիշը բուժել տաք թերապիայով, օգտագործել ջերմը, երբ պատճառը ջերմությունն է, տաքը բուժել տաքով

［标准译法］ բուժել տաքը տաքով
*սպանդարդ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Տաքը բուժիր տաքով, ցուրտը՝ ցրտով… Հիվանդությունը բուժելու համար նախևառաջ պետք է պարզել պատճառը *(«Պարզ զրույց»):*

Ոմանք հարցնում են, թե ինչու է տենդը բուժելու համար կիրառվում Բուժուն Յիցի եփուկ (էներգիայի միջին աղբյուրը թարմացնող և ցին բարձրացնող եփուկ)։ Զարմանալի է, որ նրանք ոչինչ չգիտեն ջերմությունը ջերմությամբ բուժելու սկզբունքի մասին, այն է՝ տաք դեղամիջոցները կարող են թեթևացնել տենդը *(Յանը փրկելու ուղեցույց):*

**Հոսքի բուժում՝ հոսքի խթանմամբ**
**թոնին թոնյան 通因通用**

Եզրույթը վերաբերում է պարադոքսային բուժումներից մեկին և առաջարկում է ավելցուկային մոդելը, օրինակ, «հոսքային խանգարումներով» ուղեկցվող փորլուծությունը բուժել ապարգելակող գործառույթ ունեցող դեղամիջոցներով: Այս մեթոդը կիրառվում է փորլուծությունը թեթևացնելու համար, որը պայմանավորված է ավելցուկային ախտածին գործոնների ներքին կուտակմամբ։ Օրինակ, «ջերմային ֆոկառմա՝ ջրային արտաթորանքով» պատկերը, որին բնորոշ է ներքին չորությունը, ջերմությունն ու փորլուծությունը, հարկ է բուժել Չենցի եփուկով (մարսողական ցին մաքրող եփուկ)՝ ավելցուկային չորությունը թեթևացնելու համար։ Ըստ «Քննախոսություն ցրտահարության վնասների մասին» աշխատության՝ «Շաոին հիվանդությունը, որին բնո-

բոշ է կանաչավուն ջրիկ ու ինքնաբուխ փորլուծությունը, ուղեկցվում է սրտից քիչ ներքև ցավով: Եթե բերանը չորանում է, կարելի է կիրառել մաքրող մեթոդ: Այստեղ տեղին է Դա Չեն Ցի եփուկը (մարսողական ցին մաքրող եփուկ): Մյուս օրինակներն են՝ երբ ստամոքսում և աղիներում կան սննդի կուտակումներ, որոնք հանգեցնում են ստամոքսի ցավի, դղրդյունի ու փորլուծության՝ փտած ձվի գարշահոտությամբ, այս վիճակը պահանջում է մարսողության խթանում և լճացման մաքրում: Եթե կա մետրոռագիա կամ մետրոստաքսիս՝ արյան թանձրուկներով, որն ուղեկցվում է արյան լճացմամբ և որովայնային ցավով և ուժգնանում ճնշման ժամանակ, կամ հետծննդաբերական շրջանում արյան լճացմամբ և լոխիորեայով, ապա լճացումը բացառելու համար անհրաժեշտ է խթանել արյան շրջանառությունը: Ինչ վերաբերում է խոնավության ու ջերմության կուտակմանը միզապարկում, որը հանգեցնում է հաճախ, հապճեպ և ցավոտ միզարձակման, պետք է կիրառել ջերմությունը բացառելու, խոնավությունը չորացնելու և մեզի կանգը թեթևացնելու մեթոդը: Ինչ վերաբերում է հաստ աղիում խոնավության ու ջերմության հետևանքով առաջացած արնալուծին, որը դրսևորվում է օրվա մեջ ավելի քան տասն անգամ փորլուծության, պետք է չեզոքացնել ջերմությունը, վերացնել աղիքային խոչընդոտն ու կարգավորել ցին ու արյան շրջանառությունը:

［曾经译法］ *հին թարգմանություն* — փորլուծությունը բուժել լուծողականով, փորլուծությունը բուժել մաքրումով, փորլուծությունը բուժել լուծողական դեղերով, անմիզապահությունը բուժելու համար կիրառել մաքրիչ մեթոդ, լճացումը բուժել լճացումով, փորլուծությունը բուժել մաքրող միջոցներով

［现行译法］ *նոր թարգմանություն* — բուժել հիվանդությունը մաքրող նյութերով, բացել բացվածը, անմիզապահության դեպ-

քում կիրառել ջրահեռացման մեթոդ, փոքրլուծությունը բուժել մաքրող մեթոդով, հոսքը բուժել հոսքով, անմիզապահության համախտանիշը բուժել ցամաքեցման մեթոդով, ցամաքեցումը բուժել ցամաքեցնելով

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* հոսքը բուժել հոսքի խթանմամբ

Մեջբերումներ 引例.

Դեղին կայսրը հարցրեց. «Ի՞նչ է նշանակում պարադոքսային բուժում»: Ցիբոն պատասխանեց. «Պարադոքսային բուժում նշանակում է ջերմությունը բուժել ջերմությամբ, ցուրտը՝ ցրտով, արգելակումը՝ արգելակմամբ, հոսքը՝ հոսքի խթանմամբ» *(«Պարզ զրույց»):*

«Հոսքը հոսքով բուժելու» մեթոդը պետք է կիրառել տենեզմաների դեպքում, երբ կա հաճախակի կղարձակման ցանկություն, բայց առաջանում են խնդիրներ *(Կոնֆուցիականների պարտավորությունները իրենց ծնողների հանդեպ):*

Ինչ վերաբերում է արնալուծին... ապա սկզբում նախնական ցին անբավարար չէ, ուստի պետք է կիրառել մաքրող մեթոդ, որը հոսքը հոսքի միջոցով խթանելու օրինակ է *(Դանասիի բժշկության վարպետություն):*

## Արգելակման բուժում՝ արգելակմամբ սային սայուն 塞因塞用

Եզրույթը վերաբերում է պարադոքսային բուժումներից մեկին, առաջարկում է օբստրուկտիվ նշաններով և ախտա-

նիշներով անբավարար մոդելը բուժել թարմացնող դեղորայքով: Այս մեթոդը կիրառելի է օբստրուկտիվ մոդելները թեթևացնելու համար, որոնք պայմանավորված են զան-ֆու օրգանների հիպոֆունկցիայով, ինչն էլ իր հերթին վրա է հասել ինի, յանի, ցիի ու արյան անբավարարության հետևանքով: Օրինակ, էական ցիի անբավարարությամբ պայմանավորված ամենօրեան և մագիստրալային ու բեղմնավորման անոթների անբավարարությունը պետք է բուժել երիկամի ցին թարմացնելով և դաշտային ցիկլը կարգավորելու նպատակով լյարդը, երիկամն ու արյունը սնուցելով: Ինչ վերաբերում է փորկապությանը, այն պահանջում է արյան սնուցում և խոնավեցում (եթե խոսքը վերաբերում է արյան անբավարարությանը), ցիի ամրապնդում՝ փայծաղի յանն ակտիվացնելու համար (եթե խոսքը ցիի անբավարարության մասին է, որը հանգեցնում է տեղաշարժման խնդիրների), յան ցիի ջերմացում՝ հեղուկի անբավարարության դեպքում: Ինչ վերաբերում է միզարձակության ժամանակ ցավին, այն պահանջում է լրացնել թոքի ցին՝ վերականգնելով ջրային ուղիների կարգավորման դրա գործառույթը, եթե խոսքը վերաբերում է թոքի ցիի անբավարարությանը, որը հանգեցնում է ջրանցման ուղիների խանգարումների, ավելացնել միջին ցին՝ փայծաղի ցին ավելացնելու և պղտոր ինը նվազեցնելու համար, եթե փայծաղի ցին իջել է և հանգեցրել նրան, որ հստակն այլևս չի կարող բարձրանալ, իսկ պղտորը՝ իջնել, կամ ջերմացնել երիկամի յանն ու ձևափոխել ցին՝ խթանելով դիուրեզիան, եթե խոսքը երիկամի յանի անբավարարության և կյանքի դարպասի կրակի նվազման մասին է, որը հանգեցնում է միզապարկի ցիի ձևափոխման խանգարման:

［曾经译法］ *հին թարգմանություն* կեղծ-օբստրուկտիվ հիվանդությունը բուժել թարմացնելով, ԽՑԱՆՈՒՄԸ ԲՈՒԺԵԼ ԹԱՐՄԱՑՄԱՄԲ, օբստրուկտիվ համախտանիշը բուժել աշխուժացնելով, թարմացնող մեթոդ՝ օբստրուկտիվ համախտա-

| | |
|---|---|
| | նիշը բուժելու համար, կանգը բուժել կանգով, խցանումը բուժել խցանումով, օբստրուկտիվ համախտանիշը բուժել սնուցող բուժումով: |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | օբստրուկտիվ հիվանդությունները բուժել լրացնելով, լիցք, արգելափակման դեպքում օգտվել արգելափակումից, փորկապությունը բուժել աշխուժացնելով, լճացումը բուժել լճացնելով, օբստրուկտիվ համախտանիշը բուժել ցամաքեցման մեթոդով, արգելափակումը բուժել արգելափակմամբ |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | արգելակումը բուժել արգելակմամբ |

Մեջբերումներ 引例.

Արգելակումը բուժել արգելակելով, իսկ հոսքը խթանել հոսքով: Հիվանդությունը բուժելու համար պետք է նախևառաջ հստակեցնել պատճառը *(«Պարզ զրույց»):*

Արգելակումը բուժել արգելակելով: Օրինակ, երբ առողջ ցին էներգիայի ստորին աղբյուրում անբավարար է, իսկ միջին աղբյուրում լճանում է, ապա որովայնի փքվածությունը թեթևացնելու նպատակով ցիի հոսքի խթանումը կարող է վատթարացնել առողջ ցին էներգիայի ստորին աղբյուրում… Փոխարենը, էներգիայի ստորին աղբյուրում առողջ ցիի ակտիվացումը կարող է օգնել վերականգնել ցին, ինչը թեթևացնում է փքվածության ու լցվածության զգացողությունն էներգիայի միջին աղբյուրում *(«Բժշկության ներքին կանոնի հիմունքներ»):*

## Ճյուղ, արմատ. հիվանդության սուր և ոչ սուր վիճակ բրաբեն հուանջի 标本缓急

Եզրույթը վերաբերում է մտածողության կերպին, ըստ որի համապատասխան բուժական մեթոդներ պետք է ընտրվեն առաջնային և երկրորդական գործոնների, ճյուղի և արմատի, երկրորդայինի ու գլխավորի, հիվանդության սուր և ոչ սուր վիճակի տարբերակման, ինչպես նաև բարդ և զանազան մոդելների տարբեր գործոնների հարաբերությունների վերլուծության հիման վրա: Բիաոն և բենը, որոնք բառացի նշանակում են բույսի ճյուղ և արմատ, կարող են փոխաբերաբար օգտագործվել՝ առաջնային և երկրորդական գործոնների հարաբերությունը բացատրելու համար: Հետևաբար, որպես հակադիր հասկացությունների զույգ՝ դրանք բազմիմաստ են տարբեր համատեքստերում: Օրինակ, առողջ ցիի (արմատ) հետ հարաբերության մեջ ախտածին ցին համարվում է հիվանդության զարգացման ճյուղ: Հիվանդության պատճառի և ախտանիշների հարաբերության տեսանկյունից վերջինս ճյուղն է: Հիվանդության հաջորդականության տեսանկյունից, հին կամ առաջնային հիվանդությունն արմատն է, իսկ նոր կամ երկրորդային հիվանդությունը՝ ճյուղը: Եվ վերջապես, ախտահարման հատվածների տեսանկյունից, ներքին զան-ֆու օրգանները դիտարկվում են որպես արմատ, իսկ արտաքին դրսևորումները՝ ճյուղեր: Ինչ վերաբերում է բարդ պատկերները բուժելուն, խորհուրդ է տրվում նույնականացնել առաջնայինը տարբերելով երկրորդայինից, գլխավորը երկրորդականից, ինչպես նաև հիվանդության սուր վիճակը ոչ սուր վիճակից, ինչը կօգնի բուժել հիվանդությունները: Ընդհանուր առմամբ, բարդացած և սուր դեպքերում, նախ, պետք է բուժել ճյուղը կամ արմատը, եթե այն սուր է, իսկ եթե երկուսն էլ սուր են, ապա պետք է միաժամանակ բուժվեն: Ոչ սուր դեպքերում, նախ, պետք է բուժել արմատը կամ արմատն ու ճյուղը բուժել միաժամանակ:

［曾经译法］/ *հին թարգմանություն*

［现行译法］/ *նոր թարգմանություն*

［标准译法］ ճյուղ, արմատ, սուր և ոչ սուր
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Եթե բժիշկները չգիտեն ճյուղի ու արմատի, ինչպես նաև սուր և ոչ սուր վիճակի սկզբունքը, անխուսափելիորեն սխալ կախտորոշեն և կվնասեն հիվանդներին *(Քննախոսություն սեզոնային հիվանդությունների մասին):*

Եթե հիվանդությունը բարդ ընթացք ունի, անհրաժեշտ է տարբերակել արմատն ու ճյուղը, ինչպես նաև հիվանդության սուր և ոչ սուր վիճակը, և միայն դրանից հետո համապատասխան բուժում նշանակել *(«Բժշկական ըմբռնում»):*

Հիվանդության փոփոխության դեպքում խորհուրդ է տրվում տարբերակել ճյուղն ու արմատը, ինչպես նաև սուր և ոչ սուր վիճակը: Նախ պետք է հստակեցնել բուժման ընթացքը և այն, թե արդյոք պետք է բուժել միայն մեկ, թե միաժամանակ երկու կամ ավելի հիվանդություններ: Հարկ է օգտագործել թե՛ հիմնական պատճառը, թե՛ ախտանիշները (ճյուղը) վերացնելու համար նախատեսված դեղամիջոցներ: Ամեն ինչ հերթականությամբ անելու դեպքում կարելի է թեթևացնել տարբեր հիվանդություններ *(«Քննախոսություն բժշկության ծագման և զարգացման մասին»):*

## Առողջ ցիի ամրապնդում և ախտածին ցիի բացառում ֆուժեն ցուսիե 扶正祛邪

Եզրույթը վերաբերում է ավանդական չինական բժշկության հիմնարար թերապևտիկ սկզբունքներից մեկին: Առողջ ցիի ամրապնդումը ենթադրում է բարձրացնել ախտածին գործոնների դեմ դիմադրողականությունն ու աջակցել առողջ ցիին՝ բարելավելով օրգանիզմի սահմանադրությունը, ինչպես նաև կիրառել զանազան այլ մեթոդներ, ինչպիսիք են՝ ուժեղացնել ցին, սնուցել արյունը, հարստացնել ինը, ջերմացնել յանը, լրացնել բնահյութը, ամրապնդել զանֆու օրգանները և այլն: Սա կիրառվում է անբավարարության տարբեր մոդելների բուժման ժամանակ, որոնք ի հայտ են գալիս ոչ բավարար առողջ ցիի հետևանքով: Ախտածին ցիի բացառումը նշանակում է հիպերակտիվ ախտածին ռեակցիաների ճնշում և ախտաբանական վնասի նվազեցում՝ վերացնելով ախտածին գործոններն ու բացառելով ներքին վնասակար երևույթները, ներառյալ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ խթանել քրտնարտադրությունը, առաջացնել ործկում, մաքրել, իջեցնել ջերմությունը, թեթևացնել սննդի լճացումը, ցրել քամին, վերացնել խոնավությունը, ազատվել խորխից, աշխուժացնել արյունը՝ արյան կանգը ցրելու համար և այլն: Այն կիրառվում է նաև տարբեր ավելցուկային պատկերների բուժման ժամանակ, որոնք ի հայտ են եկել ավելցուկային ախտածին ցիի հետևանքով: Առողջ ցին ամրապնդելն ու ախտածին ցին վերացնելը հակադիր, բայց միմյանց լրացնող մեթոդներ են, որոնք փոխկախյալ հարաբերության մեջ են: Երբ առողջ ցին ուժեղանա, այն կօգնի, որ մարմինը վանի ախտածին ցին. այս գործընթացը ձևակերպվում է հետևյալ կերպ. «երբ առողջ ցին ուժեղ է, ախտածին ցին մեխանիկորեն նահանջում է»: Մյուս կողմից, երբ ախտածին ցին բացառվի, առողջ ցին կպաշտպանվի հետագա վնասումից. այս գործընթացը ձևակերպվում է հետևյալ կերպ. «երբ ախտածին ցին ցրվի, առողջ ցին բնական ճանապարհով պաշտպանված կլինի»:

［曾经译法］ *հին թարգմանություն* խթանել առողջ էներգիան և վերացնել վնասակար գործոնները, ԱՄՐԱՊՆԴԵԼ ՕՐԳԱՆԻԶՄԻ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԽՏԱԾԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, խթանել առողջ էներգիան՝ վերացնելով վնասակար գործոնները, ուժեղացնել իսկական ցին՝ վերացնելով վնասակար ցին

［现行译法］ *նոր թարգմանություն* բարձրացնել մարմնի դիմադրողականությունը (扶正), աջակցել կենսական ցիին (扶正), աջակցել առողջ գործոններին ու բացառել վնասակարները, ուժեղացնել առողջ ցին, վերացնել ախտածին գործոնները, ամրապնդել առողջ ցին՝ վերացնելով ախտածին ցին, ամրապնդել առողջն ու վերացնել ախտածինը, ամրացնել կենսական ցին՝ չեզոքացնելով ախտածին գործոնը

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* ամրապնդել առողջ ցին և վերացնել ախտածին ցին

Մեջբերումներ 引例.

Թերապևտիկ մեթոդը՝ ին-հեղուկի սնուցման համադրումը Չենցի եփուկով (մաքրող եփուկ) մաքրման հետ, առողջ ցին ամրապնդելու և ախտածին ցին բացառելու կարևոր օրինակ է *(Պարզ քննախուսություն կոկորդի սեզոնային հիվանդությունների վերաբերյալ):*

Առողջ ցիի լրացումը պետք է առաջնահերթություն դառնա անբավարարության պատկերի բուժման համար (առողջ ցիի անբավարարություն՝ չափավոր ախտածին ցիով): Երբ առողջ ցին վերականգնվում է, ախտածին ցին այլևս չի կարող վնասել մարմինը: Հետևաբար, բուժումը

ներառում է ախտածին ցիի ցրում՝ միաժամանակ լրացնելով առողջ ցին… Ավելցուկային պատկերի բուժման դեպքում (ախտածին ցիի առատություն՝ առանց առողջ ցիի անբավարարության) ախտածին ցիի բացառումը պետք է լինի առաջնահերթություն: Երբ ախտածին ցին հեռացվի, առողջությունը մեխանիկորեն կվերականգնվի *(«Բազմակողմանի բժշկություն բժիշկ Ժան Լուից»):*

**Ինի և յանի կարգավորում**
**թիալի ինյան 调理阴阳**

Եզրույթը վերաբերում է ին-յան աններդաշնակությունը շտկելուն և ին-յան հավասարակշռությունը վերահաստատելուն՝ ավելցուկը կրճատելու և անբավարարը լրացնելու միջոցով: Ավանդական չինական բժշկության մեջ ինը և յանը կարելի է կիրառել՝ որպես դասակարգման ընդհանուր զույգ կամ երկու գաղափար: Որպես դասակարգման չափանիշ՝ ինի և յանի հավասարակշռությունը բացատրում է զանազան ախտածին փոփոխություններ, այդ թվում և արտաքիններքին, ցուրտ-տաք փոփոխությունը, առողջ ցիի կամ ախտածին ցիի գերակշռությունը կամ թուլացումը, սննդարար ցիի և պաշտպանիչ ցիի ոչ ներդաշնակ հարաբերությունը, ցի-արյուն անհավասարակշռությունը: Հետևաբար, ինը և յանը կարգավորելը համարվում է ավանդական չինական բժշկության թերապիայի հիմնարար սկզբունք, այնպիսի ենթասկզբունքների հետ մեկտեղ, ինչպիսիք են առողջ ցիի ամրապնդումն ու ախտածին ցիի բացառումը, զան-ֆու օրգանների կարգավորումը, ցիի և արյան կարգավորումը, սննդարար և պաշտպանիչ գործոնների ներդաշնակեցումը, ինչպես նաև ցիի կանոնավոր վերելքի ու վայրէջքի խթանումը: Երբ ինն ու յանը դիտարկվում են որպես հիմնավոր հասկացություններ, ին-յան անհավասարակշռությունը վերաբերում է մարդու օրգանիզմում ինի կամ յանի ոչ բնականոն վիճակին, այն է՝ գերակշռություն, թուլացում,

փոխադարձ վնասում, վանում կամ նույնիսկ ինի կամ յանի կորուստ, որոնցից ինի կամ յանի թուլացումը համարվում է հիմնական պատճառ: Հետևաբար, այս դեպքում ինը և յանը կարգավորելն ընդհանուր առմամբ վերաբերում է ավելցուկը վերացնելու կամ անբավարարությունը լրացնելու թերապևտիկ սկզբունքներին՝ ըստ ինի կամ յանի գերակշռության կամ թուլացման փոփոխությունների, և կրճատող ու լրացնող մեթոդներին, որոնցով էլ սովորաբար բացատրվում է այս եզրույթը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ինի և յանի կարգավորում (调整阴阳)<br>համակարգել ինը և յանը (调和阴阳) |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | կարգավորել ինն ու յանը (调整阴阳),<br>կարգավորել ինն ու յանը, ինի և յանի համակարգում, ինի և յանի կարգավորում |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | կարգավորել ինը և յանը |

Մեջբերումներ 引例.

Այս բանաձևը հանգստացնում է միտքն ու սնում հոգին: Այն կարող է կարգավորել ինն ու յանը՝ վերականգնելով հավասարակշռությունը *(«Բժշկության ուղղափառություն»):*

Հետևաբար, օգտագործվում է Հուանլիան եփուկ (Կոպտիսի հեղուկ): Սառը և տաք, քաղցր և դառը բաղադրությամբ դեղամիջոցների համադրությամբ ինը և յանը կարգավորվում են և հասնում ներդաշնակության *(«Բժշկական ավանդույթի ոսկե հայելի»):*

Շիուեյ սիանգրու խմիչքը (տասը բաղադրամասով մոլսա խմիչք) բուժում է անբավարարության զանազան մոդելներ, որոնք բխում են ներքին վնասվածքներից: Այն կարգավորում

է ինն ու յանը և թեթևացնում փորլուծությունը *(«Առանցքա-յին բժշկական բանալիներ»):*

## Ին հիվանդությունների բուժում յանի տեսանկյունից ինքին ժիյան 阴病治阳

Եզրույթը նշանակում է, որ ավելցուկային ինը սահմանա-փակելու համար պետք է լրացնել յան ցին անբավարար ցրտի մոդելի բուժման ժամանակ, որը պայմանավորված է ինի գերակշռումով: Այս երևույթը նաև հայտնի է «յանի ջեր-մացում՝ ցուրտը ցրելու համար» կամ «կրակի (յան) աղբյու-րի լրացում՝ ավելորդ ինը ցրելու համար» անվանմամբ *(«Պարզ զրույց Դեղին կայսեր Բժշկության ներքին կանո-նում», ծանոթագրությունը՝ Ուան Բինի):* Ինն ու յանը սահ-մանափակում են միմյանց: Երբ յանը չափազանց անբավա-րար է՝ ինը սահմանափակելու համար, ինը դառնում է համե-մատաբար գերակշռող, և կարող են ի հայտ գալ անբա-վարարության տարբեր դրսևորումներ: Հետևաբար, ինի հարաբերական գերակշռումը բուժելու համար ուշադրություն է դարձվում անբավարար կողմի վրա, և պետք է լրացնել յանը:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | ին հիվանդության դեպքում բուժել յանը, ԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՒԺԵԼ ՅԱՆԸ, բուժել յանը ին հիվանդությունների դեպքում, ին հիվանդությունը բուժել յանի տեսանկյունից, ին հիվանդության դեպքում բուժել յանը |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ին հիվանդության դեպքում բուժել յանը, ին հիվանդությունների դեպքում բուժել յանը, ին հիվանդությունը բուժելու համար զբաղվել յանով, ին հիվանդությունը բուժել յանի տեսանկյունից, բնույթով ին հիվանդու- |

| | |
|---|---|
| | թյունների դեպքում բուժել յանը, ին հիվանդությունը բուժվում է յանի միջոցով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | ին հիվանդությունների բուժում յանի տեսանկյունից |

Մեջբերումներ 引例.

Հստակ տարբերակելով, թե արդյո՞ք հիվանդությունն ընկած է ինի թե յանի հիմքում, կարելի է որոշել, թե ինչ բանաձև կիրառել: Այսինքն՝ ին հիվանդությունը դիտարկել յանի տեսանկյունից, և հակառակը *(«Պարզ զրույց»):*

Ինի հարաբերական գերակշռումը բխում է յան ցիի թուլացումից: Այն բուժելու համար պետք է լրացնել յան ցին երիկամի յանը ջերմացնելու և լրացնելու միջոցով *(Բժշկության ներքին կանոնի հիմունքներ):*

### Յան հիվանդությունների բուժում ինի տեսանկյունից յանբին ժիյին 阳病治阴

Եզրույթը նշանակում է, որ ավելցուկային յանը զսպելու համար կարելի է հարստացնել ին հեղուկներն անբավարար ջերմության մոդելի բուժման դեպքում, որը պայմանավորված է յանի հարաբերական գերակշռությամբ: Այս երևույթը հայտնի է նաև «ին հեղուկների հարստացում՝ ջերմությունը վերացնելու համար» կամ «ուժեղացնել ջրի (ին) աղբյուրը՝ հիպերակտիվ յանը սահմանափակելու համար» անվանմամբ («Պարզ զրույց Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում», ծանոթագրությունը՝ Ուան Բինի): Ինն ու յանը զսպում են իրար: Երբ ինը չափազանց քիչ է, որ սահմանափակի յանը, յանը կդառնա համեմատաբար գերակշռող, և կարող են ի հայտ գալ անբավարարության զանազան ջերմային դրսևորումներ: Հետևաբար, յանի հարաբերական գե-

բակշռումը բուժելու համար հարկ է կենտրոնանալ անբավարար կողմի վրա, իսկ ինը լրացնել:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | յան հիվանդության դեպքում բուժել ինը, յան հիվանդությունների ժամանակ բուժել ինը, յան հիվանդության բուժում ինի տեսանկյունից, յան հիվանդության համար բուժել ինը |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | յան հիվանդության դեպքում բուժել ինը, յան հիվանդության համար բուժել ինը, յան հիվանդությունը բուժել ինի տեսանկյունից, բնույթով յան հիվանդությունները բուժել ինի տեսանկյունից, յան հիվանդությունը բուժել ինի միջոցով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | յան հիվանդությունները բուժել ինի տեսանկյունից |

Մեջբերումներ 引例.

Յանի հարաբերական գերակշռումը բխում է ինի հեղուկների վնասվածքից: Դրա բուժման համար ինի հեղուկները պետք է լրացնել՝ սնուցելով ինի աղբյուրը *(«Բժշկության ներքին կանոնի հիմունքներ»):*

Յանի գերակշռումն անկասկած հանգեցնում է ինի անբավարարության և հակառակը: Թերապևտիկ մեթոդների մասին կան մի շարք ասացվածքներ. «Ջերմության մոդելները բուժեք սառը դեղամիջոցներով՝ ջերմությունից ազատվելու համար: Եթե ջերմությունը չի իջնում, կիրառեք ինը սնուցող դեղամիջոցներ: Սառը մոդելները բուժեք տաք դեղամիջոցներով՝ ցուրտը ցրելու համար: Եթե մրսածությունը չի թեթևանում, բուժեք յանը լրացնող դեղամիջոցներով: Ամրապնդեք ջրի աղբյուրը՝ հիպերակտիվ յանը սահմանափակելու համար: Լրացրեք կրակի աղբյուրը՝ ավելորդ ինը ցրելու համար»: Այս մեթոդները հետևում են յան հիվանդություն-

ներն ինի տեսանկյունից և ին հիվանդությունները յանի տեսանկյունից բուժելու սկզբունքին *(«Նախնական բժշկական ցուցումներ»):*

**Ինից յան ստանալ**
**ին ժոն ցիու յան 阴中求阳**

Եզրույթը վերաբերում է յանի թուլացումը բուժելու ընթացքում յանը խթանող բանաձևին ինը հարստացնող դեղամիջոցներ ավելացնելուն: Քանի որ ինն ու յանը փոխադարձաբար կախյալ ու կապակցված են, բանաձև կազմելիս կարելի է հրաշալի օգտագործել այս հարաբերությունը յան ցիի հյուծումը բուժելու, ավելի լավ թերապևտիկ ազդեցության հասնելու համար՝ հիմնականում օգտագործելով յանն աշխուժացնող դեղամիջոցներ, ավելացնելով ինը սնուցող մի քանի դեղամիջոց և այդպիսով թեթևացնելով յան ցիի ստեղծման ու ձևափոխման գործընթացը: Այս դեպքում տեղին է Յոու Գուի դեղահաբը *(Վերականգնող դեղահաբ):*

［曾经译法］ *հին թարգմանություն* բուժել յանը ինի մեջ

［现行译法］ *նոր թարգմանություն* ինից յան ստանալ, բուժել ինը յանի համար, յանի համար բուժել ինը

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* յանը ստանալ ինից

Մեջբերումներ 引例.

Բժիշկները, որոնք տիրապետում են յանը թարմացնող մեթոդներին, մշտապես ստանում են յանը ինից՝ յանի շարունակական առաջացումն ապահովելով ինի ավելաց-

մամբ: Ճիշտ նույն կերպ, նրանք, ովքեր հրաշալի տիրապետում են ինը հարստացնող մեթոդներին, յանից ին են ստանում՝ յանի օգնությամբ ինի առատ քանակ ապահովելու համար *(«Ջինյուեի երկերի լիակատար ժողովածու»):*

Ինից յան ստանալու և յանից ին ստանալու սկզբունքների հիմնավորումը փոխկախյալ է և փոխկապակցված *(«Հանգավորված զրույց դեղամիջոցների մասին»):*

### Յանից ին ստանալ
### յան ժոն ցիու ին 阳中求阴

Եզրույթը վերաբերում է ինի թուլացումը բուժելու ընթացքում ինը հարստացնող բանաձևին յանն աշխուժացնող դեղամիջոցներ ավելացնելուն: Քանի որ ինն ու յանը փոխկախյալ և փոխկապակցված են, ավելի լավ թերապևտիկ ազդեցության հասնելու նպատակով ինի էության թուլացումը բուժելիս հրաշալի կլիներ օգտվել այս հարաբերությունից. հիմնականում օգտագործել ինը սնուցող դեղամիջոցներ և ավելացնել յանն աշխուժացնող միջոցներ՝ ինի ստեղծումն ու փոխակերպումը խթանելու համար: Այստեղ տեղին է Զուո Հույ դեղահաբը *(Ձախը վերականգնող դեղահաբ):*

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | յանից ին ստանալ, յանի մեջ բուժել ինը |
| [现行译法] *նոր թարգմանություն* | յանից ին ստանալ, ինի դեպքում բուժել յանը, ինի ժամանակ բուժել յանը |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | յանից ին ստանալ |

Մեջբերումներ 引例.

Բժիշկները, ովքեր հրաշալի տիրապետում են ինը հարստացնելու մեթոդներին, յանից ին են ստանում՝ յանի օգնությամբ առատ ին ապահովելու համար *(«Չինյունի երկերի լիակատար ժողովածու»)։*

Հետևաբար, Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնն ասում է, որ յանն աշխուժացնող մեթոդներին լավ տիրապետող բժիշկն ինից յան կստանա, իսկ ինը հարստացնող մեթոդներին լավ տիրապետող բժիշկը յանից ին կստանա *(«Բժշկական սկզբունքների փոխանցում»)։*

### Զսպել ուժեղը և աջակցել թույլին
### իցիան ֆուրուո 抑强扶弱

Եզրույթը վերաբերում է հիմնական թերապևտիկ սկզբունքին, որը մշակվել է հինգ տարրերի զսպող ցիկլի համաձայն։ Չնայած ոչ բնականոն զսպող հարաբերությունները կարող են տարբերվել ձևով (ավելցուկային, ոչ ադեկվատ և փոխադարձաբար միմյանց սահմանափակող). պատճառները երկուսն են՝ ուժեղ և թույլ։ Երբ տարրը չափազանց ուժեղ է, այն դրսևորում է հիպերֆունկցիայի նշաններ։ Եվ հակառակը, հիպերֆունկցիա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդը չափազանց շատ է թուլանում։ Հետևաբար, բուժման ընթացքում ուժեղին արգելակելու և թույլին աջակցելու սկզբունքը պետք է իրականացվի միաժամանակ՝ շեշտելով այն, որ ուժեղին արգելակում են, որպեսզի օգնեն թույլին վերադառնալ բնականոն վիճակի, կամ թույլին աջակցում են, որպեսզի այն խուսափի հետագա սահմանափակումից և սրումից։ Մի կողմից, ուժեղն արգելակելու սկզբունքը կիրառելի է չափազանց շատ զսպման կամ փոխզսպման դեպքում։ Օրինակ, լյարդի (փայտ) ավելցու-

կային ցին չափազանց շատ է սահմանափակում փայծաղն ու ստամոքսը (հող)՝ հանգեցնելով լյարդ-փայծաղ կամ լյարդ-ստամոքս աններդաշնակության, որը նկարագրվում է որպես ավելցուկային փայտի (լյարդ) կողմից հողի (փայծաղ) գերզսպում և պետք է բուժվի հիմնականում լյարդի ցին հանդարտեցնելու և խաղաղեցնելու միջոցով: Մյուս կողմից, թույլին աջակցելու սկզբունքը կիրառվում է գերզսպման կամ փոխզսպման համար, որը պայմանավորված է սահմանափակման անբավարարությամբ, ինչպես, օրինակ, երբ լյարդի (փայտ) ցին ներթափանցում է փայծաղ (հող), ինչը հանգեցնում է լյարդ-փայծաղ աններդաշնակության և նկարագրվում որպես հողի (փայծաղ) անբավարարություն, ինչը հանգեցնում է փայտ (լյարդ) գերզսպման և պետք է բուժվի հիմնականում փայծաղի ցին ամրապնդելու միջոցով:

| | |
|---|---|
| ［曾经译法］<br>*հին թարգմանություն* | / |
| ［现行译法］<br>*նոր թարգմանություն* | արգելակել ուժեղը և աջակցել թույլին, արգելակել ավելցուկը (抑强)，աջակցել թուլությանը (扶弱) |
| ［标准译法］<br>*ստանդարտ թարգմանություն* | արգելակել ուժեղը և աջակցել թույլին |

Մեջբերումներ 引例.

Հինգ կլիմայական ցիերը կարող են տարբերվել ուժգնությամբ, իսկ զան-ֆու օրգանները՝ մեղմությամբ: Հետևաբար, բուժման ընթացքում ուժեղը պետք է արգելակել, իսկ թույլին՝ աջակցել, որպեսզի հնարավոր լինի կարգավորել ցին ու հասնել հավասարակշռության *(«Բժշկական կանոնների պարբական ուսուցում»):*

Բացի այդ, յանմինի և շաոյանի միջօրեականները, ինչպես նաև հինգ զան-օրգանները պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրվեն գերկշռության և թուլացման տեսանկյունից: Ուժեղն արգելակելով և թույլին աջակցելով՝ կարելի է հասնել ցիի ներդաշնակ վիճակի *(«Ցրտահարության վնասների մասին քննախոսության» մեկնաբանությունների ժողովածու):*

**Զսպել փայտը՝ աջակցելով հողին**
**իմու ֆութու** 抑木扶土

Եզրույթը վերաբերում է թերապևտիկ մեթոդին, երբ անհրաժեշտ է բուժել լյարդ-փայծաղ աններդաշնակությունը կամ լյարդի ցիի ներթափանցումը ստամոքս՝ լյարդը հանգստացնելով ու փայծաղն ամրապնդելով, կամ լյարդի ցին հանդարտեցնելով և ստամոքսը ներդաշնակության բերելով: Այս մեթոդն անվանում են նաև լյարդի հանգստացում և փայծաղի ամրապնդում, լյարդի ցիի հանդարտեցում և ստամոքսի ներդաշնակեցում, լյարդի ու փայծաղի կարգավորում կամ լյարդի ու ստամոքսի ներդաշնակեցում: Ըստ հինգ տարրերի և զան-ֆու օրգանների համաձայնության՝ լյարդը պատկանում է փայտին, փայծաղն ու ստամոքսը՝ հողին: Հետևաբար, եզրույթը վերաբերում է հիպերակտիվ լյարդի ցին ճնշելուն, որի արդյունքում կամրապնդվի անբավարար փայծաղ-ստամոքս ցին: Կլինիկական տեսանկյունից, մեթոդը կիրառվում է լյարդ-փայծաղ կամ լյարդ-ստամոքս աններդաշնակությունը բուժելու համար, որը պայմանավորված է նրանով, որ հիպերակտիվ լյարդի (փայտ) ցին չափազանց շատ է զսպում փայծաղն ու ստամոքսը (հող), կամ լճացած լյարդի (փայտ) ցին չի կարողանում կարգավորել փայծաղի ու ստամոքսի (հող) հոսքը: Կիրառելի բանաձևերն են՝ Սիաոյաո փոշին (ազատ թափառականի փոշին) և Թունսիա Յաոֆանը (դեղամիջոց ցավոտ փորլուծության համար):

［曾经译法］ / *հին թարգմանություն*

［现行译法］ / *նոր թարգմանություն*

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* արգելակել փայտը՝ հողին աջակցելու համար

Մեջբերումներ 引例.

Եթե լյարդի (փայտ) ցին հիպերակտիվ է, այն չափազանց շատ կսահմանափակի փայծաղի (հող) ցին... Սիաո Չիանժուն եփուկը (կենտրոնն ամրապնդող եփուկ) հիմնված է փայտն արգելակելու և հողին աջակցելու սկզբունքի վրա *(«Քննախոսություն բժշկական բանաջևերի մասին»):*

Փայծաղի ցիի խանգարման դեպքում լյարդի փայտն ինչպե՞ս կարող է սահմանափակել լյարդի հողը: Հետևաբար, այս խանգարման շտապ վերացման ամենահարմար մեթոդն է արգելակել փայտը և աջակցել հողին *(«Բժշկական պատմությունների ժողովածու բժիշկ Սուից. չորս սերունդ»):*

**Օգնել մետաղին՝ փայտը ճնշելու ցուռջին փինմու** 佐金平木

Եզրույթը, որը նաև անվանում են «լյարդի և թոքի կրակի մաքրում», վերաբերում է հիպերակտիվ լյարդի (փայտ) ճնշման թերապևտիկ մեթոդին, որը կատարվում է թոքի (մետաղ) ցին ներքև ուղղորդելով: Ըստ հինգ տարրերի և զան-ֆու օրգանների համապատասխանության օրենքի՝ թոքը պատկանում է մետաղին, իսկ լյարդը՝ փայտին:

Փայտը ճնշելու համար մետաղին աջակցելը ենթադրում է օգնել, որ թոքի ցին իջնի ու թեթևացնի լյարդի ցիի ավելցուկը: Կլինիկական տեսանկյունից, այս մեթոդը կիրառվում է հիպերակտիվ լյարդի կրակը բուժելու համար, որն ազդում է թոքի մաքրող գործառույթի վրա: Վերջինս դրսևորվում է կողի տակ թափառող ցավով, հևոցով, լարանման սրտազարկով և այլն: Թոքի ցին ներքև ուղղորդելու և լյարդի ցին հանգստացնելու համար հաճախ օգտագործվում են հետևյալ դեղամիջոցները՝ Վուժույու (Fructus Evodiae, էվոդիայի պտուղ), չոր տապակած սանբայփի (Cortex Mori, սպիտակ թթի արմատ), սուզեն (Caulis Perillae, պերիլլայի ցողուն) և պիպայե (Folium Eriobotryae, էրիոբոտրիայի տերև):

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | աջակցել մետաղին (թոք)՝ փայտը (լյարդ) հանգստացնելով, ՀԱՆԳՍՏԱՑՆԵԼ ՓԱՅՏԸ՝ ՄԵՏԱՂԸ ՄԱՔՐԵԼՈՎ, աջակցել մետաղին՝ փայտը ճնշելով, բուժել մետաղը՝ փայտը ճնշելով |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | բուժել թոքը (մետաղ)՝ լյարդի (փայտ) հիպերակտիվությունը ճնշելով, աջակցել մետաղին՝ փայտը ճնշելով, աջակցել թոքին՝ լյարդը ճնշելով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | աջակցել մետաղին՝ փայտը ճնշելու համար |

Մեջբերումներ 引例.

Զուո Ջին դեղահաբը (մետաղի դեղահաբ) ունի մետաղին աջակցելու և փայտը ճնշելու գործառույթ: Մասնավորապես, բանաձևն օգտագործվում է լյարդի կրակը մաքրելու և խոնավությունը չորացնելու համար: Բնույթով տաք դեղամիջոցների օգնությամբ այն բուժում է ծայրահեղ ջերմային պատկերը *(«Բժշկության վեց հիմունքներ»):*

Ջիանժուն եփուկով (կենտրոնն ամրապնդող եփուկ) բուժման մոդել… կրկնապատկել շաոյայի չափաբաժինը (Radix Paeoniae Alba seu Rubra, սպիտակ կամ կարմիր քաջվարդի արմատ)՝ կրակը մաքրելու և զգռվածությունը հանելու համար, օգտագործել շենձիան (Rhizoma Zingiberis Recens, թարմ կոճապղպեղ)՝ փայտը ճնշելու և մետաղն ամրապնդելու համար *(«Քննախուզություն ցրտահարության վերաբերյալ», լրամշակված ժողովածու»):*

Երբ շաոյան ցին գերիշխող է, լյարդի (փայտ) ցին հակված է ներքուստ գերիշխող լինել, ուստի թոքի մետաղին աջակցելու և լյարդի փայտը ճնշելու համար հարկ է ավելացնել զիուան (Radix et Rhizoma Asteris, աստրայի արմատ) *(«Բժշկական սպեղծագործություններ Շիքուի վնից»):*

### Մաքրել հարավն ու սնել հյուսիսը սիենան բուբեյ 泻南补北

Եզրույթը վերաբերում է թերապևտիկ մեթոդին, որը բուժում է սիրտ-երիկամ աններդաշնակությունը՝ կրճատելով սրտի կրակն ու լրացնելով երիկամի ջուրը: Այն նաև կոչվում է «մաքրել կրակն ու հարստացնել ջուրը», «հարստացնել ինն ու կրճատել կրակը» կամ «վերականգնել սրտի ու երիկամի համակարգումը»: Ըստ հինգ տարրերի և զան-ֆու օրգանների համապատասխանության սկզբունքի՝ սիրտը համապատասխանում է կրակին, որը պատկանում է հարավին, իսկ երիկամը համապատասխանում է ջրին, որը պատկանում է հյուսիսին, այստեղից էլ ի հայտ է եկել «մաքրել հարավն ու սնել հյուսիսը» եզրույթը: Կլինիկական տեսանկյունից այս մեթոդը կիրառելի է սիրտ-երիկամ (կրակ-ջուր) աններդաշնակության դեպքում, որը պայմանավորված է անբավարար երիկամի ինով և ճառագայթող սրտի կրակով: Կրակը մարող դեղամիջոցները, որոնք սովորաբար դառն են, սառն ու չոր, հակված են վնասել հեղուկները. միայնակ

կիրառվելու դեպքում դրանք կհանգեցնեն հեղուկների ավելի լուրջ վնասման: Ինը հարստացնող դեղամիջոցները, որոնք հիմնականում դառն են ու սառը, եթե օգտագործվում են առանձին, չեն կարող կանխել կրակի դեպի վեր ընթացքը: Հետևաբար, միայն կրակը մարող և ինը սնուցող մեթոդների համադրությամբ կարելի է հասնել կրակը զսպելու և ջուր արտադրելու ազդեցության: Հուանլիան Էջիաո եփուկը (Կոպտիսի և ավանակի կաշվի եփուկ) համարվում է կիրառելի բանաձև:

［曾经译法］ *հին թարգմանություն* — զտել հարավն ու աշխուժացնել հյուսիսը

［现行译法］ *նոր թարգմանություն* — կրճատել հարավը՝ միևնույն ժամանակ ամրապնդելով հյուսիսը, մաքրել հարավն ու սնել հյուսիսը, մաքրել սրտի կրակն ու սնուցել երիկամի ջուրը

［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* — զտել հարավն ու սնել հյուսիսը

Մեջբերումներ 引例.

Սև ու չոր լեզուն վկայում է հեղուկների հյուծման և հիվանդի օրգանիզմում վառվող ներքին կրակի մասին: Հնարավորինս արագ պետք է որդեգրել հարավը մաքրելու և հյուսիսը սնելու մեթոդը *(«Արտաքին ջերմային հիվանդությունների բուժում»):*

Ինը հարստացնել և կրակը մարել կամ հարավը զտել և հյուսիսը սնել. այս հարցում ժիմուն (Rhizoma Anemarrhenae, սովորական անեմարենայի արմատ) լավագույն միջոցն է *(«Մատերիա մեդիկայի խուքերի գանձարան»):*

Անհապաղ հարստացրեք իհի աղբյուրը՝ մաքրելով հարավը (կրակ) և սնուցելով հյուսիսը (ջուր)՝ լյարդի ցին հանդարտեցնելու համար, որպեսզի պտղի ցին հանգստանա *(«Խոր գիտելիքներ գինեկոլոգիայի ոլորտում»):*

**Կուտակել հողը՝ ջուրը զսպելու համար փեյթու ժիշույ 培土制水**

Եզրույթը վերաբերում է թերապևտիկ մեթոդին, որը բուժում է ջրի ներքին կուտակումն ու խոնավությունը՝ ջերմացնելով փայծաղի յանը կամ ջերմացնում է երիկամը՝ ամրապնդելով փայծաղը: Այն հայտնի է որպես ջուրը հեռացնելու համար հողը կարգավորելու, ջուրը քամելու համար փայծաղի յանն ամրապնդելու կամ խոնավությունը ցրելու համար փայծաղի յանն ամրապնդելու մեթոդ: Ըստ հինգ տարրերի և զան-ֆու օրգանների միջև համապատասխանության՝ հողը վերաբերում է փայծաղին: «Ջուր» բառն այս եզրույթի մեջ վերաբերում է ախտածին ջրին կամ խոնավությանը: Կլինիկական տեսանկյունից, այս մեթոդը կիրառելի է զանազան խանգարումների դեպքում, որոնք դրսևորվում են այտուցվածության, փքվածության և լցվածության զգացողության տեսքով, առաջանում են ջրի չափազանց շատ հոսքի կամ խոնավության արդյունքում՝ պայմանավորված նրանով, որ անբավարար փայծաղի յանը չի կարողանում բնականոն ճանապարհով փոխադրել ու ձևափոխել ջուրը: Կիրառելի բանաձևերն են Շիփի խմիչքը (փայծաղն ամրապնդող Շիփի խմիչք) և Ֆանջի Հուանցի եփուկը (ստեֆանիայի արմատ և աստրագալուսի եփուկ):

［曾经译法］ *հին թարգմանություն* կուտակել հողը (培土), ուժեղացնել հողը՝ ջուրը վերահսկելու համար

| | |
|---|---|
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | աշխուժացնել փայծաղը (հող)՝ ջուրը սահմանափակելու համար, կուտակել հողը (培土), կուտակել հողը՝ ջուրը վերահսկելու համար, լրացնել փայծաղը՝ լեղապարկը վերահսկելով |
| ［标准译法］ *ստանդարտ թարգմանություն* | կուտակել հողը՝ ջուրը զսպելու համար |

Մեջբերումներ 引例.

Օգտագործեք գուիժի եփուկ (դարչնի ճյուղի եփուկ)՝ առանց գուիժիի (Ramulus Cinnamomi, դարչնի ճյուղ), բայց ավելացրեք ֆուլինգ (Poria, պորիա) և բայժու (Rhizoma Atractylodis Macrocephalae, սպիտակ ատրակտիլոդիսի կոճղարմատ)… գանկաոյի (Radix et Rhizoma Glycyrrhizae, մատուտակի արմատ) և դացաոյի (Fructus Jujubae, չինական արմավ) համադրությունը՝ հողը կուտակելու և ջուրը զսպելու համար *(«Ցրտահարության վնասների վերաբերյալ քննախոսության» լրամշակված ժողովածու):*

Ֆուլինգ Գուիժի Գանկաո Դազաո եփուկի մեջ (Պորիա, դարչնի ճյուղ, մատուտակի արմատ և չինական արմավի եփուկ)… գուիժին (Ramulus Cinnamomi, դարչնի ճյուղ) ամրապնդում է սրտի ցին, ֆուլինգը (Poria, պորիա) դուրս է բերում ախտածին երիկամի ցին (ջուր), իսկ գանցան (Radix et Rhizoma Glycyrrhizae, մատուտակի արմատ) և դազաոն (Fructus Jujubae, չինական արմավ) համատեղ աշխատում են՝ հողը կուտակելու և ջուրը զսպելու համար *(«Փնտրելով ցրտահարության վնասների խորքային պատճառները»):*

Ծենջիանը (Rhizoma Zingiberis Recens, թարմ կոճապղպեղ) ցրում է յան ցին, իսկ բայժուն (Rhizoma Atractylodis Macrocephalae, սպիտակ ատրակտիլոդիսի կոճղարմատ)

կուտակում է հողը՝ զսպելով ջուրը *(«Մոդելների և բուժումների լրամշակված հավաքածու՝ թվագրված Ժան Ժունջինի «Ցրտահարության վնասների մասին քննախուզության» ժամանակներում»):*

**Աշխուժացնել մայր-օրգանը և կրճատել զավակ-օրգանը բումու սիեցի 补母泻子**

Եզրույթը վերաբերում է նախնական թերապևտիկ սկզբունքին, որը զարգացել է հինգ տարրերի ցիկլի համապատասխան: Ըստ հինգ տարրերի միջև փոխադարձ առաջացման սկզբունքի՝ հինգ զան-օրգանների միջև գոյություն ունի մայր-զավակ հարաբերություն: «Առաջացնելու, ծնելու» տարրը կոչվում է մայր-օրգան, իսկ «ծնվելու, առաջանալու» տարրը՝ զավակ-օրգան: Մայր-օրգանն աշխուժացնելը ենթադրում է, որ երբ զան-օրգանն անբավարար է, բացի ինքնին օրգանը լրացնելուց, մայր-օրգանը կարելի է նույնպես ուժեղացնել՝ այդպիսով նպաստելով բուժմանը: Օրինակ, լյարդ-արյուն անբավարարության դեպքում, ի լրումն լյարդի արյունը (փայտ, զավակ-օրգան) սնելու, կարելի է նաև լրացնել երիկամի (ջուր, մայր-օրգան) բնահյութը՝ այդպիսով խթանելով լյարդի արյան առաջացումը: Մյուս կողմից, զավակ-օրգանի կրճատումը ենթադրում է, որ երբ զան-օրգանն առատ է, բացի ինքնին օրգանի հետ կապված ավելցուկային ախտածին գործոնները ցրելուց, զավակ-օրգանը նույնպես կարելի է կրճատել՝ ավելի լավ ազդեցության հասնելու համար: Օրինակ, չափազանց շատ լյարդի կրակի դեպքում, ի լրումն լյարդի (փայտ, մայր-օրգան) կրակը մարելու, կարելի է նաև մաքրել սրտի (կրակ, զավակ-օրգան) կրակը՝ հիպերակտիվ լյարդի կրակը հեռացնելու համար:

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | Մոր մարմնամասի աշխուժացման և զավակի մարմնամասի կրճատման համադրություն (补母泻子法) |

| | |
|---|---|
| [现行译法] *նոր թարգմանություն* | մայր-օրգանն աշխուժացնող, զավակ-օրգանը զսպող մեթոդ (补母泻子法) |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | աշխուժացնել մայր-օրգանն ու զսպել զավակ-օրգանը |

Մեջբերումներ 引例.

Զավակ-օրգանի անբավարարության մոդելը բուժելու համար կարելի է աշխուժացնել դրա մայր-օրգանը: Մայր-օրգանի ավելցուկը բուժելու համար կարելի է կրճատել զավակ-օրգանը *(«Բարդ դեպքերի կանոն»):*

Ստամոքսն էներգիայի միջին աղբյուրում է և մարմնի հեղուկները բաշխում է մյուս բոլոր օրգաններին: Հետևաբար, թոքի ջերմությունը կրճատելու համար ստամոքսի աշխուժացումը հետևում է մայր-օրգանն աշխուժացնելու և զավակ-օրգանը զսպելու օրենքին *(«Հնագույն բանաչներ բուսրագույն ջյան այգուց»):*

Մայր-օրգանն աշխուժացնելու և զավակ-օրգանը կրճատելու թերապևտիկ մեթոդը, որ օգտագործում էին մարդիկ հնում, հավանաբար բխել է դրանից: Օրինակ, եթե հիվանդն ի սկզբանե թոք-ցի անբավարարություն ունի, իսկ հետո նրա վրա ազդում է ախտածին ցիի ավելցուկը, ինչպես, օրինակ, քամի-ջերմությունը կամ խորխային հարբուխը, պետք է աշխուժացնել փայծաղն ու ցրել ախտածին ցին թոքում, այլ ոչ թե միաժամանակ ամրապնդել ու կրճատել թոքը *(«Պապահական նոթեր բժշկության մասին ընթերցումներում»):*

**Կուտակել հողը՝ մետաղ ստեղծելու համար**
**փեյթու շենջին 培土生金**

Եզրույթը վերաբերում է թոքի ցին սնուցելու թերապևտիկ մեթոդին՝ փայծաղի ցին աշխուժացնելու միջոցով, որը նաև հայտնի է՝ որպես փայծաղի ցին աշխուժացնելու միջոցով թոքի ցին լրացնելու մեթոդ: Ըստ հինգ տարրերի և զան-ֆու օրգանների միջև համապատասխանության՝ փայծաղը համապատասխանում է հողին, իսկ թոքը՝ մետաղին: Մայր-զավակ հարաբերությունների պատճառով, հողի (մայր, փայծաղ) կուտակումը կարող է օգնել վերականգնել մետաղի (զավակ, թոք) գործառույթները: Կլինիկական տեսանկյունից, այս մեթոդն օգտագործվում է՝ թոք-ցի անբավարարությունը բուժելու համար, որը պայմանավորված է փայծաղ-ցի անբավարարությամբ, կամ թոք-ցի նախնական անբավարարության հետևանքով թոքի և փայծաղի ցի անբավարարությունը բուժելու համար: Կիրառելի բանաձևը Շեն Լին Բայժու փոշին է *(Բժշկական բանաձևերի քննախուսություն):*

| | |
|---|---|
| ［曾经译法］ *հին թարգմանություն* | կուտակել հողը՝ մետաղ ստեղծելու համար (ուժեղացնել փայծաղը՝ թոքին օգնելու համար). ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ՓԱՅԾԱՂԸ՝ ԹՈՔԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, կուտակել «հողը»՝ «մետաղը» լրացնելու համար, հավաքել հողը՝ մետաղ առաջացնելու համար, ուժեղացնել թոքը (մետաղ) փայծաղը (հող) ամրապնդելու միջոցով |
| ［现行译法］ *նոր թարգմանություն* | ամրապնդել փայծաղը (հող)՝ թոքը (մետաղ) ուժեղացնելու համար, հող կուտակել՝ մետաղին օգնելու համար, հող կուտակել՝ մետաղ բերելու համար, լրացնել փայծաղը՝ թոքն ուժեղացնելու նպատակով, կուտակել հողը (փայծաղ)՝ մետաղ (թոք) ստեղծելու համար |

［标准译法］ կուտակել հողը՝ մետաղ առաջացնելու համար
*ստանդարտ թարգմանություն*

Մեջբերումներ 引例.

Ոմանք առաջարկում են հարստացնել ջուրը՝ մաքրելով մետաղը: Մյուսները խորհուրդ են տալիս կուտակել հողը՝ մետաղ ստեղծելով: Բոլորն էլ կարծում են, թե բուժում են հիվանդության արմատը: Սակայն մեթոդներից և ոչ մեկը հարմար չէ, որովհետև խանգարումը վկայում է ոչ թե անբավարարության, այլ ավելցուկային մոդելի մասին *(«Բժշկական ըմբռնում»):*

Հետո օգտագործեք քաղցր և զով դեղամիջոցներ, որպեսզի կուտակեք հողն ու մետաղ ստեղծեք: Այսպես մի ամսից ուժեղ և առողջ վիճակը կվերականգնվի *(«Հիվանդությունների պարմության ժողովածու»):*

**Հարստացնել ջուրը՝ փայտը խոնավեցնելու համար ցիշույ հանմու 滋水涵木**

Եզրույթը վերաբերում է երիկամի ինը հարստացնելու միջոցով լյարդի ինը հարստացնելու թերապևտիկ միջոցին, որը նաև հայտնի է՝ որպես երիկամը լրացնելու միջոցով լյարդը սնելու մեթոդ կամ թե՛ լյարդը, թե՛ երիկամը հարստացնելու և աշխուժացնելու մեթոդ: Ըստ հինգ տարրերի և զանֆու օրգանների միջև համապատասխանության՝ երիկամը համապատասխանում է ջրին, լյարդը՝ փայտին: Քանի որ ջուրը փայտ է արտադրում, երիկամի ու լյարդի միջև մայրզավակ հարաբերություն կա: Երբ երիկամի ինի անբավարարությունն ազդում է լյարդի վրա ու հանգեցնում թե՛ լյարդի, թե՛ երիկամի ինի անբավարարության, այն նկարագրվում է որպես գործընթաց, երբ երիկամի ջուրը չի կարողանում

խոնավեցնել լյարդի փայտը: Այն բուժելու համար հարկ է լրացնել երիկամի ինը՝ սնելու համար լյարդի ինը, որպեսզի ճնշենք լյարդի կրակն ու հիպերակտիվ լյարդի յանը: Կլինիկական տեսանկյունից այս մեթոդը կիրառելի է լյարդի զանազան խանգարումներ բուժելու համար, որոնք բխում են երիկամ-ին անբավարարությունից, օրինակ, լյարդ-ին անբավարարությունը կամ նույնիսկ լյարդի կրակի գերհագեցածությունը և լյարդի հիպերակտիվությունը: Կիրառելի բանաձևերն են Դա Բույին հաբը (Anemarrhena, Phellodendron, և Rehmannia դեղահաբ) և Ցի Ջու Դիհուան դեղահաբ (լիցիումի հատապտուղ, քրիզանթեմի և ռեհմանիայի դեղահաբ):

| | |
|---|---|
| [曾经译法] *հին թարգմանություն* | ջուր ապահովել փայտի աճի համար, ջուրը հարստացնել՝ փայտը սնելու համար, ջուրը հարստացնել՝ փայտը սնելու համար, լրացնել երիկամի ինը՝ լյարդը սնելու համար |
| [现行译法] *նոր թարգմանություն* | փայտի համար ջուր ապահովել, սնել լյարդն ու երիկամը, հարստացնել ջուրը՝ փայտը սնուցելու համար, հարստացնել ջուրը՝ փայտը խոնավեցնելու համար, հարստացնել ջուրը՝ փայտը խոնավեցնելու համար |
| [标准译法] *ստանդարտ թարգմանություն* | հարստացնել ջուրը՝ փայտը խոնավեցնելու համար |

Մեջբերումներ 引例.

Փայտը խոնավեցնելու նպատակով ջուրը հարստացնելու թերապևտիկ մեթոդը կիրառվում է քամին մարելու նպատակով լյարդի յանը հանդարտեցնելու համար: Բանաձևը կազմված է ինճացառյից (Radix et Rhizoma Glycyrrhizae Praeparata cum Melle, մատատուկի արմատի պատրաստուկ), դանշենից (Radix Codonopsis, կոդոնոպսիսի արմատ),

